

# Դեմոկրատիան կանհետանա – Քահանաներին կսպանեն

Ստացված հինգշաբթի 3 մարտի 2011թ, ժ 23.30

Ոհ, սիրելի աղջիկս, ուրախությամբ եմ Ես այսօր հրավիրում քո ուշադրությունն այս երեկո: Քո բացակայությունը Ինձ ինչ-որ ձևով ցավ է պատճառել, բայց Ես գիտեի, որ դու շուտով կշրջվես դեպի Ինձ

Խնդրում եմ լսիր ուշադրությամբ: Ես գիտեմ, որ դու զբաղված ես քո կյանքով, բայց դու պետք է հասկանաս այս պատգամի չափազանց հրատապությունը: Իմ խոսքը տրվում է քեզ ամենապատմական դարաշրջանում ժամանակների սկզբի ի վեր գոյություն ունեցած: Քանի որ այս ժամանակ աշխարհն ակնատես կլինի փոփոխությունների, որպիսիք մարդությունը դեռևս չի տեսել:

Պատրաստվեք հիմա, զավակներս, աշխարհի որ մասում էլ որ լինեք: Քանի որ շատ շուտով ամենաթանկարժեք ընծաներից մեկը, Իմ գրթասրտությունից ելնելով, կտրվի ձեզանից յուրաքանչյուրին. Իմ Նախագգուշացումը, որը տրվում է ձեզ, ապաշխարություն կտարածի ամենուր: Երբ դա տեղի ունենա, այն պահից հետո, երբ երկիրը լուռ կմնա, Մերը՝ ճշմարտությունն ընդունելու միջոցով, կտարածվի ամենուր:

Սատանայի հետևորդների համար դժվար կլինի պաշտպանել իրենց չար վարքը այն սիրո և լույսի առջև, որը կփայլի ձեր միջից: Բայց չնայած այդ մեծ իրադարձությունը, որը կվախեցնի ձեզ, կբերի շատ դարձեր, դուք պետք է նախապատրաստվեք դրան

Ընդունեք, որ այս մարգարեությունը տեղի կունենա: Շատ քչեր կմերժեն այն այդ ընթացքում և դրանից հետո: Սակայն շատերը դարձյալ կշարունակեն շրջվել Ինձնից: Դրան կհետևի Մեծ Հավածանքը:

## **Քահանաները կտառապեն**

Իմ սիրելի հետևորդների բանակը քաջությամբ կկանգնի և կպաշտպանի Իմ գոյությունը: Սակայն նույնիսկ նրանք, ում դուք ամենաքիչն եք ակնկալում, ներառյալ Իմ քրիստոնեական եկեղոց առաջնորդները, կկանգնեն Չարի և նրա պարագիտների կողքին: Նրանց կլռեցնեն իրենց թույլ հավատի հետևանքով: Դուք կտեսնեք, որ Իմ սուրբ երեցները, Իմ հավատարիմ սրբազան սպասավորները, ստիպված կլինեն պաշտպանել իրենց հավատը: Նրանց

հանդեպ ցեյց տրվող դաժանությունը նման կլինի նրան, որին Ես դիմակայեցի Իմ Խաչելության ժամանակ: Ուշադիր եղեք սրա հանդեպ, դուք բոլորդ, ովքեր հետևում եք Ինձ: Չգայթակղվեք հետևել դավաճանների ճանապարհին, նույնիսկ եթե ձեզ վախեցնեն: Երբեք չընկնեք նրանց կեղծ խոստումներից: Քաջ եղեք: Աղոթեք ուժ ունենալու համար:

### **Հալածանքը երկար չի տևի**

Գոտեպնդվեք, հավատացողներ, քանի որ նույնիսկ ձեր ամենամոտիկները երես կըրջեն հավատից: Դուք ձեզ կզգաք մեկուսացված, ծաղրված և հրապարակայնորեն ծաղրի ենթարկված: Արհամարհեք նրանց խայթոցները: Ես կառաջնորդեմ և կպաշտպանեմ ձեզ բոլորիդ: Որովհետև այդ ժամանակը երկար չի տևի: Ամենացավագին տառապանքը, որ կզաք, կլինի նրանց անհավատարմությունն Իմ հանդեպ: Ճշմարտության համդեպ:

### **Ոչ քրիստոնյա ազգերը կվերահսկեն**

Աղոթքը կարող է օգնել նվազեցնելու համար որոշ կտատաստրոֆիկ իրադարձություններ, որոնք տեղի կունենան: Այն հալածանքը, որը կկատարավի նրանց դեմ, ովքեր հավատում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը, կլինի այն ազգերի կողմից, որոնք դատարկ են Սիրուց: Աստծո հանդեպ սիրուց: Նրանց սրտում եղած միակ սերը ավելի քիչ հարուստ երկրների հանդեպ ունեցած իշխանության սերն է: Նրանց գլխավոր նպատակը վերահսկումն է, փառքը, հարստության հանդեպ ձգտումն ու սեփականատիրություն հաստատելը ձեզ վրա, ձեր երկրի վրա և նրանց վրա, ովքեր կմերժեն Ինձ ուրանալ: Տեղի տվեք, զավակներս, և ձեզ համար չափազանց դժվար կլինի ետ քայլել կամ նորից դեպի Ինձ ուղղել ձեր քայլերը: Հսկայական արիություն կպահանջվի հզոր ընդդիմության դեմ կանգնելու համար: Բայց կհաղթեք դուք: Եթե տառապեք Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր հանդեպ ձեր սրտերում ունեցած սիրուց ելնելով, ապա դուք դա կընդունեք ուրախությամբ ձեր հոգիների մեջ:

### **Նոր դիկտատորների բարձրացումը**

Գլոբալ իրավիճաններում հանկարծակի փոփոխությունները, որոնք մինչ այժմ թվում էին փոքր չափի անհանգստություններ, այժմ դուրս կելնեն որպես համատարած պատերազմներ: Պատերազմների հետևանքով կպակասի սնունդը: Դեմոկրատիան արագորեն կոչնչանա, և չար դիկտատորներ կբարձրանան: Մակայն այդ դիկտատուրաները զգույշ կլինեն, թե ինչպես իրենց կկրնկալեն: Նրանք կգան որպես խաղաղարար բանակցություններ վարողներ և <<փրկիչներ>>: Ձեր բերանները կերակրելու դիմաց նրանք կվերահսկեն ձեր

ունեցվածքը, որը կդառնա նրանցը: Դուք ստիպված կլինեք թույլտվություն ստանալ ձեր ընտանիքներին կերակրելու համար: Ճամփորդելու համար ձեզ պետք կլինի ինքնության հաստատման հատուկ ձև, և ձեզնից կխնդրեն ընդունել Նշանը, Գազանի Նշանը: Փախեք զավակներս: Թաքնվեք: Քանի որ դա ամբողջը չէ: Նրանք կպարտադրեն, թե ինչպես աղոթեք, որովհետև Աստծուն չէ, որ նրանք դիմում են: Դրանք, զավակներս, Մատանայի բանակներն են, և ցանկանում են գողանալ ձեր հոգիները:

Նրանք, ովքեր հավատում են Ինձ, պատրաստ եղեք: Անմիջապես ետ գնացեք ձեր եկեղեցիները: Աղոթեք Աստծուն՝ Հավիտենական Հորը: Հավաքվեք խմբերով և աղոթեք, աղոթեք, աղոթեք: Հաշտություն խնդրեք հիմա, որպեսզի, երբ ականատես լինեք Նախագգուշացմանը, խոնարհությամբ ընդունեք ձեր հոգիների վիճակը: Դուք կարիք չունեք ոչ մի բանից վախենալու:

Աղոթեք նաև ձեր ընտանիքի և ընկերների ի համար: Ձեր երեխաների համար: Ձեր հարևանների համար: Նրանք բոլորը պետք է նախապատրաստվեն: Այնքան շատերն այդ ժամանակ դարձի կգան, երբ ականատես կլինեն Իմ գոյության ճշմարտությանը: Այնքան շատերն ի վիճակի չեն լինի դիմանալ շակին, երբ տեսնեն, թե ինչպես են վիրավորել Ինձ: Մյուսները պարզապես հոգ չեն տանի: Ժամերը անցնում են հիմա:

### **Խնդրեք Ինձ որ օգնեմ ձեզ**

Նշանները, որոնք բոլորն էլ կանխասացվել են, ձեր շուրջն են, զավակներս: Տեսեք դրանք և ընդունեք դրանք այնպես, ինչպես կան: Ամբոխի վերելքներ, երկրաշարժեր, Ջրհեղեղներ, կլիմայի փոփոխություններ: Դրանք այժմ կավելանան: Փողը հիմա քչանում է, կքչանա նաև սնունդը: Մի կարծեք, թե ամեն ինչ կորած է, քանի որ եթե դուք Ինձնից օգնություն խնդրեք, ձեր աղոթքներին պատասխան կտրվի: Ես կբռնեմ ձեր բոլորի ձեռքից և կօգնեմ ձեզ այս իրադրացման մեջ: Բայց դուք պետք է բացեք ձեր սրտերը: Փակեք ձեզ հմայելու ցանկացած փորձ, որ կարվի Չարի գործողություններին միանալու համար: Պահպանեք սրտի և մտքի մաքրություն: Խոնարհ եղեք ձեր տեսակետների մեջ: Բայց երբեք մի վախեցեք պաշտպանել Ինձ հավատալու ձեր իրավունքը:

### **Ձեր հոգիները նախապատրաստելու ժամանակը**

Ժամանակը եկել է: Գնացեք հիմա զավակներս և նախապատրաստեք ձեր հոգիները: Սուրբ խորհուրդների միջոցով փնտրեք այն շնորհները, որոնք անհրաժեշտ են ձեր հոգիները սրբագործելու համար: Հետո խնդրեք Ինձ, որ վերցնեմ ձեզ Իմ բազուկների մեջ և փրկություն խնդրեք: Իմ սերը և

կարեկցանքը ձեզանից ամեն մեկիդ և յուրաքանչյուրիդ հանդեպ ձեր հասկացությունից վեր է: Բայց երբ Նախագգուշացումը, այն ամենամեծ ընծաներից մեկը, որը Ես կարող եմ տալ ձեզ բոլորիդ, նախքան վերջնական դատաստանը, նույնիսկ եթե տեղի ունենա, այն պետք է ողջունվի ձեր կողմից: Շնորհակալ եղեք, որ ձեզ տրվում է այս հրաշալի ընծան, որովհետև երբ դարձը տեղի ունենա աշխարհի յուրաքանչյուր անկյունում, այդ ժամանակ դուք ճշմարտապես պատրաստ կլնեք այն նոր Երկնքի և Երկրի համար, որն այդ ժամանակ կմիանա որպես մեկ՝ Իմ դրախտը և այն փառահեղ ժառանգությունը, որ ձեզանից յուրաքանչյուրն իրավասու է ստանալ, եթե ընտրի:

Սպասեք Իմ Նախագգուշացմանը հիմա, զավակներս: Քանի որ այժմ ժամանակը շատ մոտ է:

Փեր սիրող Փրկիչ Արդար Դատավոր և Գթառատ Հիսուս Քրիստոս

## **Բոլոր քրիստոնյաներ, ապաշխարեք հիմա, կաթոլիկներ՝ աղոթեք Բենեդիկտ Պապի համար**

### **Շաբաթ 5 մարտի 2011թ. առավոտյան 8 at 10**

Իմ սիրելի աղջիկ, մենք միացած ենք մեկ անգամ ևս: Դու զբաղված էիր այս վերջին մի քանի օրերին: Դու նկատե՞լ ես ուժը, որը Ես տալիս եմ քեզ, թե մտքի և թե մարմնի: Դա այն պատճառով է, որ քո աշխատանքն այնքան հաճելի է Ինձ: Մինչ շարունակում ես հրատարակել այս պատգամները, խնդրում եմ խրախուսիր որքան հնարավոր է շատ մարդկանց, որոնց ճանաչում ես, որ հիմա արագորեն հաշտություն փնտրեն իրենց մեղքերի համար: Նշանակություն չունի, թե նրանք ինչ քրիստոնեական հավատի են պատկանում: Նրանք պետք է ցույց տան իրենց խոնարհությունն ու հավատարմությունն Իմ հանդեպ ազատագրում փնտրելու գործողության միջոցով:

Այս պարզ գործողությունը նրանց ավելի ուժեղ կդարձնի այն իրադարձության ժամանակ, որը Ես անվանում եմ Նախագգուշացում: Ապաշխարեք բոլորդ, որ փրկեք ձեր հոգիները: Նախապատրաստվեք Նախագգուշացմանը անմիջապես, քանի որ ձեզանից նրանք, ովքեր շնորհի վիճակում չեն, դրան չեն դիմանա:

Իմ սիրելի աղջիկ, Ես ցանկանում եմ, որ դու շարունակես արագորեն շարժվել, տարածելու այս պատգամների խոսքը: Ես քեզ նախկինում բացատրել եմ, որ դրանք պետք է տրվեն որքան հնարավոր է շատ մարդկանց, հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Մինչ այս իրադարձությունը կախված է (աշխարհի վրա), նմանապես մի իրադարձություն է սպառնում Սուրբ Վատիկանին:

Խնդրիր բոլորին, որ աղոթեն Իմ սիրելի Սուրբ Երեց Բենեդիկտ Պապի համար, քանի որ նա շրջապատված է Իմ Հավիտենական Հոր թշնամիներով: Աղոթիր այն քահանաների համար, ովքեր երբեք չեն սասանվել Իմ կամ Իմ Հավիտենական Հոր հանդեպ ունեցած իրենց հավատի մեջ:

### **Կեղծ մարգարեի բարձրանալը**

Նրանք պետք է հիմա ջանասիրաբար աղոթեն, քանի որ Իմ Սուրբ Երեցի վրա այս հարձակման հետևանքին դուք բոլորդ ականատես կլինեք: Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որպեսզի Կեղծ մարգարեն ճանաչվի որպես այն, ինչ է: Ուշադիր եղեք նրա պահվածքի հանդեպ: Նրա ուշադրություն հրավիրող օրակարգի հանդեպ: Նրա վրա, թե ինչպես Իմ սխալ ուղով գնացող սուրբ սպասավորները երկկյուղով կընկնեն նրա ոտքերի առջև: Հետո ուշադրությամբ լսեք, թե նա ինչ ունի ասելու: Նրա խոնարհությունը կեղծ կլինի: Նրա նպատակները՝ չար, իսկ նրանից դուրս եկեղ սերը կլինի ամբողջովին իր մասին: Նա կերևա որպես նորարար, շարժուն՝ թարմ օդի մի շունչ: Մինչ նա եռանդուն է և լի էներգիայով, նրա գործությունը Աստծուց՝ Հավիտենական Հորից չի գալիս: Այն գալիս է Սատանայից՝ Չարից:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք: Քանի որ դուք, զավակներս, պետք է զգոն լինեք: Դուք հիմա Իմ կարիքն ունեք, որ ձեզ առաջնորդեմ, մինչ այս մարգարեությունները բացահայտվում են մարդկությանը: Ուժեղ եղեք, հավատարիմ Իմ ուսուցումներին: Աղոթեք խմբերով: Աղոթեք **Սուրբ Վարդապանը**, որ պաշտպանություն փնտրեք Չարից:

Հիշեք մի դաս: Իմ ուսուցումները երբեք չեն փոխվում: Նրանք նույնն են, ինչ միշտ եղել են: Ինչպես ասել եմ նախկինում, երբ կտեսնեք որ դրանք (ուսուցումները) կեղծվում են, ցածրացվում, կամ, ինչպես կլինի այս դեպքում, աղավաղվում այնպես, որ տարօրինակ թվա կամ չհամապատասխանի Իմ ուսուցումներին, շրջվեք և աղոթեք Ինձ առաջնորդության համար:

Ձեր Աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոս

# Հանգստացնող խոսքեր նրանց, ովքեր հարցականի տակ են դնում այս պատգամները

Ստացված կիրակի 6 մարտի 2011թ, ցերեկվա ժ 3

Աղջիկս, ուժեղ մնա: Դու չպետք տանջես քեզ՝ կարդալով այն մեկնաբանություններն ինտերնետում, որոնք ապացուցում են այն ատելությունը, որն Իմ գավակներց շատ ու շատերն ունեն Իմ հանդեպ: Ինձ մերժելը չսկսվեց և չավարտվեց Իմ խաչելությամբ: Այն շարունակվում է այսօր որպես Սատանայի կողմից Իմ գավակների միջոցով տարածված ատելության ուղղակի արդյունք: Դու կտառապես հանուն Իմ անվան, ինչպես նաև Իմ սիրելի հետևորդները, ովքեր համարձակվում են պաշտպանել Ինձ: Սա, Իմ սիրելի աղջիկ, նոր չէ: Պարզապես քեզ համար ցնցող է դրան ականատես լինելը:

Նույնիսկ Իմ այն հետևորդները, ովքեր հայտարարում են, թե հավատում են Ինձ, նրանց համար դժվար կլինիմարսել այս պատգամները: Ժամանակի ընթացքում, երբ ապացույցը բացահայտվի, բոլոր նրանք, ովքեր հայտարարում են, թե ատում են Ինձ, կվերագնահատեն իրենց տեսակետները: Ոմանք կլացեն, երբ ճշմարտության քաղցրությունը ցույց տրվի իրենց: Ուրիշները կշարունակեն քննել ու քննել, որովհետև սխալ կերպով կփորձեն հանգել իրենց եզրակացությանը մարդկային մտածողության միջոցով:

Գնա հիմա, աղոթիր բոլոր նրանց համար, ովքեր հարցականի տակ են դնում այս պատգամները: Դա միայն ճիշտ է, որ նրանք անում են, որովհետև նրանք, ովքեր գալիս են Իմ անունից, պետք է ընդունեն, որ իրենց մարտահրավեր կնետեն, և արդարև այդպես է: Ուստի դրա համար բոլոր պատգամներին պետք ուշադրությամբ հետևել:

Գնա հիմա խաղաղությամբ և սիրով: Եվ հիշիր. Ես սիրում եմ Իմ բոլոր գավակներին, ներառյալ նրանց, ովքեր հայտարարում են, թե ատում են Ինձ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Ողջ մարդկության Դատաավոր

**Մարդը պատժվում է մաքրագործման այս տարում**

Ուրբաթ 11 մարտի 2011թ, ցերեկվա ժ 3.30

Իմ սիրելի աղջիկ, մաքրագործունը, որից մարդկությունը կտառապի պատերազմների, երկրաշարժների, հրաբխային ժայթքումների, ցունամիների, ջերմային ալիքների և ճահճային սահքերի հետևանքով, շարունակվում է՝ մարդկության մեղքերի պատճառով:

Միայն նրանք, ովքեր շրջվում են դեպի Ինձ՝ իրենց Աստվածային Փրկիչը և դեպի իրենց Արարիչը՝ Իմ Հայրը՝ իրենց Հայրը, միայն նրանք կարող են փրկվել: Երբեք վախով մի նայիր Իմ Հորը, քանի որ Նա սիրում է Իր բոլոր զավակներին: Սակայն Նա պատիժ կտա նրանց, ովքեր մերժում են Նրա գոյությունը: Նրա համբերությունը հիմա, մինչ չարիքը, հավատի պակասը, և մարդու կույր սերն ինքն իր հանդեպ շարունակվում է, սպառվում է:

Իմ Հավիտենական Հայրը՝ Աստված՝ ստեղծողն ու արարիչը ամեն բանի, սիրում է իր բոլոր զավակներին մի այնպիսի քնքշությամբ, որը ծնողներն են զգում իրենց զավակների հանդեպ: Բայց ճիշտ ինչպես ծնողներն են վարվում, պատասխատվություն ունեցող ծնողները, և պատժում են իրենց երեխաներին, եթե նրանք կատարում են գործողություններ, որոնք ագրեսիվ են կամ անընդունելի: Նույնպես հիմա Իմ Հոր զայրույթը կթափվի աշխարհում այս ժամանակ: Սա, աղջիկս, ինչպես Ես ասել եմ քեզ, Մաքրագործման տարին է:

Ամենուրեք մարդիկ կհասկանան, որ այս երևույթները բնական չեն: Նրանք առաջանում են աստվածային միջամտությամբ, որպեսզի ստիպեն մարդուն հասկանալ, վերջապես, Սուր Գրքերի ճշմարտությունը:

Աղոթեք, աղոթեք դարձի համար:

Ձեր սիրող Հիսուս Քրիստոս

**Երկրաշարժ Եվրոպայում և համաշխարհային  
պատերազմ**

Ուրբաթ 18 մարտի 2011թ, կեսգիշեր

Իմ սիրելի աղջիկ, մեծ սիրով եմ այսօր Ես գալիս հաղորդակցվելու քեզ հե այս երեկո: Քանի որ գիտեմ թե ինչպես ես տառապում: Տառապանքը, որը հիմա դու առաջընկերի հոգիների համար, նշանակում է, որ նրանք կմատնվեն դատապարտության, եթե դու ուրախությամբ այդպես չվարվեիր:

Աղջիկս, այս պատգամները վավերական են, բայց դու պետք է հաղորդակցվաես Ինձ հետ միայն աղոթքի ընթացքում կամ աղոթքից հետո: Սա կարևոր է, որոքեհետև Խաբեբան երբեմն կարող է փորձի միջամտել, եթե դու Ինձ ուղղված հանդարտ աղոթքի մեջ չես:

### **Համաշխարհային պատերազմ**

Աղջիկս, մարգարեությունները, որոնց մասին Ես խոսեցի, պատրաստ են կատարվելու: Իմ սիրելի Երեցին շատ ժամանակ չի մնացել Վատիկանում մնալու համար, այն դեպքերի հետևանքով, որոնք տեղի ունեցան մարտին: Հիմա մարդկությունն ականատես կլինի այլ իրադարձությունների, ներառյալ՝ երկրաշարժ եվրոպայում, որը շատերին կցնցի: Բայց այդ մաքրագործումը կօգնի մարդկանց միավորվել, որը կլինի բոլորի բարօրության համար: Այլ գլոբալ իրադարձություններ, ներառյալ հրաբխի ժայթքումը, տեղի կունենան հիմա (\*տեղի և ամսաթվի մանրամասները տեսանողուհու մոտ են), իսկ պատերազմը միջին արևելքում կներգրավի այլ ազգերի: Արևմուտքի մյուս ազգերը կդրդեն Ռուսաստանի և Չինաստանի հակազդեցությունը: Ամեն ինչ կավարտվի համաշխարհային պատերազմով:

### **Աղոթքը կնվազեցնի այս իրադարձությունների խստությունը**

Միևնույն ժամանակ, Նախագգուշացումը տեղի կունենա շուտով: Սա կառաջացնի դարձ: Դարձը, աղոթքի միջոցով, կնվազեցնի այդ երևույթների մասշտաբն ու խստությունը:

### **Տառապանքը կբերի խոնարհություն – խոնարհությունը կփրկի հոգիներ**

Աղջիկս, մինչ աշխարհը շարունակում է զգալ այս անհանգստություն պատճառող իրադարձությունները, նրանք ովքեր կտառապեն, կխոնարհեցվեն: Խոնարհության միջոցով նրանք կարող են փրկվել Այս ամենն անհրաժեշտ է, աշխարհին Իմ Երկրորդ Գալուստին նախապատրաստելու համար: Այդ ժամանակը հեռու չէ: այն , աղջիկս, հավատացողների համար կլինի մեծ փառքի օր: Պահեք այդ օրը ձեր մտքի առջև, քանի որ հանուն Ինձ ձեր կրած բոլոր նախկին տառապանքները կմոռացվեն այդ ժամանակ:

Հայտնության Գրքում կանխասացված բոլոր մարգարեությունները հիմա կներկայանան աշխարհում: Նրանք, ովքեր հասկանում ես այս իրադարձությունների կարևորությունը, խնդրում եմ, խնդրում եմ, բացատրեք



մյուսներին իրենց հոգիները մաքրելու համար Աստծուց ներողություն խնդրելու անհրաժեշտության կարևորությունը:

### **Կասկածել իմ պատգամներին**

Աղջիկս, միշտ, միշտ լսիր Իմ պատգամները քո սրտով: Դու գիտես, որ նրանք գալիս են Ինձնից՝ քո Աստվածայն Փրկչից, չնայած ուրիշները կարող են երբեմն քեզ համոզեն, որ դա այդպես չէ: Սա Ինձ այնքան է վիրավորում: Ես հասկանում եմ, որ քո սեփական կասկածներից շատերն արմատավառված են այն մտահոգության մեջ, որ չես ցանկանում մոլորեցնել մարդկանց: Հիմա դու պետք է վերջապես հեռացնես այդ բոլոր մտքերը:

### **Հանձնիր քո կամքը Ինձ**

Դու, աղջիկս, ավելի ուժեղ կլինես, եթե քեզ տրվի անհրաժեշտ հոգևոր աջակցություն քահանայի կողմից: Տխուր է, բայց նրանցից ոչ մեկը չի վերցնի Իմ գավաթն ինչպես հարկն է, մի փաստ, որն Ինձ համար խորապես վիրավորական է: Ուստի դու հիմա պետք է վստահես Ինձ ամբողջապես: Ինձ հանձնիր քո կամքը վերջնականապես, և ամեն ինչ ավելի պարզ կթվա: Աղոթիր Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը, ինչպես նախկինում ասել եմ քեզ, ամեն օր, ինչպես նաև **Սուրբ Վարդարանը: Հաճախիր** նաև պաշտամունքի եկեղեցում առնվազն շաբաթը մեկ անգամ: Քո կողմից Ինձ տրվող այդ բոլոր փոքրիկ ընծաները քեզ ավելի կմոտեցնեն Ինձ: Որքան դու ավելի մոտ լինես, այնքան ավելի հեշտ և պարզ կլինեն քո առաջադրանքները:

### **Պաշտպանիր այս պատգամները**

Հարգիր այդ Ամենասուրբ Գրվածքը: Պաշտպանիր այն: Ընդունիր, նրա վրա կհարձակվեն և կպատառոտեն հատկապես նրանք, ովքեր իրենց համարում են փորձագետներ, նրանք կփնտրեն հատվածներ, որոնք իրենց ասելով հակասում են Իմ ուսուցումներին: Այստեղ է, որ նրանք շրջել և սխալ են մեկնաբանել Իմ ԱմենասուրբԽոսքը, որովհետև իրենց հարմար է այդպես անել:

### **Շնորհի վիճակի մեջ մնալու կարևորությունը**

Աղջիկս, Ես Սրտանց կարոտում եմ քեզ և քո մտերիմ հաղորդակցությունն Ինձ հետ: Խնդրիր Ինձ այն շնորհները, որոնք քեզ ուժեղ կպահեն, և դրանք կտրվեն քեզ: Ես պլաններ ունեմ քեզ համար, աղջիկս: Նրանք շատ կարևոր են: Ահա թե ինչու էական է, որ քո հոգին մաքրագործվի և դու միշտ մնաս Շնորհի վիճակի մեջ: Մինչ քո վերջնական փոխակերպունը դեպի հոգևոր կատարելություն տեղի ունենա, դու աղջիկս, կտառապես: Բայց Ես կնախապատրաստեմ քեզ դրա ահամար: Ուրիշների կարծիքը չպետք է մտահոգի քեզ: Նրանք, ովքեր լույսի մեջ չեն անհանգստացնում են քեզ, անտեսիր նրանց: Մակայն աղոթիր նրանց համար: Այնուամենայնիվ զգուշացիր, որ նրանք կարող են քեզ այնքան

հեռու նետել Ինձնից, առանց քո կողմից դա հասկացվելու, որ այն ժամանակ, երբ հասականաս, դու քո սիրտը փակած կլինես Իմ հանդեպ:

Սուրբ Ավգուստինը և սուրբ Բենեդիկտը երկուսն էլ աշխատում են քեզ հետ: Կանչիր նրանց օգնության և դու ամեն ինչ ավելի հեշտ կտանես: Իմ աշխատանքը կատարելը, Իմ կողմից պահանջվող առադրանքները կատարելը դժվար է: Ճանապարհին կատարված յուրաքանչյուր քայլի կփորձեն քեզ գցել ծուղակը: Ջայրույթ, արգելում և վիաճաբանություններ կհայտնվեն քո շուրջը և անմիջապես: Այդ ամենը նախատեսված է քո կամքը թուլացնելու համար, եթե դու այդ թույլ տաս:

Այժմ դու պետք է օրհնես քո տունը և միշտ քեզ հետ ունենաս Վարդաբանի հատիկներ, Բենեդիկտյան խաչ, ինպես նաև Սուրբ Ջուր: Քաջ եղիր հիմա: Ամբողջապես Ինձ վստահիր: Վերջապես թուլացիր: Առաջարկիր Ինձ քո ազատ կամքը հիմա, և Ես կհեղեմ քեզ վրա այն բոլոր շնորհները, որոնք անհրաժեշտ են կատարյալ կերպով կատարելու Իմ աշխատանքը:

Ես սիրում եմ քեզ, Իմ ընտրյալ աղջիկ: Ես կշարունակեմ քեզ ավելի ուժեղ դարձնել, քան հիմա ես: Ես կառաջնորդեմ քեզ: Որպեսզի այն ճշմարտապես արդյունավետ լինի, դու պետք է հանձնվես Ինձ Մարմնով, Մտքով և հոգով: Բայց այդ առաջարկը պետք է գա քեզնից, և առաջարկվի որպես մի թանկարժեք ընծա քո կողմից: Ես չեմ կարող դրանք պարզապես վերցնել քեզնից, քանի որ քո ազատ կամքը իմ յուրահատուկ ընծա է Աստծո՝ Իմ հավիտենական Հոր կողմից տրված:

Գնա հիմա, աղջիկս, աղաղությամբ: Ինձ հանձնիր քո մտահոգություններն ու անհանգստությունները: Ազատիր քո միտքը, մարմինն ու հոգին: Հետո, երբ դու հանձնես քո ազատ կամքը, դու վերջապես կլինես Ինձ հետ միության մեջ: Ինձ տրված այդ ընծան կապահովի, որ Իմ Խոսքը լսվի ավելի արդյունավետ կերպով ողջ աշխարհում:

Ձեր սիրող Փրկիչ մարդկության Հիսուս Քրիստոս Արդար Դատավոր

**Աղորեք նրանց համար, ովքեր ձեզ ցավ են պատճառում**

Երկուշաբթի 21 մարտի 2011թ երեկոյան Ժ 11

Այս երեկո, Իմ սիրելի աղջիկ, դու զգում ես այնպիսի խաղաղություն, որը երկար ժամանակ չես զգացել: Դու, աղջիկս, տանջվել ես Խաբեբայի կողմից, իսկ հիմա, Իմ հեղած շնորհների միջոցով այլևս չես զգում այդպիսի հարձակումների ազդեցությունը:

Ես ուղարկել եմ քեզ մի մաքուր հոգի՝ լի սիրով, որ օգնի առաաջնորդել քեզ: Նա կբռնի քո ձեռքը և կառաջնորդի քեզ դեպի Ինձ և ճշմարտությունը: Դու, Իմ սիրելի աղջիկ, հիմա հասկանում ես, թե ինչի է նման տառապելը հանուն Ինձ: Դու գիտես, թե ինչ է նշանակում հրապարակայնորեն ծաղրի ենթարկվել, ծաղրվել մեջքիդ ետևում, մեղադրվել սխալ արարքների համար, որոնցում դու մեղավոր չես: Եվ այդ ամենն Իմ անվան համար: Ուրախացիր աղջիկս, քանի որ սա նշանակում է, որ հիմա քո միությունն Ինձ հետ ավելի շատ է: Աղոթքը, ինչպես դու հիմա վերջապես հասկանում ես, կպահի քեզ շնորհի և խաղաղության վիճակում:

Աղջիկս, մի դատիր նրանց, ովքեր քեզ ցավ են պատճառում: Աղոթիր նրանց համար: Ներիր նրանց: Բայց դու արդեն արել ես դա, այնպես չէ՞: Հիմա դու հասկանում ես Իմ ուսուցումների ճշմարտությունը Ես քեզ ավելի ու ավելի ուժեղ կդարձնեմ, աղջիկս: Երբեք չվախենաս: Ինչպես Ես նախկինում ասել եմ քեզ, Խաբեբան երբեք չի գողանա քո հոգին: Ես քեզ մոտ եմ պահում Իմ բազուկների մեջ, և եթե հանկարծ շեղվես, Ես միշտ քեզ ետ կբերեմ դեպի Ինձ:

Դու հիմա պետք է ուժ և զորություն ստանաս, հաղորդելու համար Իմ Աստվածային պատգամները մարդկությանը: Նրանք հրատապ են: Դու գիտես, թե ինչ պետք է անել: Կանչիր Ինձ քո սրտի մեջ օրվա յուրաքանչյուր րոպե: Ես սիրում եմ քեզ, Իմ խիզախ թանկագին աղջիկ: Ես հպրտանում եմ քեզնով, որ հանդարտորեն պաշտպանեցիր ճշմարտությունը և չմերժեցիր այս սրբազան պատգամները: Քանի որ հիմա դու գիտես ճշմարտությունը:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## Աղոթքի նշանակությունը և ուժը

**Հինգշաբթի 24 մարտի 2011թ երեկոյան Ժ11**

Իմ սիրելի աղջիկ, մեծ ուրախությամբ է, որ Ես վերամիանում եմ քեզ այս երեկո: Հիմա դու լցված եմ զանազանելու շնորհով և շատ պարզ ես տեսնում այն ճիշտ ուղին, որին պետք է հետևես:

Վերջապես հանձնվելով Ինձ հետ միության մեջ, դու հիմա ազատ ես: Ազատ կասկածներից, մաքուր գիտակցությամբ, ավելի ուժեղ, քան նախկինում և պատրաստ բացահայտելու աշխարհին Իմ խոստումը: Իմ խոսքը կհաղորդի այն հրատապությունը, որն անհրաժեշտ է նախապատրաստվելու համար, որ բացեք ձեր սրտերն այն պահին, երբ բոլորին ցույց կտրվեն իրենց մեղքերը:

Նախապատրաստված և տեղեկացված լինելու միջոցով շատ ու շատ ավելի հոգիներ կարող են փրկվել: Որքան դարձը շատ լինի, անքան ավելի թույլ կլինի դրան հետևող հալածանքը: Աղջիկս, երբեք ինքնագոհ չլինես: Ոչ էլ պետք է վախենաս ապագա իրադարձություններից: Ամեն ինչ կանցնի և, դրա տեղում, կլինի մի ավելի երջանիկ աշխարհ ամենուր ավելի մեծ սիրով:

### **Պատգամներ՝ պարգապես բոլորին հիշեցնելու Աստծո գոյությունը**

Ասա Իմ ժողովրդին ամենուրեք որ այս պատգամները պարգապես Աստծո բոլոր զավակներին հիշեցնելու համար են, որ Նա գոյություն ունի: Նրանք պետք է նաև հասկանան, որ իրենց հոգիները իրենց մարդկային կառուցվածքի ամենակարևոր մասն են: Իրենց հոգիներին հետևելը կենսական է, եթե պատրաստվում են կիսել այն հրաշալի ապագան, որը բոլորին սպասում է: Մարդիկ պարգապես պետք է հիշեցնեն իրենց **Տասը Խատվիրանները** և պատվեն դրանք: Դրանից հետո նրանց պետք է միայն հետևել Իմ ուսուցումներին և ապրել իրենց կյանքն այնպես, ինչպես Ես եմ նրանց ասել:

Պատճառը, որ Ես մարգարեություններ եմ տալիս, այն է, որ ապացուցեմ Իմ սիրելի հետևորդներին, որ աստվածային միջամտություն է կատարվում: Այս անելոց Ես հույս ունեմ, որ նրանք կբացեն իրենց սրտերը, որ թույլ տան ճշմարտությունը ներս մտնի:

### **Աստվածային Սերը բերում է խաղաղություն**

Շատերն են շուրթերով ծառայում Իմ ուսուցումներին: Մյուսների կարծիքով դրանք ձանձրալի են և հոգնեցուցիչ: Նրանք վախենում են, որ կրկնօրինակվելով Ինձ, իրենք բաց կթողնեն այն հարմարավետությունները, որոնք, իրենց կարծիքով, նյութական իրերն են բերում իրենց կյանքի մեջ: Նրանք չեն կարողանում հասկանալ, որ միակ իսկական հարմարավետությունը, որը կարող են զգալ՝ Աստվածային Սերն է: Այս սերը կարող է ներս մտնել ձեր կյանքի մեջ պարզ աղոթքի միջոցով Ինձ և Իմ Հավիտենական Հորն ավելի մոտենալով: Հենց որ զգաք այդ խաղաղությունը, դուք ձեզ ազատ կզգաք անհանգստություններից և սթրեսներից:

Կեղծ խթանիչների ոչ մի քանակություն չի կարող համապատասխանել այն էջֆորիային, որը գալիս է, երբ դուք մոտենում եք Իմ Սրտին: Այս սերը ոչ միան խոցում է ձեր ողջ մարմինը, միտքը և հոգին, այն հնարավորություն է տալիս

ձեզ ապրել ավելի ազատ կյանքով: Դուք կզգաք մինչ այդ ձեզ անծանոթ խորը բավարարվածություն: Հետո կզարմանաք, թե արդեն որքան քիչ է գրավում նյութական ճոխության աշխարհը: Դուք կկորցնեք հետաքրքրությունը դրանց հանդեպ, և դա կզարմացնի ձեզ:

Ոհ, զավակներս, եթե միայն փորձեք մոտիկ գալ Ինձ, դուք վերջանականապես ազատ կդառնաք: Այլևս չեք զգա դատարկ հուսահատություն ձեր հոգում: Դրա փոխարեն դուք կլինեք ավելի հանդարտ, ավելի քիչ կշտապեք, ավելի շատ ժամանակ կունենաք այլոց հանդեպ հետաքրքրություն ցույց տալու համար, և խաղաղ կզգաք: Դա կճառագայթի ձեզանից: Մյուսները բնականաբար կձգվեն դեպի ձեզ: Դուք կզարմանաք, թե ինչու: Մի վախեցեք, քանի որ դա Աստծո շնորհն է գործի դրված: Երբ լցված եք շնորհով, այն վարակալիչ է, և հետո այն տարածվում է դեպի մյուսները սիրո միջոցով: Հետո շրջանը շարունակվում է:

Ուստի զավակներս, խնդրում եմ հիշեք աղոթքի կանոնությունը, այն ուժը, որը գալիս է նրանից և արագությունը, որով այն ճամփորդում է՝ պարուրելու համար այն բոլոր բախտավոր հոգիներին, ովքեր ձգվում են սիրո այդ ամպի մեջ:

### **Սատանայի խաբեության ցանցը վախ է պատճառում**

Ճիշտ ինչպես աղոթքն ու սերը միմյանց հանդեպ անմիջապես տարածվում են, նույնպես տարածվում է ատելությունը, որը դուրս է ժայթքում Սատանայի կողմից: Խաբեբան, աշխաասատելով այնմարդկանց միջոցով, ովքեր հավատ չունեն կամ խարխափում են խավար հոգևոր խաղերի մեջ, տարածում է Իր խաբեությունը: Նրա ատուլության ցանցի մեջ են ընկնում նույնիսկ նրանք, ովքեր ամենահեռուն են նրանից և կարծում են, թե ապրում են լավ կյանքով: Այս նուրբ ցանցը կարող է բռնել յուրաքանչյուրին, ով զգույշ չէ: Միակ ընդհանուր բնորոշիչը բոլոր նրանց համար, ովքեր ընկնում են այդ ցանցի մեջ, անհանգստության, հուզմունքի, հուսահատության և վախի զգացողությունն է: Այդ վախն արագորեն դառնում է ատելություն:

Վազեք դեպի Ինձ դուք բոլորդ: Մի սպասեք մինչև ձեր կյանքը շրջվի գլխիվայր իգուր վշտի հետևանքով: Քանի որ Ես միշտ այստեղ եմ՝ դիտելիս, սպասելիս, հոսալով, որ ձեզանից յուրաքանչյուրը թույլ կտա որ իր հպատությունն ընկնի, որպեսզի Ես կարողանամ ներս մտնել և գրկել ձեզ: Գնացեք ձեր եկեղեցին և աղոթեք Ինձ: Խոսեք Ինձ հետ տանը, աշխատանքի գնալու ճանապարհին, որտեղ էլ որ գտնվեք, պարզապես կանչեք Ինձ: Դուք բավականի արագորեն կիմանաք, թե Ես ինչպես եմ պատասխանում:

### **Արթնացեք – բացեք ձեր փակ սրտերը**

Արթնացեք, զավակներս: Մի թե մինչև այժմ չեք հասկացել, որ դուք Իմ կարիքն

ունեք: Դուք վերջապես ե՞րբ կբացեք ձեր փակ սրտերը և Ինձ ներս կթողնեք:  
Անտեղի մի վատնեք արժեքավոր ժամանակը, հանուն ձեզ և ձեր  
ընտանիքների: Ես Մեր եմ: Դուք սիրո կարիք ունեք, որ հագեցնեք ձեր  
ջրազրկված փերսնուցված հոգիները: Իմ սերը, երբ դուք զգաք այն, վեր  
կբարձրացնի ձեր հոգին և թույլ կտա ձեզ նորից իրական սեր զգալ: Այդ սերն  
այդ ժամանակ կբացի ձեր միտքը ճշմարտության հանդեպ – այն խոստումների,  
որոնք Ես ժամանակին տվեցի ձեզանից յուրաքանչյուրի համար, երբ մեռա ձեր  
մեղքերի համար խաչի վրա: Ես սիրում եմ ձեզ, զավակներս: Խնդրում եմ ցույց  
տվեք Ինձ այն սերը, որն աղերսում եմ ձեզնից: Մի մնացեք կորած Ինձ համար:  
Քիչ ժամանակ կա, զավակներս, դեպի Ինձ վերադառնալու համար: Մի  
ուշացրեք:

Ձր սիրող Փրկիչ  
Հիսուս Քրիստոս

## **Հիմա Իմ Հավիտենական Հորը ձեռքը կիջնի այս անշնորհակալ կույր աշխարհի վրա**

**Պատգամ ստացված երկուշաբթի 4 ապրիլի, 2011թ**

Ժ.19.00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը հիմա քո կողմից չէ: Հրիր, հրիր այս  
պատգամներն առաջ որքան կարող ես: Նախազգուշացման ժամանակը  
չափազանց մոտ է: Ասա Իմ հետևորդներին, Իմ հանդեպ իրենց ունեցած  
հավատից ելնելով, օգնեն դարձի բերել չհավատացողներին՝  
Նախազգուշացմանը նախապատրաստելու համար:

Աղջիկս, եթե շարունակես հարցականի տակ դնել այս պատգամները, դու  
թանկարժեք ժամանակ կկորցնես: Ժամանակ չկա Իմ սիրելի հոգիների համար,  
ովքեր ազատագրում են խնդրում: Մեղքը, աղջիկս, համատարած է և  
տարածվում է վիրուսի պես աշխարհի բոլոր անկյուններում: Մատանան  
ավերածություն է խաղում մարդկության հետ: Նա ամենուր է: Նա տանջում է  
բարի հոգիներին, ինչպես նաև նրանց, ովքեր կորած են Ինձ համար: Նրան  
պետք է կանգնեցնել: Աղոթքը և Իմ Խոսքի տարածումը կօգնեն: Ասա Իմ  
հետևորդներին, թե ինչպես է Մատանան թունավորում մարդկությանը: Նա ոչ  
միայն ներկա է գլոբալ անհանգստության միջոցով, այլև թունավորում է նրանց,  
ովքեր հավատացած են, թե գործում են արդարադատության զգացողությունից

ելնելով: Նա նույնիսկ ներկա է անհոգ երիտասարդ սերնդի մեջ երաժշտության և հոչակի մոլուցքի մեջ:

Փրկիր հոգիներ հիմա՝ աղոթելով Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը: Տարածիր այդ աղոթքը որպես հրատապ անհրաժեշտություն: Խուճապի, սարսափի, ահնանգստության և դառն ատելության զգաղողությունը, որը հիմա զգացվում է աշխարհում, խորապես զգացվում է Իմ՝ մարդու Աստվածային Փրկչի կողմից, ով անվերջ արցունքներ է թափում այդ կորած հոգիների համար:

Մի՞թե մարդկությունը չի կարողանում տեսնել այդ ատելությունն իր հանդեպ յուրաքանչյուր անկյունում: Մի՞թե նրանք չգիտեն, որ դա Մատանան է՝ Խաբեբան, աշխատում: Ինչպես չար ատելությունն ու թուլացնող վայրագություններն են տարածվում կրակի պես, նույն ձևով Իմ Հավիտենական Հոր ձեռքը կիջնի հիմա այս անշնորհակալ կույր աշխարհի վրա: Մինչ մարդկային վայրագությունները շարունակվում են, ուր մարդը տեռոր և սպանություն է պարտադրում դիմացիին, նույն կերպ էկոլոգիական աղետները կավելանան որպես մատիժ մարդու դեմ մարդու կատարած մեղքերի: Այս երկնային պատիժը հիմա կիջնի աշխարհի վրա:

### **Հոգիներ փրկելու մարտը սկսվել է**

Հոգիներ փրկելու մարտը սկսվել է: Ջանասիրաբար աղոթեք ձեր և ձեր ընտանիքների համար: Քանի որ շատ անմեղ հոգիներ կրոնվեն (Չարից) այս աղետի ժամանակ: Մի վախեցեք, որովհետև նրանք, ովքեր հավատարիմ են Ինձ և Իմ Հավիտենական Հորը, կփրկվեն: Եթե Իմ Հավիտենական Հայրը հիմա չմիջամտի, մարդը կպարտադրի այնպիսի գենոցիդ կպարտադրի, որ աշխարհի բնակչությունը կնվազի հսկայական քանակություններով:

### **Աստվածային Գթասրտություն**

Ամուր բռնեք ձեր հավատը դուք բոլորդ, որովհետև առանց հավատի դժվար կլինի դիմանալ տառապանքին: Գովաբանեք Իմ Հորը **Աստվածային Գթասրտության** ընծան Ինձ շնորհելու համար: Իմ Գթասրտությունը սահմաններ չունի, և սա հիմա կապացուցվի ձեզ բոլորիդ: Այս մաքուր զուլալ սիրո օվկիանոսը կհեղվի Իմ բոլոր զավակների վրա, որ օգնի ձեզ փրկվել այն ատելությունից ու չարից, որը տարածվում է Չարի կողմից: Լվացեք ձեր հոգիները հիմա Իմ սիրո մեջ աղոթքի միջոցով, որովհետև ժամանակը մոտ է:

Հիշեք, Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Իմ Գթասրտության Ընծան բոլորի համար է, նույնիսկ մահացու մեղքի մեջ գտնվող մեղավորների համար: Նրանց կտրվի

ապաշխարելու հնարավորություն, հաղթելու Սատանային, միանալու Իմ գալիք ամենագթառատ Թագավորությանը:

Նեյեք դեպի Երկինք: Թույլ տվեք Ինձ բռնել ձեզ բոլորիդ և գրկեք::

Ձեր սիրող Փրկիչ

Ամենագթառատ Դատավոր

Հիսուս Քրիստոս

## **Երբեք մի դատեք այլ կրոներին, հավատքներին կամ սեռական նախապատվություններին**

Ստացված չորեքշաբթի, ապրիլի 6-ին, 2011թ

Իմ սիրելի աղջիկ, տառապանքը, որը կրում ես, այն պատճառով է, որ Խաբեքան մշտապես փորձում է գայթակղեցնել քեզ թողնել այս ամենասուրբ աշխատանքը: Նա ծվատում է քեզ: Ընդունիր սա: Երբեք մի կասկածիր Իմ Աստվածային խոսքին, անկախ նրանից, թե դա որքան դժվար կլինի քեզ համար: Դու կպարզևատրվես խաղաղության ոգով, երբ ճշմարիտ հանձնվես Ինձ: Շարունակիր ամեն օր ասել Ինձ այս. Ամբողջ օրվա ընթացքում և խնդրիր Ինձ շնորհները՝ լցնելու քեզ ուրախությամբ, հենց որ Խաբեքան հարձակվի քեզ վրա: Ուժեղ մնա, աղջիկս: Երբեք տեղի մի տուր: Միտքդ ազատ պահիր ժխտից և կենտրոնացիր աշխարհի համար տրվող Իմ պատգամի վրա: Նրանք այսօր մարդկության համար ամենակարևոր պատգամներն են: Նրանք տրվում են, ուսուցանելու մարդկաց մեկ անգամ ևս գտնել ճիշտ ճանապարհը դեպի Ինձ:

**Մարդիկ շփոթված են Իմ ուսուցումներից:** Շատերը կորած են հիմա: Նրանք շփոթված են Իմ ուսուցումներից այն ձևերից, որոնցով մեկնաբանվում են այդ ուսուցումները. Ընկղված, փոխված, հեռացված: Իմ զավակներն առաջնորդության կարիք ունեն հիմա, որպեսզի կարողանան փնտրել իրենց անհրաժեշտ շնորհները նորից ուժեղ և սրտով թեթև դառնալու համար: Սա կարող է ստացվել միայն աղոթքի և Իմ ուսուցումներին հետևելու միջոցով:

**Ես չեմ բացառում երկրի վրա գտնվող ոչ մի հոգու:** Իմ զավակները, ովքեր դարձի են եկել, գիտեն սա, և ավելի մոտ են դարձել Իմ Սրտին խորհուրդների միջոցով: Սակայն կորած թափառող զավակները պետք սկսեն ամենասկզբից և հիշեցնեն իրենց Մովսեսի միջոցով աշխարհին տրված Տասը Պատվիրանների



մասին: Այսօր շատ ու շատ զավակներ չգիտեն դրա մասին: Ես չեմ բացառում աշխարհում գտնվող ոչ մի հոգու, անկախ նրանից, թե ինչ կրոնի է նա պատկանում:

**Նախագգուշացում հավատացողներին, ովքեր վերնից են նայում մյուս հավատքներին:** Եթե Իմ հավատացողները տարբերություն դնեն և իրենց ավելի բարձր համարեն նրանցից, ովքեր տեղյակ չեն Իմ ուսուցումներին, ուրեմն նրանք կվարվեն ճիշտ այնպես, ինչպես Փարիսեցիներն էին վարվում: Ամոթ նրանց, ովքեր իրենց ավելի բարձր են դասում այն հոգիներից, որոնք լուսավորման կարիք ունեն: Ամոթ նաև նրանց, ովքեր չնայած տեղյակ են ճշմարտությանը, վիրավորում են ուրիշ հավատների պատկանողներին: Ովքեր հավատում են, թե տեղյակ լինելով ճշմարտությանը և Ամենասուրբ Խորհուրդներից օգտվելով, մտածում են թե իրենք ավելի կարևոր են Իմ աչքում: Այո, Ես Իմ սրտի մեջ մեծ հանգստություն և ուրախություն են ստանում այդ նվիրված հետևորդներից: Բայց երբ նրանք արհամարհում կամ դատում են ուրիշներին իրենց հավատի համար, նրանք Ինձ մեծապես վիրավորում են:

Իմ հետևորդներ, բացեք ձեր աչքերը Իմ ուսուցումների ճշմարտության հանդեպ ամենապարզ մակարդակով: Մի դատեք ուրիշներին: Վերնից մի նայեք նրանց, ովքեր ձեր հավատացմամբ մեղավորներ են և մերժում են Իմ ուսուցումները, որովհետև նրանք ձեզ հավասար են Իմ աչքում, չնայա՞ծ ձեզ տրվել է ճշմարտության ընծան: Իմ սրտին ցավ է պատճառում, երբ այդպիսի հետևորդները, չնայած լավ մտադրությամբ, սակայն թելադրում են այդ խեղճ կորած հոգիներին, թե ինչպես ապրեն իրենց կյանքը: Նրանք սխալ ձևով են դա անում:

**Երբեք մի ասեք այլ հավատամքների կամ սեռական նախապատվությունների ներկայացուցիչներին, որ նրանք դատապարտված են:** Իմ ուսուցումներն այն ձևով առաջ հրելը, երբ դուք ասում եք այլ հավատամքների կամ սեռական նախապատվությունների ներկայացուցիչներին, թե նրանք կոչնչանան կամ կվնասվեն՝ որակելով նրանց ուղիները որպես չար, պարզապես նրանց էլ ավելի թույլ կդարձնի: Շատերը պարզապես կրճեն իրենց մեջքը դեպի ձեզ: Այդ դեպքում դուք ձախողվում եք: Դասախոսություն կարդակու փոխարեն կարեկցանք ցույց տվեք: Սովորեցրեք օրինակի միջոցով: Երբեք մի ասեք կամ փորձեք ասել այդ մարդկանց, թե նրանք դատապարտված են Իմ աչքում: Որովհետև դա այդպես չէ:

Ես սիրում եմ բոլոր կրոնների յուրաքանչյուր հոգու: Բոլոր համոզմունքների, բոլոր հավատամքների, բոլոր նախընտրությունների: Նրանցից յուրաքանչյուրը մի թանկագին զավակ է: Ոչ մեկը մյուսից ավելի լավը չէ: Մինչ մեղքը միշտ կլինի, դուք բոլորդ էլ մեղավորներ եք, միշտ հիշեք դա, ձեզանից

ամեն մեկի կամքից կախված կլինի հետևել Իմ ուսուցումներին և տարածել Իմ Խոսքը:

Գրկեք մեկդ մյուսին: Կարեկցանք ցույց տվեք միմյանց հանդեպ: Մի բացառեք ոչ մեկի անկախ նրանից կաթոլիկ են, քրիստոնեական մյուս միաբանություններից են, իսլամի ներկայացունչ են, հինդուս են, հրեա, բուդդիստ, նույնիսկ այս նոր դուր սեկանդ պաշտամունքներից, ովքեր չեն հավատում Աստծուն՝ Հավիտենական Հորը: Աղոթեք նրանց համար: Սովորեցրեք նրանց ճշմարտության հանդեպ իրենց սրտերը բացելու կարևորությունը: Սովորեցրեք օրինակի միջոցով: Դարձ տարածեք Բայց երբեք մի դատեք ուրիշներին, կամ մի փորձեք տարբերել ձեզ, ովքեր չեն հասկանում ճշմարտությունը:

Երբեք մի հավատացեք, որ Իմ հաղեպ ձեր ունեցած նվիրվածության համար Երկնքից ձեզ տրված շնորհների պատճառով դուք ավելի լավն եք, քան ձեր եղբայրներն ու քույրերը: Այո, դուք ուրախություն եք բերում Իմ Սուրբ Սրտին, բայց դուք պետք է վարվեք այլոց հետ սիրով, այլ ոչ թե դիկտատորական ձևով:

**Ձեզանից ոչ մեկն արժանի չէ դատել մյուսներին:** Հիշեք այս դասը. Ձեզանից ոչ մեկն արժանի չէ դատելու կամ հասնելու ուրիշներին: Ոչ մեկը չունի աստվածային գիտելիքի զորությունը՝ բարոյական գնահատական տալու ուրիշների վերաբերյալ: Միշտ ունեցեք բաց միտք և հիշեք, որ այն օրը երբ կհավատաք, թե դուք ավելի կարևոր եք Իմ աչքում, քան նրանք ովքեր ձեր մտածողությամբ մեղավորներ են, այդ օրը դուք կորած կլինեք Ինձ համար:

**Ես ոչ մի հավատամքի ներկայացուցչի չեմ բացառի այս պատգամներից:** Իմ Խոսքը հիմա տրվում է որպես ընծա մարդկությանը: Ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ: Այս հաաղորդակցման ընթացքում Ես չեմ կենտրոնանա միայն նվիրված հետևորդներ խմբի վրա: Դուք, ովքեր հասկանում են ճշմարտությունը, թույլ տվեք հիշեցնել ձեզ, ամբողջ աշխարհում գտնվող Իմ բոլոր զավակները, հատկապես ամենակոշտացած մեղավորներն ու նրանք, ովքեր չեն հավատում Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր, ամեն բանի արարչին և ստեղծողին, հիմա առաջնահերթ են: Ձեզանից է կախված, Իմ հետևորդներ, որ աղոթեք ջանասիրաբար և սեր ցույց տաք նրանց հանդեպ, ովքեր կույր են: Բայց արեք սա այն ձևով, ինչպես Ես եմ սովորեցնում ձեզ: Վերջապես հիշեք, որ Ես սիրում եմ ձեզ բոլորիդ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս  
Թագավոր ողջ մարդկության

# Միլիոնավոր հոգիներ կփրկվեն այս պատգամների միջոցով

Հինգշաբթի 7 ապրիլի 2011թ, երեկոյան Ժ10 (22.00)

Իմ սիրելի աղջիկ, այսօր Սուրբ Հոգու ընծան հեղվեց քեզ վրա, յուրահատուկ Աստվածային շնորհների հետ միասին: Դու, աղջիկս, հանձնելով քո ազատ կամքը, հիմա առաջ կգնաս, կատարելու Իմ Ամենասուրբ Կամքը: Հիմա դու կհասկանաս Ինձ ամբողջովին ենթարկվելու կարևորությունը. քո մտքերում, գործերում, գործողություններում, վարքագծի և վերաբերմունքի մեջ: Հիմա դու կհետևես Իմ առաջնորդությանը և կփնտրես այն, նախքան Իմ անունից որևէ գործողություն կկատարես:

Վերջապես դու պատրաստ ես հետևելու Իմ ցուցումներին: Հիմա դու պետք է առնվազն երկու Ժամ Ինձ նվիրես աղոթելով յուրքանջյուր երկրորդ օր: Ի հավելումն, դու պետք է հետևես ամենասուրբ հոգևոր առաջնորդի տված ուղղորդություններին՝ ուղարկված քեզ Երկնքից: Նա կխոսի քեզ հետ այնպես, ինչպես Ես եմ նրան պատվիրում: Արա ճշտորեն այն, ինչ նա ասում է: Դու պետք է ապահովես, որ հաղորդակցվես Ինձ հետ ամեն օր, քանի որ Ես քեզ ասելու շատ բան ունեմ:

Աղջիկս, այժմվանից սկսած լսիր միայն Իմ ձայնը: Գրիր միայն այն, ինչ ստանում ես Ինձնից: Երբեք մի մտածիր այլոց կողմից ստացվող սուրբ պատգամների մասին: Միայն մի բերան կա, որով Ես հաղորդակցվում եմ քեզ հետ, և դա Իմն է: Վստահիր Ինձ աղջիկս: Վստահիր Ինձ ամբողջապես: Երբեք հարցականի տակ մի դիր այս պատգամները, որովհետև այդ Ես եմ խոսում քեզ հետ: Միշտ հիշիր դա: Հիմա, երբ դու վստահում ես Ինձ, դու շատ ավելի ուժեղ կլինես: Թույլ տուր Ինձ վստահեցնել քեզ, որ հիմա դու կկարողանաս ավելի արդյունավետ կերպով դիմադրել խաբեբայի հարձակումներին:

Խաղաղ զգա: քո հանդեպ սերը, աղջիկս, ճեղքելով դուրս է գալիս Իմ սրտի միջոց, մինչ Իմ հանդեպ քո նվիրվածությունն ու սերը լցնում է քեզ և քեզ դարձնում թույլ: Այս հզոր սերը մաքուր է իր ամբողջության մեջ և չի կարող համեմատվել ոչ մի բանի հետ, որ դու զգացել ես այս աշխարհում:

Երկինքն ուրախանում է քո վերջնական հանձնմամբ: Բայց հիմա դու պետք է նախապատրաստվես օգնելու փրկել միլիոնավոր հոգիների: Աղջկս, առաջադրանքը, որը Ես քեզնից խնդրում եմ, ահռելի է մարդկային

պայմաններով: Դու աղջիկս, կլինես աշխարհին տրվող Իմ Սուրբ Խոսքի ամենամեծ հատորի պատգամատարը, որպեսզի աշխարհը նախապատրաստվի Իմ Երկրորդ Գալուստին:

Նրանք, Իմ թանկագին զավակները, ում Ես սիրում եմ մի խարը սիրով ձեր հասկացողությունից այն կողմ, պետք է ետ բերվեն դեպի Իմ Սուրբ Սիրտը, նախքան չափազանց ուշ չէ: Դու, աղջիկս, պետք է հանձնես Իմ Խոսքը մարդկությանը: Դա հեշտ առաջադրանք չէ: Դու կտառապես դրա պատճառով, բայց դու պետք է հասկանաս, որ հիմա սա քո պարտականությունն է Իմ հանդեպ: Դու կանչվում ես վստահեցնելու համար, որ Իմ Աստվածային շուրթերից եկող խոսքի միջոցով միլիոնավոր հոգիներ կփրկվեն դժոխքի կրակներից:

Հաղորդակցվիր Ինձ հետ ինչպես հարկն է հիմա: Ես կառաջնորդեմ քեզ միշտ: Խաղաղություն քեզ, աղջիկս: Իմ Ամենասուրբ Հոգին հիմա հեղեղում է քո հոգին: Հիմա դու լի ես սիրով և ուրախությամբ և պատրաստ ես այս Աստվածային առաքելության հաջորդ էտապին:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Իմ ցավն այսօր շատ ավելի մեծ է, քան Խաչելության ժամանակ էր**

Չորեքշաբթի 13 ապրիլի 2011  
Երեկոյան Ժ 11 – 23.00

Իմ սիրելի աղջիկ, ես մեծ տխրությամբ լաց եմ լինում այս երեկո մարդկության մեղքերի պատճառով, որոնք արագորեն աճում են, մինչ մոտենում է ժամանակը, որ աշխարհը նշի խաչի վրա Իմ տառապանքի օրը: Իմ ցավն ավելի մեծ է, քան այն ժամանակ, երբ Ես առաջին անգամ խաչվեցի: Հիմա Ես վերապրում եմ այն տառապանքը, որը Ես կրեցի, քանի որ մարդկության մեղքերը խոցում են Իմ սիրտը ինչպես մի սուր, որն ավելի երկար է, սուր և ցավոտ: Լսեք Իմ աղերսանքները: Լսեք Իմ ճիչերը: Դուք բոլորդ: Սփոփեք Ինձ այս խորը տառապանքի մեջ, որ Ես կրում եմ այսօր: Ես ստիպված եմ ականատես լինել, ամեն օր, այն խորը վիշտը, ցավը և տառապանքը, որը մարդն է մարդուն պատճառում: Մարդկանց կամ երեխաների կողմից: Այդ մարդասպանները խղճի խայթ չեն զգում, այնքան որ վարակված են նրանց

խավար հոգիները Սատանայի՝ Խաբեբայի կողմից: Նա ոչ մի կարեկցանք ցույց չի տալիս ձեզնից որևէ մեկի հանդեպ, որովհետև նա հոգի չունի: Սակայն մարդիկ հիմարորեն տեղի են տալիս նրա գայթակղություններին, ինչպես կույրեր: Այնքան ստրկորեն են նրանք թույլ տալիս ներքաշվել սարսափելի խավարի մեջ, որ Ես ստիպված եմ հույսս դնել ձեզ վրա հավատացողներ, որ ջանասիրաբար աղոթեք այդպիսի հոգիներին կռվով փրկելու համար:

Իմ ցավն ամեն օր ուժեղանում է: Մարդը չի տեսնում մեղքն այնպես, ինչպես այն կա: Իր ամենասկզբնական մակարդակում մեղքը՝ սեփական անձի հանդեպ սերն է: Իր ամենավատ մակարդակում մեղքը սերն է այն ամենի հանդեպ, որը վնասում է ուրիշներին կեղծավորության, բռնության, չարաշահման և սպանության միջոցով: Ինչու՞ մարդիկ չնկատելու են տալիս, երբ ականատես են լինում այսպիսի վայրագությունների: Այդ գոհերը ձեզ նման մարդիկ են: Ջանասիրաբար աղոթեք այդ չարագործների համար, որովհետև նրանք նույնպես գոհեր են: Նրանք, զավակներս, ընկել են Խաբեբայի խորամանկության թակարդը, չնայած դրան, շատերը նույնիսկ չեն ընդունում, որ նա գոյություն ունի: Հիմա ժամանակը մոտենում է, որ Իմ Խոսքը նորից ճշմարտապես լսվի երկրի վրա: Խնդրում եմ, խնդրում եմ, բացատրեք բոլորին, որ Իմ Գթասրտությանը շուտով ականատես կլինեն երկրի վրա՝ գալիք առեղծվածային երևույթի ընթացքում: Կարևոր է ասել որքան հնարավոր է շատ մարդկանց, որ խնդրեն Աստծուն՝ Հավիտենական Հորը, ներել ձեզանից աեն մեկի և յուրաքանչյուրիդ ձեր կատարած անցյալի մեղքերը: Արեք այդ հենց հիմա: Եվ արագորեն: Փրկեք ձեր և ուրիշների հոգիները: Մինչ դարձը կլինի համատարած, որոշ դժբախտ հոգիներ չեն դիմանա այդ շոկին: Աղոթեք, աղոթեք, որ նրանք չմեռնեն մահացու մեղքի մեջ:

Խնդրում եմ հիշեք Իմ Տառապանքի մասին մեծ պահքի ընթացքում՝ մտածելով այն գոհաբերության մասին, որը Ես կամովին կատարեցի ձեզ բոլորիդ համար, որպեսզի կարողանաք փրկվել: Հետո հասկացեք, որ Նախագուշացումը, Գիտակցության Լուսավորումը Իմ Գթասրտության հաջորդ ընծան է՝ մարդկությանը:

Տարածեք դարձ ամենուրեք: Օգնեք պատրության մատնել Խաբեբային՝ աղոթելով **Իմ Աստվածային Գթասրտության** աղոթքը հոգիներ փրկելու համար: Վստահեք Ինձ հիմա և ետ բերեք Ինձ ձեր սրտերի մեջ: Միավորվեք, որ փրկեք մարդկությանը սիրո միջոցով:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Որդի Աստծո՝ Ամենակարող Հոր, ամեն բանի Արարչի և Ստեղծողի

# Յուրահատուկ շնորհներ՝ խոստացված այն դեպքում, եթե նույնիսկ մեկ օր կանչեք Հիսուսին

Հինգշաբթի 14 ապրիլի 2011թ, առավոտյան Ժ 11

Իմ սիրելի աղջիկ, շնորհակալ եմ այս ամենասուրբ աշխատանքին ավելի շատ ժամանակ հատկացնելու համար: Ժամանակը եկել է ձեզ բոլորիդ համար, որ բացեք ձեր սրտերը Իմ հանդեպ գոնե մեկ օր, որպեսզի հնարավորություն տաք Ինձ լցնել ձեզ յուրահատուկ շնորհներով: Այդ շնորհները հիմա կհեղվեն ձեզնից նրանց վրա, ովքեր մոռացել են, որ Ես գոյություն ունեմ, մինչ մոտենում է Ավագ ուրբաթը:

Մինչ Աստվածային Գթասրտության գորեղ նովենայի ժամանակը մոտենում է, այդ ժամանակը կօգտագործվի ձեր հոգիները հեղեղելու համար Իմ կողմից տրվող յուրահատուկ ընծաներով: Արեք հիմա ինչպես Ես ասում եմ և աղոթեք Ինձ այսօր ձեր սեփական բառերով: Այն շնորհները, որոնք Ես կտամ ձեզ, ոչ միայն ձեզ ավելի կմոտեցնեն Իմ Սուրբ Մրտին, այլև կլցնեն ձեզ Սուրբ Հոգով: Աղթեք Իմ նովենան Ավագ ուրբաթից սկսած և ներառեք որքան կարող եք շատ հոգիների, և Ես կփրկեմ նրանցից յուրաքանչյուրին:

Ձեզնից նրանք, ովքեր կընկնեն, նույնիսկ Իմ հանդեպ պաշտամունքից հետո, ես նորից ու նորից ձեզ վեր կբարձրացնեմ: Երբեք մի վախեցեք ետ շրջվել դեպի Ինձ, եթե շեղվել եք: Ես երբեք չեմ լքի նրանց, ովքեր շարունակում են ետ գալ Ինձ մոտ Որպես մեղավորներ դա տեղի կունենա: Երբեք չվախենաք: Ես կանգնած եմ ձեզնից յուրաքանչյուր կողքին՝ պատրաստ գրկելու ձեզ ամեն ժամանակ: Մեղքը կարող է ներվել: Երբեք մեղավոր մի զգացեք մեղքի համար, եթե պետք է շրջվեք դեպի Ինձ և թողություն խնդրեք: Ես միշտ այստեղ եմ:

Զավակներս, օգտագործեք Սուրբ շաբաթը, հիշեցնելու համար այն բոլոր գոհաբերությունները, որ Ես կատարեցի մեղավորների համար: Իմ կարեկցանքը դեռևս ուժեղ է: Այն երբեք չի թուլացել հոգիների հանդեպ: Նույնիսկ նրանց, որոնց մեղքերը խորապես վիրավորում են Ինձ: Եթե հոգին թողություն է փնտրում, ապա այդ մեղքը կոչնչացվի: **Աստվածային Գթասրտության** Իմ նովենան կներարկի ամենահզոր շնորհները, երբ ասվի Ավագ ուրբաթից սկսած մինչև Իմ Գթասրտության տոնը ինը օր հետո: Այս աղոթքն ասելով, դուք ոչ միայն կփրկեք ձեր հոգիները, այլև ուրիշ միլիոնավորների: Արեք սա Ինձ համար:

Ձեր միշտ սիրող և հավատարմ Աստվածախն Փրկիչ  
Հիսուս Քրիստոս

## **Ես ներկա եմ Սուրբ Հաղորդության մեջ, անկախ նրանից, որ Իմ Խոստումը սխալ են մենկաբանում**

Հինգշաբթի 14 ապրիլի 2011թ

Իմ սիրելի աղջիկ մի անհանգստացիր: Դու առաջ ես գնում այն բանի մեջ, որ ժամանակ ես հասկացնում Ինձ աղոթելու: Հիմա կարևոր է, որ հասկանաս, որ Իմ սրտին ավելի մոտենալու համար պետք է հասկանաս Սուրբ Հաղորդության խորհուրդը ստանալու անհրաժեշտությունը:

Շատերը, ներառյալ այլ քրիստոնեական խմբեր, ժխտում են Սուրբ Հաղորդության մեջ Իմ իսկական ներկայությունը: Հասկանալի չէ, թե ինչու են նրանք որոշել մերժելու այն խոստումը, որը Ես տվեցի Իմ վերջին ընթրիքի ժամանակ, ուր Ես խոստացա, որ կտամ Իմ մարմինը և արյունը որպես սնունդ և սնուցում ձեր հոգիների համար: Պարզ է այն, որ Սուրբ Հաղորդության հրաշքը, ներկա բոլոր պատարագի սեղանների վրա ողջ աշխարհում, այսօր գոյություն ունի և այնտեղ է, որպեսզի լցնի ձեր խեղճ թերսնուցված և դատարկ հոգիները Իմ ներկայությամբ: Այդ ներկայությունը ձեզ այնպես կուժեղացնի, որ եթե դուք բաց թողնեք Ինձ ստանալը, երբ սովորել եք դրան, դուք կորած կզգաք:

Շատ քրիստոնյաներ անտեսում են Իմ հիմնական խոստումները, որոնք ես տվեցի Իմ Խաչելության ընթացքում, որ Ես ներկա կլինեմ հացի և գինու մեջ, և կթողնեմ մի հարատև նշան, օգնելու սնել հոգիների: Չափից դուրս մարդկային մտածողությունը հանգեցրել է նրան, որ Ինձ մերժում են նույնիսկ լավ քրիստոնյաները: Այդ նույն քրիստոնյաները չեն կարողանում ստանալ Սուրբ Հաղորդությունն իր ճշմարիտ ձևով: Ամենասուրբ Հաղորդությունը տրվեց ձեզ բոլորիդ որպես մի մեծ ընծա ձեր ազատագրման և փրկության համար: Ժխտելով այն փաստը, որ Ես ներկա եմ, նշանակում է, որ դուք գրավի եք դնում այն շնորհները, որոնք կազմում են Ինձ ձեր սրտերին ավելի մոտեցնելու դաշինքի մի մասը: Հիշեք, երբ Ես մեռա ձեզ համար դա ձեզ դեպի հավիտեանական կյանք և փրկություն բարձրացնելու համար էր: Ստացեք Ինձ որպես կենդանի ներկայություն, և ձեր հոգիները կբոցավառվեն այնպիսի ձևով, որը ձեզ անհնար կթվար: Վերակազմեք Իմ Մարմինն ու Արյունը ստանալը: Թույլ տվեք Ինձ հեռացնել ձեր կասկածները: Մաքրիստոնյաների կատարած ամենամեծ սխալներից մեկն է, որը մերժում է Իմ մուտքն իրենց հոգիների մեջ

այս ձևով: Այն մեծապես վիրավորում է Իմ Հավիտենական Հորը, որովհետև այդ գոհաբերությունը ձեզ փրկելու համար էր: Թույլ տվեք Ինձ լույս և սնունդ բերել ձեր կյաքնի մեջ: Նախագգուշացման տեղի ունենալուց հետո դուք ավելի շատ հակված կլինեք ընդունել Իմ ուսուցումների ճշմարտությունը:

Հիշեք,թե Ես ինչ խոստացա Իմ վերջին ընթրիքի ժամանակ, որ երբ վերցնեք հացն ու գինին, նրանք ձեզ համար կդառնան Իմ Մարմինն ու Արյունը: Ցանկացած այլ մեկնաբանություն մարդկային լոգիկայի և մտածողության կողմից խողաթուրված է: Հիմա հասկացեք և ընդունեք ճշմարտությունը:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Ինչպես վստահանալ, որ ձեր ընտանիքը և ընկերները կարող են մտնել Երկինք**

Ստացված ուրբաթ 15 ապրիլի 2011թ, երեկոյան Ժ 3.30

Իմ սիրելի աղջիկ, Ես ուրախանում եմ, որովհետև Իմ այնքան շատ լավ և նվիրված հետևորդներ միանում են Սուրբ շաբաթվա ընթացքում որպես մեկ՝ պատվելու համար այն գոհաբերությունը, որը Ես կատարեցի բոլորի համար: Մի գահաբերություն, որը Ես նորից ու նորից կամովին կկատարեմ, եթե այն փրկելու լինեք ձեզնից յուրաքանչյուրին: Իմ սերը խորն է երկրի յուրաքանչյուր անհատի հանդեպ, որոնցից յուրաքանչյուրը ստեղծվել է Աստծո՝ Հավիտենական Հոր, մարդկության Արարչի Սուրբ Կամքով: Դուք բոլորդ մի հատուկ տեղ ունեք Իմ սրտում, նույնիսկ նրանք, ովքեր չեն ճանաչում Ինձ:

Եթե ձեզ առաջարկվի այս երկրի վրա հարստությամբ և ուրախությամբ լի կյանք, ձեզնից շատերը վեր կթռչեն այդ հնարավորության համար: Այնքան հուսահատորեն եք դուք փորձում բավարարել Մարմնի ձեր ոգեշնչումները: Եթե մարդկանց առաջարկվում է Դրախտը Երկնքում, նրանց համար դժվար է դա պատկերացնել: Ես հասկանում եմ սա:Քանի որ գաղջ հոգին պետք է ունենա պայծառ երևակայություն, որ տեսնի այդ փառապանծ վայրը: Նա միշտ պետք է պայքարի, որ նախատեսի այդ փառապանծ էությունը: Միակ հոգիները, ովքեր կարող են, Աստծո գոյության հանդեպ ուժեղ հավատ ունեցողներն են: Ձեզանից յուրաքանչյուրին սպասվող գոհարը ճշմարտապես հասկանալու միակ միջոցը ձեր հավատն ուժեղացնելն է: Սա անելու միակ միջոցը ջանասիրաբար աղոթելն է, որ տեսնեք ճշմարտությունը: Լույսը: Այն փայլուն ապագան, որը սպասում է բոլոր նրանց, ովքեր պատվում են



Աստծուն՝ Ամենակարող Հորը: Հավատացողներ դուք պետք է աղոթեք ձեր ընկերների, ամուսինների/կանանց, ազգականների, ծնողների, եղբայրների, քույրերի և զավակների համար, ովքեր քիչ հավատ ունեն: Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը, եթե այն ասվի նրանց փոխարեն ձեր կողմից, կփրկի նրանց հոգիները: Սա է Իմ խոստումը ձեզ հիմա:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Ինչ կզգաք Նախագգուշացման ընթացքում, և վայրկենական ներողության աղոթք**

Շաբաթ 16 ապրիլի 2011թ, առավոտյան Ժ 10

Իմ սիրելի աղջիկ, արագորեն շաչժվիր, որ ավելացնես տեղեկատվությունն Իմ պատգամի վերաբերյալ, քանի որ Նախագգուշացումը արդեն կախված է աշխարհի վրա: Ասա այն հոգիներին, ովքեր մերժում են աղոթել, որ մի կողմ հրեն իրենց հպարտությունը և անբարյացակամությունը և շրջվեն հիմա դեպի Ինձ՝ թողություն հայցելու համար: Պարզ ասա, որ շատ ու շատ հոգիներ չեն դիմանա այս անխուսափելի իրադարձությանը: Այդ հոգիներից շատերը պարզապես ծույլ են, և մինչ կարող են հավատալ Աստծուն՝ Հավիտենական Հորը, նրանք մտածում են թե հետագայում ինչ-որ ժամանակ կգրադվեն իրենց հոգևոր հավատալիքներով: Սակայն դա չափազանց ուշ կլինի:

Ասա աշխարհին, որ այս իրադարձությունը փրկելու է նրանց: Շատերը կապաշխարեն այդ խորհրդավոր փորձառության ժամանակ: Նրանք կզգան մի այրող սենսացիա, որը նման կլինի Քավարանում գնտվող հոգիների զգացածին: Սա նրանց ներքնապես ցույց կտա, թե հոգիները ինչի միջով պետք է անցնեն, եթե ամբողջապես մաքուր չեն, նախքան կկարողանան տեսնել Երկնքի փառահեղ լույսը: Պարզապես ընդունելով, որ այս իրադարձությունը տեղի է ունենալու, նրանք կկարողանան կենդանի մնալ: Շրջվեք դեպի Ինձ և ասացեք. <<Խնդրում եմ առաջնորդի ինձ դեպի քո մեծ գթասրտության լույսը և բարությունը և ներիր ինձ Իմ մեղքերը>>, և Ես վայրկենապես կներեմ ձեզ: Հետո, Նախագգուշացումից հետո, դուք ձեր հոգում կզգաք խորը խաղաղություն և ուրախություն:

Երիտասարդները դժվարանում են աղոթել

Այսօր աշխարհում շատերն են մերժում աղոթել: Հատկապես

երտասարնդերի համար այն դժվար է և հնաոճ: Նրանք սխալմամբ հավատում են, որ այո, քանի որ նրանք հավատում են Աստծուն, աղոթքը պարտադիր չէ: Դա ճիշտ չէ: Այն էական է Դրախտ մտնելու համար, որին դուք հուսահատորեն կձգտեք մահից հետո: Եթե մնաք մեղքի մեջ, չեք կարողանա զգալ այդ փառահեղ տոնակատարությունը: Ճիշտ ինչպես ձեզնից նրանք, ովքեր հետևում են իրենց սննդակարգին, խնամում են իրենց մարմինը, ուշադիր եք ձեր կերածի հանդեպ և ձեզ մաքուր եք պահում, այդ նույն կերպ դուք պետք է նախապատրաստեք ձեր հոգիները: Եթե ուշադրություն չդարձնեք ձեր հոգու վիճակին, այն կթուլանա և կունենա սննդի պակաս, որն անհրաժեշտ է նրան կատարյալ ձևի մեջ պահելու համար:

Աղոթք՝ ուրիշների դարձի համար

Աշխարհում հավատքի պակասի պատճառով նրանց մոտ, ովքեր հավատացյալներ են, ձեզնից նրանք, ովքեր ուժեղ եք ձեր հավատի մեջ, հիմա ունեք մի մեծ պատասխանատվություն: Դուք պետք է աղոթեք դարձի աղոթքը մյուսների համար:

<<Ես կոչ եմ անում քեզ, Հիսուս, որ Քո **Աստվածային Գթասրտությամբ** ծածկես այդ գաղջ հոգիներին Քո Թանկագին Արյամբ, որպեսզի նրանք կարողանան դարձի գալ>>: Ասեք այս կարճ աղոթքը նրանց անունից, ովքեր ձեր հավատացմամբ ամենաշատն ունեն դրա կարիքը:

Հիշեք, զավակներս, Իմ փառահեղ խոստումը: Ես կհաղթեմ վերջում:

Սատանան՝ Խաբեբան, պարզապես չի կարող գոյատևել: Խնդրում եմ թույլ տվեք Ինձ պաշտպանել ձեզ և տանել ձեզ Ինձ հետ: Մի տվեք ձեր հոգին Սատանային: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Խնդրեք Ինձ ուժեղացնել ձեր հավատը ամեն օր:

Ձեր Աստվածային Փրկիչ

Թագավոր Գթասրտության և Կարեկցանքի

Հիսուս Քրիստոս

## **Արթնացեք ճշմարտության հանդեպ քանի դեռ չափազանց ուշ չէ**

Ուրբաթ 15 ապրիլի 2011թ, ժ 22.00 (երեկոյան ժ11)

Իմ սիրելի աղջիկ, հիմա դու պետք է ասես աշխարհին, որ Իմ Ամենասուրբ Կամքին պետք է հետևել, եթե մարդկությունը ցանկանում է հավիտենական

կյանք: Այս աշխարհը, չնայած այն շատ բան ունի առաջարկելու, երբեք չի բավարարի ձեր քաղցը: Եթե չլինեին ձեր առաջին ծնողների՝ Ադամի և Եվայի մեղքերը, այո, հնարավոր կլինեի ապրել հավիտենական երջանկության մեջ՝ առանց ձեր ճանապարհին հանդիպող խոչընդոտների: Քանի որ Խաբեբան ամենուրեք է, նա չի թողնի որ ձեզանից ոչ մեկը պլանավորի իր կյանքը դեպի Ինձ: Խորամանկ, ստախոս, նա շարունակաբար կպայքարի վստահանալու համար, որ դուք ընկնում եք մեղքի մեջ հմայքի տարբեր միջոցներով: Այնուամենայնիվ նրա համար բավականին դժվար կլինի ձեզ թիրախ դարձնել, եթե դուք գտնվում եք շնորհի վիճակում, որին հասել եք խոստովանության և Օրհնյալ Խորհուրդների միջոցով:

**Սուրբ Վարդաբանի** աղոթքը հատկապես չափազանց արդյունավետ է Սատանայի դեմ այն գործությունների պատճատով, որոնք տրվել են Իմ Օրհնյալ Մորը Աստծո՝ Հավիտենական Հոր կողմից: Նա հսկայական ուժ ունի Խաբեբայի վրա: Նա (Խաբեբան) անգոր է նրա դեմ և գիտի դա: Եթե թույլ տաք Իմ Օրհնյալ Մորն առաջնորդել ձեզ դեպի շնորհները, նա կարող է բարեխոսել ձեզ համար, որից հետո դուք պաշտպանված կլնեք նրա (Սատանայի) աղդեցությունից:

Մինչ մարդիկ այսօր երկրի վրա ձգտում են երջանկության և խաղաղության, նրանք փնտրում են գաղտնի բանաձև: Այսպես են նրանք ծախսում ժամանակը, փորձելով բացել երջանկության, նյութական շահի և խաղաղության գաղտնիքն իրենց կյանքում: Նրանք գալիս են նոր մեթոդներով, գաղափարներով, որոնցից բոլորը քարոզվում են հարուստ դառնալու սխեմաների միջոցով: անկախ նրանց կողմից առաջ քաշված բոլոր պատճառաբանություններից, որոնց մեծ մասը հիմնված է հոգեբանական իդեալիզմի վրա, ձեր կյանքում պարզապես ահնար է հասնել խաղաղության կամ երջանկության, եթե չեք հավատում Աստծուն՝ Հավիտենական Հորը: Նա է միակ կյանք տվողը: Առանց նրան մոտենալու դուք ոգով դատարկ կլինեք: Նրանք, ովքեր զգալի ժամանակ են հատկացնում փորձելով ժխտել Իմ գոյությունը, ձեր ժամանակն անտեղի անց եք կացնում երազանքներ հետապնդելով, որոնք երբեք իրականություն չեն դառնա: Ձեր արարչին՝ այն գերագույն էությանը, ով ստեղծեց աշխարհը, ընդունելու ձեր համառ մերժումը ձեզ կառաջնորդի դեպի հավիտենական խավարի մի անդունդ: Ձեզ նման շատ մարդիկ, ովքեր հասան արտառոց չափազանցությունների՝ իրենց կյանքի ընթացքում մերժելու համար Աստծո գոյությունը, տարածելով այն սուտը, թե գոյություն չունի այնպիսի մի բան, ինչպիսին Հայր Աստվածն է, հիմա դժբախտաբար դժոխքի խորքերում են իրենց սեփական ընտրության հետևանքով: Թույլ մի տվեք որ դա կատարվի ձեր հոգիների հետ, ուր նրանք, ովքեր ավարտում են դժոխքում, այրվում են այնպես, ասես դեռևս մսից են: Ինչպես է Սատանան ծիծաղում ձեր տգիտության վրա: Երբ ժխտում եք Աստծուն, ապա ժխտում եք հավիտենական երջանկության ձեր իրավունքը: Հենց այդ հավիտենական երջանկությունն է, որ

դուք անդադրում փնտրում եք աշխարհում: Բայց այն չի կարող ձեռք բերվել երկրի վրա:.

Երբեք երկրի վրա ձեր կյանքը մի ապրեք այնպես, ասես թե այն ձեր գոյության ցիկլի միակ մասն է: Որովհետև այդպես չէ: Ձեր իսկական տունը կլինի Երկնքում՝ Ինձ հետ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Նույնիսկ Աստվածային Գթասրտության փոքր խմբերը կարող են փրկել միլիոնավորների**

Շաբաթ 16 ապրիլի 2011թ ժ 22.45 10.45

Իմ սիրելի աղջիկ, Նախագգուշացման ժամանակը հիմա մոտ է, և այն տեղի կունենա արագորեն՝ աչք թարթելու ընթացքում: Բոլորը կդադարեցնեն իրենց գործը, երբ ականատես կլինեն Իմ Աստվածային Գթասրտությանը: Աղոթեք առաջին հերթին բոլոր նրանց համար, ովքեր մահացու մեղքի մեջ են: Նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն, քանի որ նրանցից շատերը մեռած կընկնեն շոկից, երբ տեսնեն իրենց կատարած մեղսալի չարագործությունների սարսափը Իմ աչքերով: **Աստվածային Գթասրտության** աղոթքն աղոթելով միլիոնավորների կարելի է փրկել, նույնիսկ եթե այն ասվի նվիրված հետևորդների մի փոքր խմբի կողմից:

Ես , աղջիկս, քեզ չեմ ասի այդ մեծ իրադարձության օրը: Բայց վստահ եղիր, որ ժամանակը հիմա վրա է հասել: Մինչ չարը շարունակում է աճել ողջ աշխարհով մեկ, նույնպես Իմ Հոր ձեռքը հիմա կիջնի ամենուր: Նա այլևս ետ չի կանգնի և թույլ չի տա Սատանայի հետ դաշնակցած այդ չար մեղավորներին ոչնչացնել կամ ազդել Իմ զավակների վրա: Ամոթ այն եսասիրությամբ համակված մեղավորներին, որոնց Ես դեռևս սիրում եմ չնայած նրանց հոգու վրա եղած չար բծի: Ես հիմա խնդրում եմ ձեզ աղոթել նրանց մեղքերի թողության համար:

Մինչ Նախագգուշացումը հիմա տեղի կունանա, նույնպես էկոլոգիական աղետները կիջնեն մարդկության վրա: Աղոթքը հիմա ձեր միակ զենքն է զավակներս, որ փրկեք ձեզ և մարդկությանը դժոխքի կրակներից: Հենց Նախագգուշացումն ավարտվի, խաղաղությունն ու ուրախությունը կիշխեն: Իսկ հետո կսկսվի Նոր համաշխարհային դաշինքի կողմից հետապնդումը:

Նրանց հզորությունը կարող է թուլացվել, եթե ձեր կողմից բավարար չափով ապաշխարություն տարածվի և ջանասիրաբար աղոթք ասվի:

Մի վախեցեք Իմ սիրելի հետևորդներ: Դուք կաշխատեք միասնաբար միասին աղոթելով մարդկության փրկության համար: Եվ այդ ընթացքում կփրկեք միլիոնավոր հոգիների:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Նոր համաշխարհային կարգի պլանը՝ վերահսկել ձեր փողը և սնունդը**

Կիրակի 17 ապրիլի 2011թ առավոտյան ժ 9

Իմ սիրելի աղջիկ, ասա աշխարհին, որ հիմա նրանք շուտով ականատես կլինեն մի շարք էկոլոգիական աղետների: Դրանք տեղի կունենան ամենաարտասովոր և անսպասելի վայրերում և կլինեն խիստ ուժգին: Մարդու մեղավոր վարքագիծն է դա առաջ բերել: Ապաշխարեք դուք բոլորդ և հիշեք. Այս կլիմայական աղետները կարթնացնեն ձեզ ձեր կույր թմիրից և հավատի պակասից: Նրանք տեղի են ունենում նաև գլոբալ դաշինքների չար խմբի և նրանց չարամիտ հիմար գործունեության ազդեցությունը նվազեցնելու համար: Այս խմբերը, որի տակ Ես ի նկատի ունեմ որպես սպասման մեջ գտնվող մի Նոր համաշխարհային կառավարություն, հիմա պլանավորում են դուրս ցատկել Հակաքրիստոսի առաջնորդությամբ: Այդ նույն խմբերը քայքայել են բանկային համակարգը և հիմա ամենուրեք կոչնչացնեն արժույթները: Սա նրա համար է, որ կարողանան վերահսկել ձեզ:

Աղջիկս, երբ Ես մի քանի ամիս առաջ առաջին անգամ կիսեցի այս պատգամները, քեզ դրանք արտառոց թվացին, սակայն դու գրեցիր այն, ինչ Ես ասացի: Արդեն որոշ ժամանակ է, ինչ այդ չար սյուժեն, պլանավորված այդ օձերի՝ Սատանայի հետևորդների կողմից, սկսել է ծավալվել: Նրանց խորամանկ սխեմաներից մի քանիսն արդեն բացահայտվում են, սակայն շատերը հավատում են, թե աշխարհը պարզապես գնում է դեպի մեկ այլ ֆինանսական ճգնաժամ: Արթնացեք դուք բոլորդ հիմա: Նայեք ձեր շուրջը և ինքներդ տեսեք: Դադարեցրեք ենթադրությունները, թե աշխարհը պարզապես դեպրեսիայի ճիւղանների մեջ է, որն առաջացել է տնտեսության անկումից: Որովհետև դա ճիշտ չէ: Այդ մարդիկ հիմա կվերահսկեն ձեզանից յուրաքանչյուրին գլոբալ արժույթի և ձեր երկրների անվճարունակության միջոցով: Ոչ մի երկիր չի խուսափի նրանց ճանկերից: Խնդրում եմ ուշ դարձրեք

Իմ խոսքին: Ձեր փողը կլինի անարժեք: Մենքի և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերումը հնարավոր կլինի միայն Նշանի՝ այն ինքնության հաստատման միջոցով, որի մասին Ես խոսել եմ: Խնդրում եմ, խնդրում եմ, չընդունեք այդ Նշանը, որովհետև դուք կորած կլինեք Ինձ համար: Այդ նշանը կսպանի ձեզ ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգևորապես: Դուրս մնացեք այդ իրավասությունից: Սկսեք ցանել ստեղծելով ձեր պահեստային սնունդը, ձեռք բերեք ծածկոցներ, մոմեր և ջուր, եթե ցանկանում եք խուսափել Նշանը ստանալուց: Գազանի Նշանը

Նա՝ Հակաքրիստոսը, ով կղեկավարի այս Նոր համաշխարհային կառավարությունը, հավատացած է, թե կգողանա մարդկային ռասայի հոգիները: Բայց այդպես չի լինի: Ճիշտ որքան շատերը կընկնեն նրա ազդեցության տակ, այնպես էլ Իմ հետևորդները հաստատակամորեն հավատարիմ կմնան Ինձ՝ իրենց Աստվածային Փրկչին:

Բոլոր դուք, ով վիրավորանքներ կնետեք այս մարգարեությունների վրա, լսեք հիմա: Ընկեք այդ գլոբալ իշխանության ազդեցության տակ, և կկորչեք: Ձեզ հզոր հավատ պետք կլինի, որ գոյատևեք: Ձեր խնդրած աղոթքներին պատասխան կտրվի: Ես կպաշտպանեմ ձեզ երկրի վրա սարսափելի ժամանակահատվածի ընթացքում: Նախապատրաստվեք հիմա խմբային հավաքների, ուր կկարողանաք աղոթել խաղաղությամբ և գաղտնաբար: Նրանք, Նոր համաշխարհային կարգը, նույնպես կլինեն աղոթքի մեջ իրենց սեփական ստոր եկեղեցիներում: Այդ եկեղեցիները գոյություն ունեն ամենուր, չնայած նրանք ստեղծվել են գաղտնաբար: Նրանք զոհեր են մատուցում և պաշտամունք կատարում իրենց կուռքին՝ Մատանային: Այդ պաշտամունքները կանգնած են իրենց գազանային ոտքերի վրա և բոլորն էլ կլիսում են մեկ անհեթեթ նպատակ՝ վերահսկել մարդկությանը: Նրանք կանեն դա՝ փորձելով վերահսկել ձեր փողը, սննդի պաշարները և էներգիան: Կովեք դրանց դեմ ձեր կարողացածի լավագույն չափով աղոթքի և դարձի տարածման միջոցով: Աղոթեք նաև այդ մոլորված մարդկանց համար, որոնց խոստացվել է մեծ հարստություն, տեխնոլոգիաներ, երկար կյանք և հրաշքներ: Որքան սխալ են նրանք: Նրանք իսկապես խաբվել են: Երբ նրանք հայտնաբերեն ճշմարտությունը, նրանք ընկած կլինեն դժոխքի խորքերում և այդ ժամանակ չափազանց ուշ կլինի:

Աղոթեք, աղոթեք դուք բոլորդ Իմ **Աստվածային Գթասրտության և Ամենասուրբ Վարդաբանի** աղոթքները ամեն օր որքան հաճախ որ կարող եք, որ մեղմացնեք այդ սատանայական և դիվային պլանի ազդեցությունը: Աղոթեք նաև այն հոգիների համար, որոնք կկորչեն Աստծո՝ Իմ Հոր ձեռքով բերվող անխուսափելի գլոբալ էկոլոգիական աղետների հետևանքով: Նրանք ձեր

աղոթքների կարիքն ունեն: Խնդրում եմ ուշ դարձրեք աղոթքների մասին Իմ աղեսին, քանի որ դրանց պատասխան կտրվի:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## Աստծո Չայրույթը կիջնի նոր համաշխարհային կարգի վրա

Կիրակի 17 Ապրիլ 2011թ, ժ 19.00

Իմ սիրելի աղջիկ, շատ մեծ տխրությամբ պետք է ասեմ քեզ, որ սպասվող Էկոլոգիական աղետների արդյունքում հսկայական մարդկային կորուստներ կլինեն Ասիայում, Եվրոպայում, Ռուսաստանում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր զայրույթը արագորեն կիջնի այդ Գլոբալ Դաշինքի վրա, ովքեր ստորգետնյա կազմակերպություններ են ստեղծում՝ աշխարհի մնացած մասի վրա մահ տարածելու նպատակով, իրենց սեփական օգուտի համար: Նրանք պատասխանատու են հարուս ֆերմաներ և նոր տեխնոլոգիաներ ստեղծելու համար, որոնք կապշեցնեն ձեզ, եթե նրանց նպատակներն այդքան չարակամ չլինեն: Այդ մարդիկ, ովքեր առաջին աշխարհի յուրաքանչյուր երկրից են (գարգացած երկրներից), հարուստ են, հզոր, տաղանդավոր և վերահսկում են բանկերը, զինուժը, աշխարհի հումանիտար կազմակերպությունները, ոստիկանությունը, կառավարությունները, էներգամատակարարներին և լրատվամիջոցներին: Ձեզանից ոչ մեկը չի կարող դուրս պրծնել նրանց ճանկերից, մինչև Ես ձեզ չասեմ, թե ինչպես:

Աղոթքը, հատկապես **Աստվածային Գթասրտության** աղոթքը, ապաշխարություն կտարածի, իսկ **Սուրբ Վարդարանի** աղոթքը կթուլացնի այդ պարագիտների գործը, որոնց կուռքը Սատանան է: Հետաքրքիրը սա է. Այդ խաբուսիկ ցանցի մեջ ընկած ֆանատիկներից շատերը հավատացած են, որ իրենք պարզապես փառամոլ են՝ հարստության հանդեպ ունեցած բնական ցանկությամբ և ոչ մի կրոնական հավատալիքներ չունեն: Նրանք չգիտեն, որ խաբված են Սատանայի կողմից և ամեն օր գտնվում են նրա ազդեցության տակ իրենց մտքերով, ոգեշնչումներով, խոսքերով և արարքներով: Որքան կույր են նրանք:

Ամենուրեք, ուր նրանք խմբված են, կիջնի Աստծո զայրույթը սարսափելի ուժով: Սա արդեն սկսվել է: Նրանց կստիպեն կանգ առնել, բայց դրա համար մի փոքր ժամանակ կպահանջվի: Դա նրանց ամբողջապես չի կանգնեցնի, բայց կթուլացնի այն սարսափելի ազդեցությունը, որը կլինեն նրանց արարքների հետևանքով: Օրինյալ Երրորդությունը հիմա ակտիվորեն հաղորդակցվում է ընտրյալ հոգիների հետ ողջ աշխարհով մեկ: Հավատացյալներն արդեն սա նկատած կլինեն: Նրանք, ովքեր չեն հավատում Աստծուն՝ Հորը, կարծում են թե

այդ մարդիկ սոսկ բառախաղ են անում անհեղ ղատաստանի օրվա մասին: Չնայած աշխարհում շատերը կարող են իսկապես սուտ հայտարարություններ անել, խնդրում եմ, մի արհամարհեք նրանց, առանց նախապես լսելու, թե ինչ են նրանք ուզում ասել: Միշտ աղոթեք ուղղություն ստանալու համար այս դժվարին և խառնաշփոթ ժամանակներում: Միշտ ձեր ուշադրությունը պահեք Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի վրա: Ես կբռնեմ ձեր ձեռքը և կօգնեմ ձեզ այս փորձությունների ընթացքում:

Շատերը, երբ ականատես լինեն այս մարգարեությունների կատարմանը, խուճապի կմատնվեն և կսարսափեն շատ առումներով: Բայց կարիք չկա վախենալու, որովհետև այդ ժամանակը կարճ կլինի: Իսկ հետո կգան նոր Երկինքն ու Երկիրը, ուր դուք բոլորդ կապրեք խաղաղ, երկար և երանավետ կյանք Ինձ հետ միության մեջ

Որքան շատ մարդիկ շրջվեն դեպի Հայր Աստված և ուղղորդություն խնդրեն, այնքան ավելի քիչ կլինի Մեկ համաշխարհային կարգի կողմից ծրագրված չարի ազդեցությունը: Գնացեք հիմա խաղաղությամբ: Աղոթեք, Իմ հանդեպ ունեցած ձեր հավատի հզորացման համար:

Ձեր Ողորմած Փրկիչ և Արդար Դատավոր Հիսուս Քրիստոս

.....

## Մեռական անբարոյականությունը ձեզ դժոխք կտանի

Երկուշաբթի 19 ապրիլի, 2011թ, ժ 23.50

Աղջիկս, մինչ աշխարհը բաժանվում է տարբեր բաժանումների՝ նրանց, ովքեր ապրում են պարզ և հասարակ կյանքով, ոմանք հարստության և խաղաղության մեջ, կամ աղքատության ու հիվանդության կողմից վնասված, կամ պատերազմի ու հզորների զոհեր են, բոլորն էլ զարմանքով ականատես կլինեն գալիք նույն իրադարձություններին:

Շատերը կհասկանան որ էկոլոգիական աղետները Աստծո ձեռքն են: Ուրիշները կասեն, որ դրանք վերջին ժամանակների նշաններն են, մյուսներն էլ՝ որ այն կապված է գլոբալ նախազգուշացման հետ: Բայց հիմա, այս ժամանակ, ամենակարևորն է հասկանալ հետևյալը. Մեղքը, եթե այն բարձրանա անկանխատեսելի մակարդակների, ամեն դեպքում ավերում կառաջացնի ձեր ամենօրյա կյանքի մեջ: Բայց երբ այն ուժգնանա աշխարհում



այն մակարդակների, որոնք տեսնում և զգում եք, ապա կարող եք վստահանալ, որ այդ աղետները Աստծո ձեռքից են:

Աստված՝ Հավիտենական Հայրը, արդեն պատասխանել և գործել է այդ ձևով: Հիմա, մինչ ժամանակը մոտենում է ատանային և նրա հետևորդներին ոչնչացնելու, էլ ավելի կուժեղանա էկոլոգիական անհանգստությունը, որը կթույլատրվի Աստծո կողմից Իր Գթասրտության միջոցով: Նա կանի այդ, որպեսզի արգելի Սատանային և նրա բոլոր քայքայված մարդկային խամաճիկներին, ովքեր ընդունում են Սատանայի հոգեբանական ուժերի միջոցով նրա խոստացած գանձերի և փառքի հեռանկարը:

Սատանան ներարկում է չար մտքեր և գործողություններ այն հոգիներին, որոնք բավականին թույլ են նրա իշխող գործողությունների դեմ կանգնելու համար: Այդպիսի մարդիկ ընդհանուր գծեր ունեն: Նրանք եսակենտրոն են, համակված աշխարհիկ նկրտումներով և հարստությամբ և հակված են սեռական շեղումների ու իշխանության: Այս ամենը կվերջանա դժոխքում, եթե նրանք շարունակեն հետևել Հակաքրիստոսի փառաբանմանը, ով պատրաստվում է իրեն հայտնի դարձնել աշխարհում:

Շատ անմեղ մարդիկ չեն հավատում Սատանային, Հակաքրիստոսին կամ Աստծուն՝ Ամենակարող Հորը: Ուստի նրանք կույր են դառնում: Սակայն զարմանում են, թե ինչու է իրենց հասարակությունը, ուր իրենք ապրում են, քանդվում: Նրանք չեն հասկանում, տրադիցիոն ընտանեկան միավորի քայքայման սարսափելի արագությունը: Նրանք այն բարդում են ժամանակակից հասարակության վատ կողմերի վրա: Նրանք չգիտեն այն, որ Սատանան որպես առաջնահերթ թիրախ է պահում ընտանիքը: Որովհետև նա գիտի, որ եթե ընտանիքը քայքայվում է, ապա հասարակությունը նույնպես քայքայվում է: Շատերին ծանոթ է սա, որովհետև այն ակնհայտորեն ավելանում է աշխարհում այսօր:

Հետո նայեք սեռական անբարոյականությանը: Զարմանում եք, թե որքան ահավոր կերպով է հասարակությունը վարակվել այս չարիքով: Սակայն դուք նորից չեք հասկանում այն, որ Սատանան պատասխանատու է աշխարհում պիղծ անբարոյականության յուրաքանչյուր արարքի համար: Մինչ նրանք, ովքեր բռնված են այլազանության, սեռական շեղումների և թմրամոլության շահագործման աշխարհում, կպատճառաբանեք, թե դրանք զվարճության աղբյուրներ են, որոշ դեպքերում՝ եկամուտի ձև, պետք է իմանաք, որ դրանք կլինեն դեպի դժոխքի հավիտենական կրակներ տանող ձեր անձնագրերը:

Յուրաքանչյուր շեղված սեռական գործողության համար ձեր մարմինը նույնպես հավիտյան կայրվի ասես մսի մեջ, չնայած դուք կլինեք հոգով:

Մարդկային մարմնի յուրաքանչյուր մասը, որն օգտագործում էք մահացու մեղքի մեջ, կտառապի ամեառութեղ ցավով դժոխքի կրակների մեջ: Ինչու՞ պետք է դուք սա ցանկանաք: Ձեզնից շատերը, խեղճ, մոլորված հոգիներ, չեք հասկանում որ ձեզ երբեք չի ասվել ճշմարտությունը: Այն ճշմարտությունը, որ գոյություն ունի Երկինք, Քավարան և Դժոխք: Իմ Եկեղեցու նվիրյալ սպասավորներից շատերը. քավականին երկար ժամանակ է ինչ չեն շեշտում այս ուսուցումները: Ամոթ նրանց: Ես լաց եմ լինում նրանց չարչարանքների համար, որովհետև նրանցից շատերն իրենք էլ չեն հավատում Դժոխքին: Ուրեմն ինչպե՞ս կարող են նրանք քարոզել այս սարսափը, որ դժոխքն է: Նրանք չեն կարող: Քանի որ շատերը կրկնօրինակել են հեշտ պատասխանը. <<Աստված ամենաներող է: Նա երբեք ձեզ դժոխք չի ուղարկի, այնպես չէ՞>>:

Պատասխանը սա է. Ոչ, Նա չի ուղարկի: Դա ճիշտ է, որովհետև Նա երբեք մեջք չի շրջի Իր զավակների հանդեպ: Բայց իրականությունն այն է, որ մահացու մեղքի կողմից փակված շատ ու շատ հոգիներ, որոնք նրանք վարժվել են կատարելու, կապվում են իրենց մեղքերին և կատարում դրանք նորից ու նորից: Կրկին ու կրկին: Նրանք այնպիսի խավարի մեջ են, հարմարավետ իրենց սեփական անբարոյականության մեջ, որ շարունակում են ընտրել այդ խավարը նույնիսկ մահից հետո: Նրանք չեն կարող փրկվել այն ժամանակ: Նրանք ընտրել են այդ ճանապարհին իրենց սեփական ազատ կամքով՝ մի ընծա Աստծուց տրված, որին Նա չի միջամտի: Բայց Սատնան կարող է միջամտել և միջամտում է:

Ընտրեք այն կյանքը, որը ցանկանում եք, կյանքի ճանապարհը դեպի Աստված՝ Հավիտենական Հայրը դեպի Երկինք, կամ Սատանային՝ Խաբեբային, դժոխքի կրակների մեջ: Սրանից ավելի պարզ ձև չկա բացատրելու համար արդյունքը, զավակներս: Իմ սիրո և կարեկցանքի պատճառով է, որ Ես պետք է ձեզ ցույց տամ ճշմարտությունը:

Ինչ-որ տեղ այս պատգամը ձեզ վախեցնելու համար է, որովհետև մինչև ցույց չտամ թե ինչ է պահված նրանց համար, Ես իմ ճշմարիտ սերը ձեր բոլորիդ հանդեպ բացահայտած չեմ լինի:

Ժամանակն է նայել ապագային ոչ միայն ձեզ համար, այլև այն ընկերների, ընտանիքի և նրանց համար, ում վրա դուք ազդեցություն ունեք ձեր սեփական վարքագծով: Վարքագծից ծնվում է վարքագիծ: Անմեղ մարդկանց դեպքում դուք անմտածված կերպով նրանց կառաջնորդեք և ուղղություն կտաք, անգիտության հետևանքով, դեպի հավիտենական խավարի ուղին:

Խնամեք ձեր հոգին: Այն մի ընծա է Աստծուց տրված: Դա այն ամենն է, ինչ դուք ձեզ հետ կտանեք հաջորդ աշխարհ:

## Ուոքի ելեք Սատանայի հարձակումների դեմ

Չորեքշաբթի 20 ապրիլի 2011թ, երեկոյան Ժ5.45

Աղջիկս, քո հավատը մշտապես փորձության է ենթարկվում օրվա յուրաքանչյուր ժամի, երբ ուրիշների կողմից ճնշման են ենթարկվում վանել այս պատգամները: Դա միշտ տեղի կունենա: Ժամանակն է վարժվել այդ տառապանքին: Հիմա կարող ես վստահանալ, առավել քան երբեք, որ այս պատգամները վավերական են և գալիս են Ինձնից՝ մարդկության Աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Ինձ տխրեցնում է, երբ տեսնում եմ հավատացողների, հատկապես ազդված խաբեբայի կողմից, Իմ Ամենասուրբ Խոսքը հեռացնելիս, երբ այն ներկայացվում է աշխարհին վկայություն տալու համար:

Աղջիկս, հիմա դու առավել քան զորու ես արհամարհել հիմա այն ձայները, որոնք հայտարարում են, թե իրենք խոսում են Աստվածային ակունքներից իրենց տրված իրավասությամբ: Այսօր աշխարհում բազմաթիվ կեղծ մարգարեներ կան, որոնք այն չեն, ինչ հայտարարում են իրենց մասին: Միայն Իմ ձայնը լսիր, ինչպես Ես քեզ նախկինում ասել եմ: Քեզ պետք չեն ուրիշների հավանությունները, որ շարունակես այս աշխատանքը կատարել: Սրբազան պատգամների այս հատորները իրենց ժամանակին կերևան այնպիսին, ինչպիսին կան: Դու երբեք չպետք է գայթակղվես սխալ տեղեկացված հոգիների կողմից, թե սրանք աստվածային ոգեշնչմամբ չեն: Որովհետև դա այդպես չէ: Փակիր ստերի ճանապարհը, որոնք կտեղան քո ականջների վրա Խաբեբայի՝ Սատանայի կողմից: Նա, աղջիկս, ցանկանում է կանգնեցնել այս գործը, և ամեն ինչ կանի, որ կանխի քեզ:

Ուոքի կանգնիր հիմա և խոսիր Սուրբ Հոգու իրավասությամբ, որը հեղվել է քեզ վրա, Իմ թանկագին աղջիկ: Դու մի ընտյալ պատամատար ես, հանձնելու համար, ինչպես Ես ասել եմ, մարդկության համար իրենց ժամանակին տրվող ամենակարևոր պատգամները: Դու Ինձ այնքան ես ուրախացնում, երբ արիություն և ուժ ես ցույց տալիս Սատանայի կողմից կատարվող այն հարձակումներին, որոնք ստիպված ես լինում դիմագրավել: Հիշիր սակայն, որ դու պետք է ընդունես այս աշխատանքը քո կողմից ակնկալվող խոնարհությամբ: Հիմա ամեն օր ստացիր Ինձ քո հոգու մեջ լրացուցիչ

շնորհների համար: Ես սիրում եմ քեզ, աղջիկս: Երկինքը հրճվում է Իմ Ամենասուրբ Կամքին տված քո պատասխանի արագությունից:

Ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Պաշտպանեք քրիստոնեական կրթություն ստանալու ձեր զավակների իրավունքը**

Ավագ ուրբաթ 22 ապրիլի 2011թ

Իմ սիրելի աղջիկ, այսօր ժամանակն է, որ բոլոր նրանք, ովքեր հավատում եմ Խաչի վրա Իմ Զարչարանքին, օգնեն տանելու այն, որպեսզի Իմ Խոսքը կարողանա մեկ անգամ ևս լսվել աշխարհում: Հիշեցրեք նրանց, թե Ես ինչպես մահացա, և թե ինչու է Իմ մահը փրկություն նշանակում: Հիմա ձեր պարտականությունն է, տեղեկացնել նրանց, ովքեր մոլորվել են, որ նորից իրենց սրտերը բացեն Իմ ուսուցումների ճշմարտության հանդեպ:

Կանգնեք հիմա և պաշտպանեք քրիստոնյա լինելու ձեր իրավունքները: Մինչ Ես ձեր կողմից հանդուրժողականություն եմ ակնկալում՝ երբ պետք է հարգեք այլ հավատների տեսակետները, երբեք Ինձ մի վիրավորեք՝ դնելով ձեր քրիստոնյա լինելը մի կողմ՝ երկրորդ տեղում: Բավականին վտանգավոր վարդապետություն է, երբ շփոթում են հանդուրժողականությունը որպես ճշմարտությանը փոխարինող: Բաց եղեք այլ հավատների հանդեպ և հավասարապես վերաբերվեք ձեր եղբայրների ու քույրերի հետ: Այնուամենայնիվ երբեք մի մտածեք, թե ստիպված եք մի կողմ հրել ձեր հավատը, կամ զրկել ձեր երեխաներին քրիստոնեական կրթություն ստանալու իրավունքից: Քրիստոնեական կազմակերպությունների կողմից ղեկավարվող շատ դպրոցներ տեղի են տալիս ճնշմանը՝ ետ կանգնել Իմ հանդեպ իրենց ունեցած հավատարմությունից: Շատ կառավարություններ փորձում են արգելել քրիստոնեությունը և բարի լուրի տարածումը: Սակայն կտեսնեք, որ մյուս՝ ոչ քրիստոնեական կրոններին ավելի մեղմ են վերաբերվում: Դրա փոխարեն, ավելի շատ համակրանքով կվերաբերվեն ցանկացած կրոնի հանդեպ, քան քրիստոնեության:

Պայքարեք հիմա ձեր հավատի համար: Աղոթեք դարձի համար: Աղոթեք, որ այն բռնապետությունները, որոնք ճնշում են քրիստոնյա լինելու ձեր իրավունքը, ավելի շատ հանդուրժողականություն ցույց տան: Այդ ճնշումներին

դիմակայել չկարողանալու հետևանքը կլինի ամայի աշխարհը, որտեղ ավելի քիչ քրիստոնյաներ կգործադրեն իրենց հավատը:

Վերցրեք խաչն այսօրվանից և մյուսներին օրինակ ցույց տվեք: Երբեք մի ամաչեք Խաչից:

Ձեր սիրող Փրկիչ

## **Տվեք ձեր հավատարմության խոստումն Իմ Աստվածային Գթասրտությանը**

Ջատիկ Շաբաթ 23 Ապրիլ 2011, Ժ 16.40

Իմ սիրելի աղջիկ, իմ զավակները հիմա ուրախությամբ են նշում Իմ Հարությունը. Այս տարին կարևոր է, որովհետև այն նշում է լուսավորման նոր դարաշրջանի սկիզբը, որը շուտով կսկսվի աշխարհում:

Իմ Գթասրտության մեծ ընծան հսկայական օգնություն կբերի հավատացողներին, իսկ այն անհավատների մետ, որոնք դարձի կգան, կառաջացնի էֆորիայի վիճակ: Երբ նրանք հայտնաբերեն ճշմարտությունը, նրանց սիրտը կթեթևանա, և նրանք սիրով կլցվեն Աստծո՝ Հավիտենական Հոր և Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ: Նույնիսկ ոչ քրիստոնյաները կհասկանան Իմ գոյության ճշմարտությունը: Վերջապես սա կառաջացնի սիրո և ուրախության մի մեծ զգացողություն աշխարհում:

### **Նախազգուշացմանը պետք է հետևի աղոթքը**

Այնուամենայնիվ, կանոն է հիշել մի կարևոր դաս Նախազգուշացման մասին:

Այս մեծ իրադարձությանը, երբ դուք բոլորդ ոչ միայն կտեսնեք ձեր մեղքերն այնպես, ինչպես Ես եմ դրանք տեսնում, այլև կհասկանաք ճշմարտությունը հաջորդ կյանքի վերաբերյալ, պետք է հետևի աղոթքը:

Տխուր է, բայց շատերը դրանից հետո կընկնեն մեղքի մեջ: Հիմա է ժամանակը՝ նախապատրաստվելու համար այդ իրավիճակից խուսափելու՝ Իմ

**Աստվածային Գթասրտության** աղոթքը ձեր կյանքի ամեն օր աղօթելով: Այս հզոր աղոթքն ասելը սովորություն դարձնելով, դուք կպահպանեք ապաշխարության և հավատի այն մակարդակը, որոնք կմաքրեն աշխարհը իրենցից հետո:

Ուրախացեք, աղոթեք և շնորհակալություն հայտնեք Ինձ՝ ձեր Աստվածային Փրկչին այս մեծ գթասրտության համար: Ծնկի եկեք և փառք տվեք Աստծուն՝ Հորը, Իմ գոհաբերության ընծայի համար: Աղոթքը կօգնի նվազեցնել Նոր համաշխարհային կարգի գլոբալ դաշինքի կողմից սպասվող հալածանքները, որոնք կհետևեն:

Որքան զորեղ է Իմ Աստվածային Գթասրտությունը: Ձեզնից այնքան շատերը դեռևս չեն հասկանում դրա կարևորությունը: Շատերը, տխուր է, երբեք չեն լսել այդ մասին:

Բոլոր նրանց, ովքե հավատարիմ եմ Ինձ, Ես հիմա ձեզ մի հատուկ խնդրանք ունեմ: Ես չեմ ցանկանում Իմ զավակներից ոչ մեկին ոչնչացած տեսնել: Ահա թե ինչու է Նախագուշացումը տրվում ձեզ: Սա ձեզանից յուրաքանչյուրին ցույց կտա, ներառյալ ձեր մեղ եղած թերահավատներին, թե իրականում ինչ է տեղի ունենալու Վերջին Դատաստանի ժամանակ: Ուստի օգնեք Ինձ փրկելու յուրաքանչյուր հոգու: Ես ցանկանում եմ ձեր ընծայի գրավականը լինի՝ օգնել Ինձ հոգիներ նվաճելու:

Ստեղծեք **Աստվածային Գթասրտության** աղոթախմբեր աշխարհով մեկ և օգտագործեք այս աղոթքը ձեր ճանաչած յուրաքանչյուր անձի համար, ով հնարավոր է մահանա, քանի որ Ես երաշխավորում եմ նրանց փրկությունը, եթե դուք այդպես անեք: Հավաքեք հիմա Իմ ժողովրդին: Հետևեք ձեր Փրկչին: Աղոթեք ինչպես երբեք չեք աղոթել նախկինում, և այդ դեպքում ավելի շատ հոգիներ կփրկվեն: Հետո դուք բոլորդ կդառնաք այն նոր աշխարհի մի մասը, որը Ես ձեզ խոստացել եմ, երբ Երկինքն ու Երկիրը կմխրճվեն կդառնան մեկ: Այս փառահեղ ապագան ձեզ բոլորիդ համար է: Այս մեծ փոփոխությունից վախենալու փոխարեն, բացեք ձեր մտքերը, սրտերը և հոգիները առջևում պահված մեծ ուրախության հանդեպ: Միավորվելով որպես մի մեծ խումբ ողջ աշխարհով մեկ, յուրաքանչյուր երկրում, յուրաքանչյուր ընտանիքում, յուրաքանչյուր եկեղեցում և համայնքում, դուք մեծ տարբերություն կմտցնեք: Ձեր աղոթքները կօգնեն կանխել այն հալածանքների մեծ մասը, որը տեղի կունենա ինչպես կանխասացվել է: Ուստի Իմ՝ ձեր Միրող Փրկչի հանդեպ հարգանքից ելնելով, հետևեք Ինձ հիմա: Ես ապրում եմ ձեզանից յուրաքանչյուրի մեջ: Ես գիտեմ, թե ինչ կա ձեր սրտերի և հոգիների մեջ: Ձեր եղբայրների և քույրերի համար Ինձ տալով ձեր Գթասրտության գրավականը, դուք կստանաք հատուկ շնորհներ:

Ձեր Աստվածային Թագավոր Ողորմության եւ Արդար Դատավոր Հիսուս Քրիստոս

**Դարձի բերեք ուրիշներին յուրաքանչյուր  
հնարավորության դեպքում**

Զատիկի կիրակի 24 ապրիլի 2011թ, ժ 20.30 (երեկոյան 8.30)

Իմ սիրելի աղջիկ, այսօր նշանակալի է այն առումով, որ մեռածներից Իմ Բարձրանալու միջոցով կատարվեցին մարդուն տված Իմ խոստումները: Որ բարձրանալով, Ես կօգնեմ ձեզ բոլորիդ վեր բարձրանալ դեպի Երկնքի լույսը: Բարձրացեք հիմա դուք բոլորդ և եկեք դեպի Ինձ և դեպի ձեր սեփական փրկությունը:

Զավակներս, դուք պետք է դարձի բերեք մյուսներին յուրաքանչյուր հնարավորության դեպքում: Որքան ավելի շատ բացատրեք և ցույց տաք այդ թույլ հոգիներին ձեր սրտում եղած սերը, ապա վերջնական արդյունքը կլինի, երբ դարձի կբերեք մեկ այլ հոգու: Ես կողողեմ ձեզ մեծ օրհնություններով: Սա Իմ կողմից մի չափազանց յուրահաստուկ ընծա է, և ձեր կողմից ներկայացնում է մեծ գթասրտության մի գործողություն:

Դարձը, զավակներս, կփրկի հոգիների: Երբ դարձ է տեղի ունենում, այն հետո տարածվում է դարձի եկած մարդու ընկերների և ծանոթների վրա: Դարձը տարածում է դարձ: Կապ չունի, որ ձեզ վրա ծիծաղում են, կամ վարվում այնպես, ասես թե հիմարություն եք խոսում: Ձեր կողմից բվականին խիզախություն է պահանջվում, Իմ հավատարիմ հետևորդներ: Բայց ամեն անգամ, երբ կկանգնեք և կբացատրեք Իմ ուսուցումներն ուրիշներին, մարդիկ կլսեն: Մինչ ոմանք կժպտան ձեզ և այնպես կթվա թե լուրջ չեն ընդունում ձեր ասածը, խորը իրենց ներսում շատերը կլսեն այն, ինչ ունեք ասելու:

Երբ ձեր աշխատաքնի ընթացքում Սուրբ Հոգին աշխատում է ձեր միջոցով, ստացողներն իրենց սրտում ձգում կզգան: Սակայն նրանք չգիտեն, թե ինչու: Հետո դուք նրանց ավելի մոտ կբերեք:

Որոշ մարդիկ դանդաղ կլինեն արձագանքելու մեջ: Բայց համբերատար եղեք: Նրանք կսկսեն տեղի տալ աստիճանաբար: Սկզբում նրանք ձեզ կտան մի հարց: Սովորաբարսա կառնչվի այն բանին, թե ինչ-որ բան ճիշտ է, թե՞ սխալ: Այդ ժամանակ խոսակցությունը կսկսվի: Երբեք չթողնեք Իմ ուսուցման ճշմարտությունը տարածելը: Դա չպետք է արվի քարոզչի պես: Ավելի շուտ այն կարող է լինել չափազանց նուրբ: Դարձի բերեք ուրիշներին ձեր ամենօրյա կյանքում սովորական խոսակցության միջոցով: Այս դեպքում մարդիկ ավելի հարգալից կլինեն:

Զավակներս, այնուամենայնիվ, դուք կցնցվեք այլոց արձագանքից, հատկապես նրանց, ովքեր ապրում են մերժման և խավարի մեջ: Նրանց պատասխանը կլինի ագրեսիվ և ծաղրական տոնով: Ձեզ կհարցնեն, արդյո՞ք իսկապես հավատում եք այդպիսի անպետքության: Հետո ձեզ կհանդիմանեն և կվիրավորեն: Ձեր մտավոր կարողությունները կդրվեն հարցականի տակ: Ձեզ կմեղադրեն նրանում, որ շրջվեք ել դեպի կրոնը անձնական դժվարությունների

պատճառով: Երբեմն-երբեմն դուք ընկճված կզգաք ձեզ և կդժվարանաք  
պաշտպանվել: Այդպիսի իրադրություններում լուռ մնացեք: Հետո պարզապես  
ժամանակ առ ժամանակ հարցեր տվեք:

Հարցրեք այդպիսի հոգիներին. <<Ինչու՞ եք այդպես կարծում>>; Որքան իրենց  
հարցեր տաք, այնքան ավելի շատ նրանք կսկսեն գնահատել իրենց սեփական  
պատասխանները: Դուք բոլորին չեք համոզի ճշմարտության մեջ:  
Այնուամենայնիվ, ձեր կողմից արվող յուրաքանչյուր փորձ ձեզ վեր  
կբարձրացնի Իմ աչքում:

ԳԳնացեք հիմա, զավակներս: Դարձի բերեք Իմ անվամբ, և ձեզ վրա կհեղվեն  
շատ ու շատ շնորհներ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## Արաբական վերելքը կառաջացնի գլոբալ անհանգստություններ - Իտալիայից կսկսվի անկումը

Երեքշաբթի, 26 Ապրիլ 2011 ժ. 20.10 (8.10 PM)

Իմ սիրելի աղջիկ, Իմ արցունքները, որ Ես թափում եմ երկրի վրա բռնության և  
խոշտանգումների ենթարկվող բոլոր Իմ սիրելի զավակների համար, չեն  
վերջանում: Իմ խեղճ թանկագին զավակները աշխարհում ամենուր  
տառապում են, հատկապես արաբական աշխարհում: Որքան եմ Ես  
տառապում նրանց չարչարանքների համար: ԱՅդ խեղճ անօգնական  
հոգիների: Խնդրում եմ աղոթիր նրանց համար աղջիկս, առաջարկելով քո  
սեփական տառապանքները նրանց համար:

.....

Արաբական աշխարհում շարունակվող վայրագությունները կշարունակվեն,  
քանի որ ավելի շատ արաբական ազգեր կներգրավվեն մի շարք կոնֆլիկտների  
մեջ: Երեք սպանություններից մեկը, որոնց մասին Ես քեզ ասացի անցյալ  
Փետրվարին, շուտով տեղի կունենա: Արաբական աշխարհի վերելքը  
անուղղակիորեն անհանգստություն կառաջացնի աշխարհի յուրաքանչյուր  
անկյունում:

Իտալիան գործիք կդառնա այն անկմանը, որը առաջ կբերի գլոբալ ուժերի  
ներգրավմանը պատերազմի մեջ: Այս բոլոր իրադարձություններն  
անխուսափելի են, բայց աղոթքը կարող է թեթևացնել տառապանքը: Աղոթիր  
աղջիկս, որ մարդիկ դառնան դեպի Ինձ և Ինձնից օգնություն և ուղորդություն  
խնդրեն այս անհանգիստ ժամանակներում:



Ես չեմ ցանկանում տեսնել Իմ զավակներին տառապելիս: Բայց նրանք կտառապեն, մինչև ճշմարտությունը բացահայտվի Նախագգուշացման միջոցով: Աղոթիր հիմա սխալ ճանապարհով գնացող այն դիկտատորների համար, ովքեր սպանում են անմեղ հոգիների:

Ես կոչ եմ անում Իմ նվիրյալ ծառաներին աշխարհով մեկ ընդունել, որ Հայտնության Գրքում կանխասացված մարգարեությունները հիմա տեղի են ունենում: Տարածեք Իմ ուսուցումների ճշմարտությունը և փրկեք ձեր հոտը նախքան ժամանակը կլրանա: Գնացեք հիմա: Կատարեք Իմ հանդեպ ունեցած ձեր պարտականությունը: Ես կոչ եմ անում ձեզանից նրանց, ովքեր խեղդել են Իմ ուսուցումները, որ կանգ առնեք: Նայեք ձեր սրտերի մեջ և ասեք Իմ ժողովրդին ճշմարտությունը: Այն, որ նրանք չեն կարող և չեն փրկվի, մինչև իրենց մեղքերի համար թողություն չխնդրեն: Նրանք պետք է խոնարհվեն Իմ աչքում և խնդրեն Ինձնից ազատագրման պարգևը:

Դուք, Իմ թանկագին ծառաներ, հիմա պետք է կատարեք այն դերը,որի համար ընտրվել եք: Խիզախ եղեք: Քարոզեք ճշմարտությունը:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## Մարդիկ դժվարանում եմ Ինձ խնդրել որ ներեմ իրենց մեղքերը

Հինգշաբթի 28 ապրիլի 2011թ, ժ 23.30

Իմ սիրելի աղջիկ, սա քեզ համար մի բավականին արտասովոր ճամփորդություն էր այսքան կարճ ժամանակում: Ես հասկանում եմ, որ դու հոգնած ես հիմա; Այնուամենայնիվ, այն արգաթյունը, որով դու ստացար այս պատգամները և դրանք հրատարակվեցին այդքան շատ լեզուներով, արագորեն, ցույց է տալիս դրանց հրատապությունը: Մա նաև ցույց է տալիս ան աստվածային առաջնորդությունը, որն աշխատում է լավագույն ձևով:

Այս պատգամները, լի Իմ ուսուցումներով, իսկապես տրվում են՝ բացատրելու համար ձեր հոգին այս կյանքում նախապատրաստելու կարևորությունը, քանի դեռ կարող եք: Շատերը, երբ կարդում են այս պատգամները, հատկապես նրանք ովքեր քիչ հավատ ունեն Աստծո՝ Հավիտենական Հոր, կանհանգստանան: Շատերը դարձի կգան: Ումանք կվախենան այս երկրի վրա իրենց, իրենց ընտանիքների և ընկերների ապագայի համար: Խնդրում եմ ասա

նրանց, որ Ես իրենց սիրում եմ: Եթե բացեն իրենց միտքը, առաջին հերթին այն փաստի հանդեպ, որ Աստված իսկապես գոյություն ունի, ապա նրանք պատրաստ կլինեն երկրորդ փուլի համար: Այդ ժամանակ նրանք կսկսեն մտածել, թե ինչու պետք է տեղի ունենա այսպիսի հաղորդակցում: Ինչու՞ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո՝ Հավիտենական Հոր Որդին, պետք է այդպիսի արտակարգ քայլերի դիմի: Հետո նրանք կգան ակնհայտ եզրակացությանը: Դա այն պատճառով է, որ ես սիրում եմ ձեզանից ամեն մեկին և յուրաքանչյուրիդ, որ ես ցանկանում եմ փրկել ձեզ նորից: Ես ցանկանում եմ փայփայել ձեզ բոլորիդ և կգնամ ամենաարտասովոր ուղղություններով, որ ձեզ ավելի մոտեցնեմ Իմ սրտին:

Ես ցանկանում եմ դիպչել ձեզ ձեր սրտերի մեջ, որպեսզի ձեր հոգիներում մի լույս առկա՞ծի: Աշխարհում ոչ մի բանից պետք չէ վախենալ, եթե դուք ամբողջապես վստահում եք Ինձ: Ես հրաշալի ծրագրեր ունեմ ձեզ բոլորիդ համար, ովքեր մոտենում են Իմ Սուրբ Սրտին: Ամենաթանկագին ընծաներն են սպասվում ձեզ: Մի վախեցեք աշխարհի անհանգստությունից: Քանի որ Ես կապաշտպանեմ ձեզ բոլորիդ, ովքեր հավատում են Ինձ, և կապահովեմ ձեր մարմնական կարիքները: Վստահեք Ինձ՝ մարդկության Տիրոջը, որը մեկ անգամ ևս ուղարկվել է, որ փրկի ձեզ հավիտենական խավարից:

Շրջվեք դեպի Ինձ, ինչպես անմեղ երեխաները կվարվեին: Կարիք չկա աղոթքներ սովորելու, եթե անգրագետ եք: Այո, դրանք շատ օգտակար են և գորեղ, բայց Ես ձեզնից խնդրում եմ միայն որ Ինձ հետ խոսեք ինչպես կխոսեիք մի ընկերոջ հետ: Հանգստացեք: Վստահեք Ինձ: Խնդրեք Ինձնից Իմ օգնությունը: Իմ գթասրտությունն առատ է և դուրս է հորդում՝ սպասելով միայն որ հեղվի ձեզ վրա:

Եթե միայն հասկանալիք այն կարեկցանքը, որը Ես ունեմ երկրի վրա գտվող յուրաքանչյուր մարդու հանդեպ, նույնիսկ մեղավորների: Հասկանո՞ւմ եք, Իմ զավակներն Իմ զավակներն են նույնիսկ երբ մեղքը աղտոտում է նրանց հոգիները: Ես ասում եմ մեղքը, բայց սիրում եմ մարդուն Ձեզնից այնքան շատերն են վախենում Ինձնից կանոնավոր կերպով թողություն խնդրել: Բայց դուք երբեք չպետք է անհանգստանաք: Միշտ, եթե դուք ճշմարտապես ցավում եք, ներում կստանաք:

Մեղքը, զավակներս, ձեր կյանքում կլինի մշտական խնդիր: Նույնիսկ Իմ ամենանվիրված հետևորդները նորից ու նորից մեղանչում են: Դա փաստ է: Երբ Սատանան սանձազերծվեց երկրի վրա, մեղքը դարձավ համատարած: Շատերը չափազանց ամաչում են դեպի ինձ շրջվել: Նրանք խոնարհում են իրենց գլուխները և չտեսնելու են տալիս, երբ վատ են վարվում: Չափից դուրս հպարտ և շփոթված նրանք շարունակում են, ասես մեղքի մասին կմոռացվի: Նրանք չեն

հասկանում այն, որ խավարը ձգում է խավար: Ուստի երբ մեղք է գործում, ապա շատ ավելի հեշտ է դառնում նորից մեղք գործել Փակելով ձեր գիտակցությունը, այդ պտույտը նորից ու նորից կկրկնվի: Հետո մեղավորը ամեն պատճառաբանություն կբերի սխալ արարքն արդարացնելու համար: Նրանք կշարունակեն շրջապտույտի միջով ավելի ներքև ընկնել: Սա այն պատճառով է, որ նրանք չգիտեն, թե ինչպես թողություն խնդրեն: Որովհետև նրանք չեն հասկացել խոնարհության կարևորությունը, նրանք անհնար են համարում շրջվել դեպի Ինձ և խնդրել որ ներեմ իրենց:

Բարդ չէ, գիտեք, Ինձնից թողություն խնդրել: Երբեք Ինձնից մի վախեցեք: Ես սպասում եմ ձեզնից յուրաքանչյուրին, ով արիություն ունի արհամարհել իր սեփական մեղքերը: Երբ դա դարձնեք սովորություն, ձեզ կտրվեն յուրահատուկ ընծաներ: Ձեր մեղքերը խոստովանելուց հետո դուք կլինեք շնորհի վիճակում: Իսկ երբ ստանաք Սուրբ Հաղորդությունը, կզգաք ներս թափանցող մի էներգիա, որը կզարմացնի ձեզ: Միայն և միայն այդ ժամանակ կգտնեք ճշմարիտ խաղաղություն:

Ձեզ ոչինչ չի շփոթեցնի: Դուք ուժեղ կլինեք ոչ միայն հոգով: Ձեր միտքն ավելի հանգիստ կլինի և ավելի կառավարելի: Դուք կնայեք կյանքին տարբեր՝ ավելի դրական հայացքով: Ո՛վ չի ցանկանա այսպիսի կյանք:

Ետ եկեք Ինձ մոտ, զավակներս, աշխարհում վշտի այս ժամանակներում: Թույլ տվեք Ինձ ձեզ ցույց տալ այն ուրախությունը, որը ձերն է, երբ դուք դառնաք դեպի Ինձ: Հիշեք Ես ժամանակին տվեցի Իմ կյանքը ձեզ համար: Իմ սերը սահմաններ չունի: Ես կպատասխանեմ ձեր կանչին: Դուք միայն պետք է խնդրեք:

Ձեր թանկագին սիրող Փրկիչ  
Հիսուս Քրիստոս

## **Խոնարհությունն անհրաժեշտ է Երկինք մտնելու համար**

Ուրբաթ, 29 Ապրիլ 2011թ, ժ. 15.15

Իմ սիրելի աղջիկ, խոնարհությունը մի դաս է, որը պետք է սովորեն բոլոր նրանք, ովքեր ցանկանում են մտնել Իմ արքայություն:

Խոնարհությունը հայտարարում է ձեր փոքրությունը Իմ աչքում, ուր դուք պաշտում եք Ինձ՝ ձեր Փրկչին, Աստծո մարդեղացած Որդուն: Առանց դրա,

հպարտությունը կանգնում է ճանապարհին: Դրանից օգուտ չկա, եթե ցանկանում եք ինքներդ ձեզ հարմար հոչակել Իմ Թագավորության համար: Այսօրվա աշխարհում խոնարհությունն ընդունելի չէ մի դարաշրջանի համար, երբ ինքնքվստահությունն ու ինքներդ ձեզ ավելի լավը դարձնելու, մյուսներից առաջ անցնելու ցանկությունը համարվում է հիանալի բնավորության գիծ: Նրանց, ովքեր իրենք իրենց չեն բարձրացնում կամ առաջ չեն մղվում վստահությամբ ու ամբարտավանությամբ այս աշխարհում, արհամարհում են: Ուրիշների հանդեպ ունեցած խոնարհության և առատաձեռնության նրանց բնավորության գիծը համարվում է թուլություն, նրանց մասին չեն մտածում ներգրավել իրենց ընկերակցության մեջ: Չնայած դրան, հպարտությանը հակառակ արժանիքը Երկնքի Թագավորություն մտնելու բանալին է: Ուստի այն, ինչը համարվում է հաջող մոտեցում դեպի հարստության ու գանձերի հասնելու համար այս կյանքում, այն ճշգրիտ բանաձևն է, որը կտանի ձեզ դեպի խավարը մահից հետո: Խոնարհությունը, երբ պետք է ընդունեք, որ առաջին հերթին պետք է ծառայեք ձեր ստեղծողին և արարչին, այն է, ինչը կարևոր է: Հայտարարելով ձեր ոչնչությունը, դուք հոչակում եք Աստծո Փառքը: Խոնարհությունը մի արժանիք է, որը ոչ միայն թանկ է Իմ աչքում, այլև ձեր հոգևոր զարգացման մի կարևոր մասն է: Դա նշանակում է ուրիշներին դնել ձեզնից առաջ Աստծո Փառքի համար: Չնայած այնքան հեշտ է արագորեն ընկնել հպարտության վիճակի մեջ:

## **Նախազգուշացում ընտրված հոգիներին**

Վերցրեք նրանց, ովքեր շատ են աշխատել՝ զարգացնելու համար իրենց հոգևոր կյանքը, որ գոհացնեն Ինձ: Այնուհետև, այն բախտավոր հոգիներին, ում տրվել են ընծաներ, որ Սուրբ Հոգու գործությամբ լինեն որպես տեսանողներ աշխարհում: Շատ հաճախ, ստանալով այդ շնորհները, նրանք կամաց-կամց սկսում են իրենց ավելի հատուկ համարել, քան իրենց երդբայրերն ու քույրերը: Նրանք պարծենում են այն ընծաներով, որ ունեն: Հետո նրանք սկսում են ընտրել, թե ինչպես կիսեն այդ ընծաները: Այդ ժամանակն նրանց ինքնափառաբանումը վնասում է ճշմարտությունը տարածելու նրանց կարողությանը: Նրանք մոռանում են, որ իրենց ստացած բոլոր ընծաները Ինձնից են գալիս: Ես բոլորին եմ սիրում: Նրանց տրվում են այդ ընծաները, որ կիսեն ուրիշների հետ: Ճիշտ այնպես, ինչպես Ես տալիս եմ այդ ընծաները ընտրված հոգիներին այլոց բարօրության համար, նույն կերպ Ես կարող եմ դրանք ետ վերցնել:

Ինքնափառաբանումը խանգարում է ճշմարիտ հետևել Իմ քայլերին: Սովորեք խոնարհ լինել, համբերատար և հպարտությունից զուրկ: Եթե աշխատեք խոնարհության հասնելու ուղղությամբ, ձեզ կտրվի մի յուրահատուկ տեղ Իմ

Սրտի մեջ: Մինչ Ես ընտրում եմ առանձին մարդկանց որպես ընտրյալ հոգիների, նրանք պետք դա համարեն որպես ընծա: Նրանք երբեք չպետք է մտածեն, որ իրենք ավելի կարևոր են Իմ աչքում, քանի որ Ես սիրում եմ բոլորին: Սակայն Ես կպարգևատրեմ լավ արարքը, եթե Իմ և ձեր եղբայրների ու քույրերի հանդեպ խոնարհություն ցույց տրվի:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

.....

## Ամբողջ աշխարհում մարդիկ նույն գծերն ունեն

Շաբաթ 30 ապրիլի 2011թ, ժ20.45

Այս երեկո Ես ուրախանում եմ, աղջիկս, նրանով, թե ինչպես ես դու ենթարկվում Ինձ, աղջիկս: Քո ենթարկումը՝ ամեն օր պատարագի հաճախելը և Մուրբ Հաղորդություն ստանալը հաճելի է Ինձ: Հիմա դու մտքով և ոգով ավելի ուժեղ ես դառնում՝ արագորեն արձագանքելու համար Իմ Ամենասուրբ Կամքին: Դու դեռևս բավականին աշխատանք ունես անելու քո հոգին նախապատրաստելու համար, աղջիկս, այն կատարելությամբ, որը պահանջվում է քեզնից: Երբեք չվախենաս, որովհետև Ես առաջնորդում եմ քեզ ճանապարհի յուրաքանչյուր քայլի:

Աղջիկս, որքան եմ Ես սիրում մեղավորներին: Որքան եմ Ես փափագում Իմ հանդեպ նրանց նվիրվածությանը: Ես նայում եմ և տեսնում մարդկանց ընկերների և ընտանիքի հետ, ուրած ծիծաղով տանը, և Ես լցվում եմ ուրախությամբ, որովհետև Իմ հոգին ներկա է այնտեղ: Հետո Ես նայում եմ այլ տներից ներս և տեսնում խառնաշփոթություն, տխրություն, զայրույթ և որոշ դեպքերում չարիք՝ վիրավորանքի տեսքով: Եվ Ես լաց եմ լինում: Որովհետև գիտեմ, որ Սատանան ներկա է այդ տանը: Հետո Ես նայում և տեսնում եմ իրենց ամենօրյա կյանքում ուրիշների բարօրության համար իրար հետ աշխատող ընկերների խմբեր, և Ես գոհանում եմ: Ես հետո նայում եմ ուրիշ խմբերի, որոնք տենդագին աշխատում են իրենց բարօրության համար՝ միայն մեկ նպատակ ունենալով. կուտակել իշխանության և հարստության մեծ քանակություն: Նրանց բոլոր գործողություններն ունեն մեկ նպատակ. Իրենք իրենց հոգ տանելու: Եվ սա սովորաբար այլոց հաշվին: Հետո Ես ողբում եմ, որովհետև գիտեմ, որ նրանք խավարի մեջ են: Իսկ հետո Ես զարմանքով դիտում եմ ինտելիգենտ կրթված խմբերին, ովքեր ցանկանում են համոզել աշխարհին, որ Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, գոյություն չունի: Նրանք խոսում են վերամբարձ ձևով և ներկայացնում կեղծ փաստարկներ, մինչ գոռազամտությամբ մերժում են նաև Ինձ: Որպեսզի հետո տեսնեմ

հավատացողների, գաղջ հավատով, թե ինչպես են նրանք ներքաշվում դեպի խավախ այդ որջը, որը կոտորում է Իմ սիրտը: Այնքան շատ ու շատ խմբեր հակադիր շահերով, խնդիրներով, նպատակներով: Տխուր է, բայց շատ քչերն են ժամանակ տրամադրում Աստծո՝ Հավիտենական Հոր հետ հաղորդակցվելու վրա:

Հավատը լքել է բազմաթիվ միլիոնավոր մարդկանց այսօր աշխարհում: Արդյունքն այն է, որ շատերը շփոթված են զգում, չգիտեն ինչ նպատակներ հետապնդել, ոչ էլ առաջնորդություն են խնդրում Ինձ նվիրված սպասավորներից:

Խառնաշփոթության այս հորձանուտը կշարունակվի այնքան, մինչև Իմ զավակները կանչեն Ինձ օգնության: Աղոթեք ամենուր գտնվող Իմ բոլոր զավակների համար: Նայեք ձեր շուրջը և կտեսնեք, որ ամբողջ աշխարհում մարդիկ նույնն են: Նրանք կարող են լինել տարբեր ազգություններից, խոսել տարբեր լեզուներով և ունենալ մաշկի տարբեր գույներ: Այնուամենայնիվ, նրանք ունեն միանման գծեր: Ումանք երջանիկ են, ումանք տանջվում են, մյուսները լի են սիրով, մինչդեռ մյուսները բարկացկոտ և կռախտ են: Մարդկանց մեծ մասն ունեն հումորի զգացում և զգում են դա իրենց կյանքի որոշակի փուլում: Ուստի, եթե նայեք ձեր սեփական ընտանիքին և ընկերներին, կտեսնեք այդ նույն նմանությունները:

Ուստի, եթե զգում եք աղոթելու անհրաժեշտությունը ձեր ամենամոտիկների համար, այդ դեպքում Ես կոչ եմ անում ձեզ ի նկատի ունենալ աշխարհի յուրաքանչյուր անկյունում ձեր եղբայրներին ու քույրերին: Դուք բոլորդ Իմ զավակներն եք: Աղոթելով **Աստվածային Գթասրտությունը** աշխարհում ամենուր գտնվող Իմ բոլոր զավակների համար, դուք Իմ հետևորդներ, կարող եք փրկել մարդկությունը Դժոխքի խավարից: Այս աղոթքի ուժը կերաշխավորի որ Իմ Գթասրտությունը կծածկի յուրաքանչյուրին աշխարհում:

Թույլ տվեք Ինձ ձեզ բոլորիդ տանել դեպի Իմ Դրախտը: Թույլ մի տվեք որ Ես տառապեմ, եթե ձեզնից որևէ մեկին թողնեմ Սատանայի ձեռքերի մեջ:

Աղոթեք, աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը ցերեկվա ժամը 3-ին ամեն օր, և դուք կարող եք փրկել աշխարհը:

Ձեր միշտ Գթառաստ Հիսուս Քրիստոս

**Ռուսաստանը եւ Չինաստանը պառակտում  
կառաջացնեն**

Կիրակի 1 մայիսի 2011, ժ. 21.00

Իմ սիրելի աղջիկ, պատմել աշխարհին, որ հիմա նախապատրաստական աշխատանքներ են ընթանում այժմ պատրաստելու հոգիներին երկրի վրա Նոր Դրախտի համար, որը Ես խոստացել եմ:

Երկիր Իմ Երկրորդ Գալուստի օրը տրված չէ ձեզ իմանալ: Սակայն վստահ եղիր, որ Իմ խոստումները միշտ կկատարվեն: Ոչ ոք չի կարող կանգնեցնել մարդկությանը փրկելու Իմ Գթասրտության մեծ Գործից: Սատանան չունի այդ ուժը: Նա, Խաբեբան, պետք է ոչնչավի, աղջիկս, և չի կարող գոյատևել: Հիմա նրա ժամանակը շատ քիչ է: Ես նախագուշացնում եմ բոլոր նրանց, ովքեր հետևում են Սատանային մեղքի միջոցով, որ շատ քիչ առիթներ են մնացել նրանց համար, որ ազատեն իրենց: Նրանք պետք է շրջվեն մեղքից, եթե ցանկանում են փրկվել: Իմ հետևորդներից նրանք, ովքեր ունեն մեղքի ճանապարհով գնացող ընտանիքի անդամներ կամ ընկերներ, ապա ձեր պարտականությունն է փորձել բացել նրանց աչքերը ճշմարտության հանդեպ:

### **Պատրաստվեք հիմա խուսափելու Գազանի Նշանը ընդունելուց**

Հիմա երկրի վրա և երկնքում շատ իրադարձություններ են պատրաստ տեղի ունենալու, որոնք կփոխեն պատմության ընթացքը: Նախապատրաստվեք բոլորդ այս ընթացքում: Ես նախկինում ասել եմ, որ փողը կպակասի, ուստի խնդրում եմ փորձեք նախապատրաստել ձեր ընտանիքներին գոյատևման համար, որպեսզի ստիպված չլինեք ընդունել (Գազանի) Նշանը: Խնդրում եմ մի անտեսեք Իմ աղերսանքները:

Աղոթախմբերը կենսական անհրաժեշտություն են հիմա՝ ձեզ պաշտպանելու և աշխարհը փրկելու գլոբալ քաղաքական, բանկային և այսպես կոչված մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունների հալածանքներից: Նրանց նպատակը մեկն է. ձեզ վրա իշխանություն և վերահսկողություն հաստատելը, զավակներս, չնայած ձեզանից շատերը չեն կարողանում սա տեսնել: Բայց ժամանակի ընթացքում կտեսնեք: Եվ այդ ժամանակը մոտ է: Սկսեք նախապատրաստվել ձեր հետագա գոյատևման համար հիմա և շարունակեք աղոթել, քանի որ Ես ձեզ բոլորիդ կառաջարկեմ պաշտպանության Իմ հատուկ շնորհը: Խնդրում եմ չվախենալ, քանի որ միակ բանը, որ իսկապես արժեք կունենա, դա ձեր հավատարմությունն է Իմ հանդեպ:

Մինչ Համաշխարհային մեկ կարգը վերահսկողություն է վերցնում Միջին արևելքի հանդեպ, դուք կսարսափեք, թե որքան շատ երկրներ են նրա վերահսկողության տակ: Որքան անմեղ հոգիներ կհավատան, թե այդ նոր բռնապետությունները իրենց ազատություն կառաջարկեն: Բայց դա այդպես չի լինի:

.....

## **Ռուսաստանը եւ Չինաստանը պառակտում կառաջացնեն**

:Ուշադրություն դարձրու հիմա, որ Ռուսաստանը և Չինաստանը կլինեն երրորդ կողմը, որ պառակտում կառաջացնի: Շատ շուտով ձեզանից նրանք, ովքեր իրենց երկրների վերահսկողությունը հանձնել են այդ անդամ խմբերին, որոնք ձեզ հետ վարվում են ինչպես խամաճիկների, կտեսնեն այն չարաքաստիկ խմբերը, որոնք այդ քաղաքական ուժերը (ոչ թե Աստված) կփորձեն թելադրել ձեզ, թե ինչպես ապրեք: Պաշտպանեք ինքներդ ձեզ աղոթքի միջոցով: Ամեն օր և ամեն ժամ Ես կթեթևացնեմ ձեր տառապանքները: Ստացեք Ինձ Սուրբ Հաղորդության մեջ և կստանաք ուժ, որը կպահի ձեզ ծայրահեղ մակարդկներում հետապնդման ժամանակ:

Ես, Հիսուս Քրիստոսը, չեմ ցանկանում ցավ պատճառել ձեզ ձեր կյանքում: Բայց Ես չեմ կարող կողքի կանգնել և չնախագգուշացնել ձեզ այս իրադարձությունների մասին: Իմ Գթասրտությունից ելնելով Ես ձեզ տալիս եմ հնարավորություն նախապատրաստվել ոչ միայն ձեր հոգևոր բարօրության, այլև ձեր ընտանիքների կենսաապահովման համար: Նշանից խուսափելու համար խնդրում եմ հանգամանորեն նախապատրաստվեք: Նախագգուշացումը, անպայման, կթեթևացնի այդ հետապնդումը, որովհետև շատերը դարձի կգան: Աղոթեք, աղոթեք հիմա բոլորդ գլոբալ դարձի համար, և նվազեցնելու համար ցանկացած չարչարանք, որը տեղի կունենա հակաքրիստոսի և կեղծ մարգարեի կառավարման ընթացքում:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Սատանան կործանում և ավերում է տարածում աշխարհում, սակայն նրա օրերը կարճ են հիմա**

Չորեքշաբթի 4 Մայիս 2001թ, ժ. 20.45

Իմ սիրելի աղջիկ, շտապ անհրաժեշտ է, որ աշխարհը և նրանք, ովքեր քնած են Իմ ուսուցումների ճշմարտության հանդեպ, պետք է լսեն Իմ Սուրբ Խոսքը: Մինչ խառնաշփոթությունը կշարունակի աճել աշխարհում, դուք հիմա պետք է կանգ առնեք և մտածեք Սուրբ Գրքերի մասին, թե ինչ է ձեզ ասվել այն փոփոխությունների մասին, որոնց դուք ականատես կլինեք երկրի վրա, եթե մեղքը շարունակվի:

Նունիսկ ձեզանից նրանք, ովքեր կասկածում են Աստծո՝ Հավիտենական Հոր, կամ Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի գոյությանը, կտեսնեք մեղքը, որն ամեն օր գործվում է ձեր աչքերի առջև: Անկախ նրանից, դա կլինի ձեր ամենօրյա իրադարձությունների ընթացքում, լրագրերում, հեռուստատեսությամբ կամ



ինտերնետում, այն դժվար կլինի անտեսել: Նույնիսկ ձեզանից նրանք, ովքեր հանդուրժող են մեղքի ընդունման մեջ, ցնցված են անբարոյականության այն աստիճանից, որին ստիպված եք ականատես լինել:

Ի՞նչ եք տեսնում: Ի՞նչն է ամենից շատ ձեզ շոկ պատճառում: Այն թունոտ բռնությունը, որին մեկուսի ականատես եք լինում հեռուստատեսությամբ ձեր սեփական տան համարավետության մեջ մստած: Սպանությունն է՝ ըր, որոնք կատարվում են կառավարությունների կողմից և նրանց թողտվությամբ արդարության անունով: Թե լկտի պոռնոգրաֆիայի կողմից ցուցադրվող փչացածությունը, որը ներկայացվում է որպես արվեստ: Իրավական համակարգի ետևում թաքնված խաբեբա կեղծարարների կողմից հռչակվող ստե՞րն են, ուր նրանք կարող են գնել իրենց ազատությունը պատժվելուց: Գուցե դա մարդու կողմից փողոցում հանդիպած անծանոթի հանդեպ տատած ատելությունն է: Շարքային քաղաքացիների կողմից իրենց սեփական կառավարությունների հանդեպ տածած սարսա՞փն է: Հիմա այնքան շատ վիարվորանքներ են հասցվում Մովսեսի Օրենքներին, Պատվիրաններին, որ անհնարին է ընկալել դրանք միանգամից:

Օրենքը և կարգը անհետացել են: Հարևանի հանդեպ ցուցաբերվող սերը և առատաձեռնությունը արագորեն անհետանում են: Նույնիսկ Իմ այն հավատարիմ ծառաները, ովքեր գործում են հանուն Աստծո, այլևս չեն առաջնորդում իրենց հոտը:

Այս քառսը ստեղծված է Խաբեության Թագավորի՝ Սատանայի, Չարի կողմից: Նրա, ով ամեն ինչ անում է իր իսկությունը մարդկությունից թաքցնելու համար: Մի վախկոտ, նա աշխատում է, օգտագործելով իր գրավելու ուժերը: Չսխալվեք, քանի որ նա ունի ուժեր, որոնք օգտագործում է մարդկությանը ոչնչացնելու համար: Նա մարդկանց շրջում է մեկը մյուսի դեմ, եղբորը՝ եղբոր դեմ, հարևանի՝ հարևանի: Եվ այս ամենը մեկ նպատակի համար, որպեսզի արագորեն կործանում տարածի, այնքան կարճ ժամանակում, որքան կարող է: Նա երբեք չի դադարի ձեզ տանջելուց, զավակներս: Տեսեք նրա իրականությունը: Ընդունեք նրա գոյությունը: Չհավատացողների համար, միայն այն ժամանակ, երբ նրանք վերջանականապես կհասկանան Սատանայի գոյության իրականությունը, ճշմարտությունը կհասնի նրանց: Այն է, որ Աստված՝ Հավիտենական Հայրը, իսկապես գոյություն ունի:

Պարզապես հիշեք, որ Սատանայի օրերը հաշված են: Թույլ մի տվեք նրան հաղթել: Աղոթեք բոլոր նրանց համար աշխարհում, որ չընկնեն ատելության թակարդի մեջ, որը Սատանան դնում է Աստծո զավակներին խաբելու համար: Նա անում է դա ոչ միայն ձեր հանդեպ ունեցած իր ատելության պատճառով, զավակներս, այլևս այն ատելության, որը նա տածում է Իմ՝ Հիսուս Քրիստոսի և Իմ Հավիտենական Հոր հանդեպ: Նա չի հանգստանա մինչև չհասցնի առավելագույն վնասը:

Աղոթեք, աղոթեք, աղոթեք, որ նրա ուժը նվազի: Հատկապես աղոթեք **Սուրբ Վարդարանը**, քանի որ այդ աղոթքն է, որ կձգմի Սատանային:

.....

Երբ Ես վերադառնամ երկիր, հիշեք, որ միայն մի ճանապարհ կլինի դեպի  
հավիտենություն տանող, և դրանով դուք պետք է քայլեք դեպի Ինձ:

Ձեր սիրելի Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Իմ խաչելության դաժանությունները չեն բացահայտվել մարդկանց այնպես, ինչպես պետք է**

Շաբաթ 7 մայիսի 2010թ առավոտյան Ժ 9.50

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է հիմա վերցնես Իմ խաչը և օգնես Ինձ տանել այն  
այն ճանապարհով, որը Ես գծել եմ քեզ համար: Իմ թանկագին աղջիկ, որքան  
ես դու տառապել այս անցած մի քանի շաբաթների ընթացքում: Ես թույլ տվեցի  
որ դա տեղի ունենա, որովհետև այն քեզ ավելի է մոտեցրել Իմ Սուրբ Սրտին:

Շատ հոգիներ են կանչվում հանձնելու համար Իմ պատգամներն աշխարհին:  
Միայն հոգու կողմից կամավոր մաքրագործման միջոցով կորոշվի  
զանազանման որակը: Այլ խոսքերով, եթե Իմ խոսքը հաղորդելու համար Իմ  
ընտրած հոգին մաքուր է, այդ դեպքում պատգամներն ավելի շատ  
ազդեցություն կունենան: Նրանք ավելի երկարատև ազդեցություն կունենան  
հոգու վրա: Նրանք կլինեն կարեկցանքով լի, սակայն կբացահայտեն Իմ  
ուսուցումների ճշմարտությունն իրենց բնական տարբերակով:

Ես ժամանակ չունեմ մարդու կողմից ակնկալվող նրբությունների համար, ով  
սովորել է լսել Իմ խոսքը մի որոշակի ձևով՝ համրացված տարբերակով:  
Նույնիսկ խաչի Իմ տառապանքը և Իմ խաչելության ժամանակ մարդու կողմից  
կատարված վայրագությունները չեն բացահայտվել աշխարհին այն ձևով,  
ինչպես պետք է: Այնքան քչերն են ձեզանից, զավակներս, հասկանում մարդու  
ձեռքով Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ սարսափելի վերաբուրմունքը:  
Իմ հանդեպ այդ վերաբերմունքն այսօր, երբ Ինձ ծաղրում են, ծիծաղում,  
անիծում, արհամարհում և մեղադրում, դեռևս ակնհայտ է: Իմ մահը հարթեց  
ճանապարհը՝ փրկելու համար ձեր հոգիները հավիտենական  
դատապարտությունից: Սա է դեռևս փաստը: Մի կողմ մի նետեք փրկության  
ընծան, քանի որ առանց ճշմարտությունն ընդունելու դուք չեք կարող փրկվել:

Լսեք: Ես ճշմարտությունն եմ: Ես ձեր փրկության բանալին եմ: Ձեր մահվան  
մահճում, նույնիսկ եթե արհամարհել եք Ինձ, Իմ ուսուցումները, մերժել եք Իմ

խակական գոյությունը, շրջվեք դեպի Ինձ և ազատագրում խնդրեք: Երբեք չափազանց ուշ չէ շրջվել դեպի Ինձ և խնդրել որ բռնեմ ձեր ձեռքն ու թույլ տալ առաջնորդելու ձեզ դեպի Իմ Հոր Երկնային Թագավորություն: Բայց դուք սա կարող եք անել միան երբ դեռես կենդանի եք այս երկրի վրա: Սա ձեր միակ հնարավորությունն է հավիտենական կյանք ստանալու համար: Դրանից հետո չափազանց ուշ կլինի:

Ձեր սիրող Աստվածային Փրկիչ  
Հիսուս Քրիստոս

## Սուրբ Հոգին հիմա դուրս է հեղվել ողջ աշխարհի վրա

Երեքշաբթի 10 Մայիսի 2011թ, ժ. 16.00

Աղջիկս, ասա աշխարհին որ այսօր տեղի է ունեցել գթասրտության մի գործ. Սուրբ Հոգին, Իմ զավակներին տրված ամենամեծ ընծաներից մեկը, դուրս է հեղվել ողջ աշխարհի վրա: Այս ընծան էական է՝ օգնելու համար մարդկությանը նախապատրաստվել Նախագգուշացման համար: Իմ նվիրյալ ծառաները և հետևորդները, լցված Սուրբ Հոգու գործությամբ, կհզորացվեն Իմ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ ունեցած իրենց սիրո մեջ:

Կյանքի այս ընծան նոր լիցք կբերի ձեր տանջված գաղջ հոգիներին, որոնք հուսահատորեն ճչում են լուսավորման համար: Սա կանխասացվել է, և բոլորը, ներառյալ ամենակոպտացած մեղավորները, դրանից օգուտ կստանան:

Իմ Գթասրտությունը, ինչպես արդեն ասել եմ, սահման չունի: Դուք, Իմ բոլոր հետևորդներ ամենուր, այժմ լցված լույսի և սրբության Հոգով, պետք է հիմա քաջ լինեք և հայտարարեք Իմ խոսքը բոլորին, ում հետ շփվում եք: Բանի տեղ մի դրեք արհամարհանքը, որ կզգաք, քանի որ հիմա չափազանց կարևոր է չարհամարհել՝ Ապաշխարության Իմ խնդրանքները:

Լսեք հի աս Իմ աղոթքը, որ ձեզ տա այն խիզախությունը, որի կարիքն ունեք.

*<<Լցրու ինձ հիմա, ով Տեր, Սուրբ Հոգու ընծայով, որ տանեմ Քո Ամենասուրբ Խոսքը մեղավորներին, որոնց ես պետք է օգնեմ փրկվել Քո անվամբ: Օգնիր ինձ ծածկել նրանց, իմ աղոթքների միջոցով, Քո թանկարժեք արյամբ, որպեսզի նրանք բերվեն դեպի Քո Սուրբ Միրտը: Տուր ինձ Սուրբ Հոգու ընծան, որպեսզի այդ խեղճ հոգիները կարողանան զվարճանալ Քո Նոր Դրախտի մեջ>>:*

Ասեք այս աղոթքը ամեն օր Իմ Աստվածային Գթասրտության աղոթքից հետո և Իմ հանդեպ ձեր ունեցած հավատարմության միջոցով դուք կօգնեք փրկվելու Իմ զավակներին:

Փրկէք Ինձ այն տառապանքից, որով Իմ սիրտը տանջվում է, մինչ Ես մեծ ցավով նայում եմ, թե ինպես են այսօր աշխարհում ընդունում Իմ Սուրբ Անունը: Չբավարարվելով Ինձ մերժելուց, շատ ու շատ հոգիներ զայրույթով են արձագանքում, երբ դուք, Իմ թանկագին հետևորդներ, համարձակվում եք սոսկ նշել, թե Ես ինչին եմ կողմ: Նրանք չափազանց բարկացած են, որովհետև Խաբեքան այնքան խելամտորեն է շրջում նրանց մտքերը՝ շրջվելու ճշմարտությունից: Օգնեք այդ հոգիներին դուք բոլորդ: Աղոթեք և խնդրեք հիմա Ինձ այն գործությունը, որի կարիքը կունենաք այս գործում:

## **Հատուկ շնորհներ նրանց համար, ովքեր ապաշխարություն են տարածում**

Բոլոր նրանց համար, ովքեր ապաշխարություն են տարածում, ձեզ կտրվեն յուրահատուկ շնորհներ և ձեզ համար մի հատուկ տեղ կպահվի Իմ Հոր Թագավորության մեջ: Գնացեք հիմա և թույլ տվեք Սուրբ Հոգուն հեղեղել ձեր հոգիները, որ օգնեք Ինձ փրկելու մարդկությանը:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ձեզանից յուրաքանչյուրն իր տեղն ունի Իմ Սուրբ Սրտի մեջ: Ձեզանից ոչ մեկը, ներառյալ մեղավորները, դուրս չի թողնվի հոգիներ փրկելու Իմ մարտից:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս  
Թագավոր Ողորմության

**Ծանոթագրություն:** Վերջնական մեկնաբանություններ մեր Տեր Հիսուս Քրիստոսից՝ տրված տեսանողուհուն այս պատգամի վերջում:

*«Աղջիկս, այս իրադարձությունը կարելու է. Այն կփրկի բազմաթիվ հոգիներ նախքան Նախագգուշացումը տեղի կունենա և դրանից հետո կշարունակի լինել աշխարհում, որպեսզի օգնի կանխելու մեղավորների անկումը:*

*Սա կանխասացվել է, աղջիկս, և մեծ նորություն է ներկայացնում: Բայց Իմ հետևորդները պետք է շատ աշխատեն հիմա՝ Ինձ օգնելու հաղթել հոգիների համար մղվող Մարտում>>:*

## **Պատգամ Կույս Մարիամից սրբերի պահպանության վերաբերյալ**

Չորեքշաբթի 11 մայիսի 2011թ, ժ 22.30

Զավակս, հիմա դու շատ ավելի մոտ ես Իմ թանկագին Որդու Սրտին: Քո անցած ճանապարհը դժվար է եղել, սակայն այն կատարվեց այնպիսի կարճ ժամանակում: Հայր Աստծո հրամանով էր, որ Ես ուղարկվեցի քեզ հետ հաղորդակցվելու՝ այս աշխատանքին քեզ կանչված լինելու համար: Դու անմիջապես պատասխանեցիր: Դու երբեք չտատանվեցիր: Քանի որ դա է այն սիրո գործությունը, որը դու ունես Իմ՝ քո Օրհնյալ Մոր հանդեպ: Ես քեզ ուղղություն եմ տվել և զգուշորեն առաջնորդել այս հատուկ կանչի միջոցով: Խնդրում եմ շարունակիր դիմել Ինձ՝ քո Օրհնյալ Մորը, առաջնորդության համար, ամեն օր: Բոլոր հրեշտակները դեռևս քայլում են քեզ հետ, բայց դու չգիտես դա: Դու պետք է կանչես սուրբ Բենեդիկտին, սուրբ Հովսեփին, Հովհաննես Ավետարանչին, սուրբ Ավգուստինին և Միքայել հրեշտակապետին, որ քեզ տան այն օգնությունը, որի կարիքը կունենաս: Դու հիմա այնքան ուժեղ ես զավակս, որ մտածում ես, թե ինչն է դրա պատճառը: Իմ Միբեյի Որդու հանդեպ քո հնազանդությունն է, որ հիմա դու ստանում ես այս աստվածային հոգևոր առաքելության համար անհրաժեշտ շնորհները, որի համար ընտրվել ես:

Ամեն օր Իմ **Ամենասուրբ Վարդապանն** աղոթելը կարևոր է, քանի որ այն կպահպանի քեզ Չարից: Սուրբ Բենեդիկտը նշանակվել է քո կողքին, որ միշտ պաշտպանի քեզ Խաբեբայի հարձակումներից: Ահա թե ինչու դու պահպանվել ես ամենավատ հարձակումներից: Աղոթիր նրան, զավակս, ամեն օր իր մշտական պաշտպանության համար:

Ընդունիր այն տառապանքը, որը քեզանից պահանջում է Իմ թանկագին Որդին՝ Հիսուս Քրիստոսը, քանի որ այն կփրկի անհամար հոգիների: Քո ազատ կամքի յուրահատուկ նվերը՝ Նրան, կկանխի միլիոնավորների մուտքը դժոխքի դարպասների մեջ: Շարունակ հիշիր, թե ինչի է հասցնում քո տառապանքը և թե դրա հետևանքը (հոգիների փրկությունը) ինչպիսի ուրախություն այն կբերի Իմ Որդու Սուրբ Սրտին:

Հիմա դու զգում ես Իմ Որդու հետ միության մեջ լինելու յուրահատուկ ընծան: Որքան ամբողջությամբ դու հանձնվես, ցույց տաս խոնարհություն և գործես, այնքան ավելի շատ կօգնես նրան այս առաջադրանքում, որն այնքան կարևոր է Նրա համար:

Շնորհակալ եղիր զավակս, որ քեզ խնդրել են կատարել այս սրբազան աշխատանքը, քանի որ առանց դրա միլիոնավոր հոգիներ չէին կարողանա փրկվել:

Հիմա ավելի մոտեցիր Իմ սրտին և թույլ տուր Ինձ քեզ ավելի մոտ պահել Իմ Որդուն: Ես կպաշտպանեմ և կառաջնորդեմ քեզ միշտ:

Ձեր սիրող Մայր

Խաղաղության Թագուհի

## **Այսօր Եվրոպայում տեղի է ունեցել երկրաշարժ, ինչպես կանխասացվել էր**

11 Մայիս 2011, ժ.23.00

Իմ սիրելի աղջիկ, այսօր Եվրոպայում, Իսպանիայում տեղի ունեցավ այն երկրաշարժը, որի մասին Ես քեզ ասել եմ: Կհետևեն այլ էկոլոգիական դեպքեր, ներառյալ հրաբուխ, ջրհեղեղներ և տաքության ալիք: Հետևիր այդ իրադարձություններին, քանի որ երբ դրանք տեղի ունենան, կապացուցեն, որ այս պատգամները գալիս են Ինձնից՝ Հիսուս Բրիստոսից:

Սա, աղջիկս, Իմ Հոր Ձեռքն է, որը հիմա պատրաստ է իջնելու աշխարհի վրա, օգնելու համար արմատախիլ անելու մեղքը: Աղոթիր և շարունակիր աղոթել, որ ավելի շատ դարձի եկողներ ինձ, այդ աղետները նվազեցնելու համար:

Իմ Սիրելի Մայրը այս երեկո քեզ մի շարք կարևոր բաներ բացատրեց: Ամենօրյա աղոթքը և պաշտամունքը կարևոր է, որքան հնարավոր է, քանի որ դա հսկայական ազդեցություն կունենա քեզ վրա աաղջիկս, քո աշխատանքում:

Հանգստացիր հիմա. Դու հոգնած ես: Ես կխոսեմ ձեզ հետ վաղը. Գնա խաղաղությամբ:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Բրիստոս

## **Ինչու է Աստված, Հավերժական Հայրը, երկիր ուղարկում նոր մարգարեներ**

Ուրբաթ 13 Մայիս 2011, ժ. 22.45

Իմ սիրելի աղջիկ, նրանց համար, ովքեր կասկածում են, հատկապես Իմ նվիրաբերված ծառաները, ովքեր կարող է բաց թողնեն այս պատգամների միջոցով տրվող Իմ խոսքը, ահա թե Ես ինչ եմ ուզում ասել նրանց. Ավելացրեք ձեր հավատը Իմ հանդեպ, ընդունելով, որ Իմ խոսքը տրվեց աշխարհին ոչ միայն երկրի վրա Իմ գտնվելու ժամանակ, այլև դրանից հետո՝ Սուրբ Հոգու գործության միջոցով:

Ժամանակների սկզբից ի վեր, Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, հաղորդակցվել է մարդկության հետ մարգարեների միջոցով: Այս կերպ ճշմարտության ուսուցումները հայտնի են դարձվել մարդկանց, որպեսզի նրանց հավատը ուժեղ մնա: Այլ հայտնություններ և դասեր տրվել են մարդկությանը նաև Առաքյալների միջոցով, այլ նվիրյալ առաքյալների և Հովհաննես Ավետարանիչ (John the Evangelist) մարգարեի միջոցով: Դրանից հետո Իմ խոսքը, Իմ ուսուցումները և այն ամենն, ինչ մարդկանց անհրաժեշտ էր նրանց փրկության բերելու համար, կարգին էր: Այժմ, երբ աշխարհը կանգնած է իր պատմության ամենամեծ փոփոխության առաջ, Աստված՝ Իմ Հավիտենական Հայրը, նոր մարգարեներ է ուղարկել աշխարհ: Այդ մարգարեները չեն սխալվում, ձեզ նոր ուսուցումներ չեն բերում, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա: Նրանք ուղարկվում են երեք պատճառներով: Առաջինը, որ մարդկությանը հիշեցնեն Հայտնության Գրքի ճշմարտությունը: Երկրորդը, մարդկանց զգոն դարձնեն այն ժամանակների հանդեպ, որոնցում նրաք ապրում են հիմա, որպեսզի կարողանան վերավառել իրենց հավատը: Երրորդը, օգնեն դարձի տարածմանը, որպեսզի Իմ հետևորդները կարողանան կազմել այն ամենամեծ բանակը, հոգիներ փրկելու համար: Ես հաղորդակցվում եմ այս և ուրիշ մարգարեների միջոցով, որպեսզի Իմ խոսքը լսվի աշխարհի բոլոր անկյուններում:

### **Հիշեք Իմ բացարձակ Մերը եւ կարեկցանքը**

Ուշադիր լսեք այս բոլոր պատգամները, որոնք ոչ միայն հռչակում են Իմ խոսքն այնպես, ինչպես գիտեք, այն բացահայտում են ձեզ Իմ բացարձակ սերը և կարեկցանքը, որ Ես ունեմ ձեզնից յուրաքանչյուրի հանդեպ: Հիշեք նաև Իմ Մեծ Գթասրտությունը: Բոլոր մեղավորները ներում կստանան, եթե նրանք թողություն խնդրեն:

### **Մուրբ Վարդարանի և Աստվածային Գթասրտության կարևորությունը**

Մինչ էկոլոգիական աղետներ տեղի կունենան, խնդրում եմ հիշեք, որ աղոթքը՝ ներառյալ **Մուրբ Վարդարանի և Աստվածային Գթասրտության աղոթքները**, կօգնեն խուսափել այդ աղետներից շատերից: Հիշեք, Իմ թանկագին զավակներ, որ նրանք, ովքեր հավատում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը և հետևում են Իմ ցուցումներին, վախենալու ոչինչ չունեն: Թույլ տվեք Ինձ նաև հիշեցնել ձեզ, որ ձեզ տրված Գթասրտության երկու մեծ գործերի հետևանքով (Մուրբ Հոգու ընծան, որը պայթեց ողջ աշխարհի վրա մի քանի օր առաջ, և Մեծ Նախագգուշացումը) միլիոնավոր մարդիկ դարձի կգան դեպի ճշմարտությունը: Դա կլինի մի մեծ հրաշք, որը ուրախություն կբերի բազում մարդկանց:

### **Հավանքը Կարմիր Վիշապի և նրանց կողմից, ովքեր Աստծուց չեն**

Մինչ Սատանան կբարձրանա իր խեղճ խաբված հետևորդների հետ, ում նա հեռացնում է Ինձնից, որ նրանց հավիտենական փրկության միակ հույսն էմ,

դա կլինի մի կարճ ժամանակահատված: Սակայն Ես պետք է զգուշացնեմ ձեզ, որ այն կլինի Կարմիր Վիշապի և ոչ Աստծուց եկող քաղաքական միավորումների գլխավորությամբ իրականացվող հալածանքի մի սարսափելի շրջանի: Աղոթքի և հաղորդության/հորհուրդների միջոցով դուք ուժ կգտնեք դիմանալ այդ փորձություններին: Այս բոլոր իրադարձությունները կանխասացվել են և պետք է տեղի ունենան, որպեսզի չարը վերջնականապես դուրս հանվի երկրից: Ուստի անհրաժեշտ է, որ այս մաքրագործումն ու երկնային պատիժների շարքը տեղի ունենան: Քանի որ միայն այդ ժամանակ աշխարհը պատրաստ կլինի երկրի վրա Նոր Դրախտին: Երբեք մի արհամարհեք Իմ կանչը: Միայն այն ժամանակ, երբ կսկսեք տեսնել Իմ ընտրյալ պատգամատարների կողմից ձեզ բացահայտված մարգարեությունների նյութականացումը, վստահորեն կիմանաք, որ այդ Ես եմ, որ խոսում եմ ձեզ հետ:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## Ծոմ պահելու եւ ինքնամերժման կարեւորությունը

Երկուշաբթի 16 Մայիսի 2011թ, ժ.11.30

Իմ սիրելի աղջիկ, դու վերջապես հասկանում ես, որ առանց Ինձ ոչինչ ես: Իմ շնորհների միջոցով է, որ դու կյանք ես ստացել Իմ Հոր Թագավորության մեջ: Առանց քո կյանքում Իմ ներկայության, այն կլինի անպտուղ և ցանկացած իմաստից զուրկ: Ոհ, որքան եմ Ես ցանկանում, որ Իմ բոլոր զավակները հասկանան այն կյանքը, որը Ես կարող եմ բերել նրանց հատկապես Սուրբ Հաղորդության Խորհրդի միջոցով: Քանի որ միայն այն դեպքում, երբ դուք ստանում եք ինձ ձեր փխրուն հոգու մեջ Աստվածային Հացի և Գինու միջոցով, միայն այդ դեպքում դուք ճշմարտապես կզգաք Իմ սերը: Այդ սերը կհզորացնի ձեզ, ոչ միայն ձեր հոգին, այլև ձեր միտքը: Իմ ներկայությունը ձեզ վեր կբարձրացնի, որ դառնաք Իմ ճշմարիտ հետևորդները:

Իմ այն հետևորդները, որոնք Ինձ կանոնավորապես չեն ստանա այդ Ամենասուրբ Խորհրդի միջոցով, կլինեն ինչպես մի անոթ, որը միայն կիսով չափ է լիքը: Դուք Իմ Մարմնի և Արյան կարիքն ունեք, որը հեղվեց ձեզ բոլորիդ համար, որ լցնի ձեզ Իմ ճշմարիտ ներկայությամբ: Քանի որ առանց դրա, դուք անկարող կլինեք գտնել այն իսկական ուժը, որ ամբողջապես հոչակեք Իմ փառքը:

Զավակներս, դուք պետք է հասկանաք, որ Իմ գոյությանը հավատալը ձեր հոգևոր ճամփորդության մի մասն է միայն: Դեռևս այնքան շատ բան կա, որ



պետք է հասկանաք: Ձեր մարմնի հաճույքները մերժելու միջոցով միայն դուք ճշմարիտ կկայանաք: Այն փաստի շնորհով, որ Սատանան կառավարում է մարդուն մարմնական ցանկությունների միջոցով, դուք պետք է մերժեք նրան՝ մերժելով այն հաճույքները, որոնք փնտրում եք: Ծոմապահությունը ամենահզոր միջոցներից մեկն է ձեր հոգիները Սատանայից ու նրա չարքերից ազատելու համար: Այնքան քչերն են աշխարհում կարողանում կատարել այդ զոհաբերությունը, սակայն դա այնքան պարզ է և չի վատացնում ձեր առողջությունը: Շաբաթական մեկ օր ծոմապահությունը ձեզ կբերի հատուկ շնորհներ: Կատարելով փոքրիկ զոհաբերություններ հանուն Ինձ՝ ձեր Աստվածային Փրկչի, դուք ոչ միայն հոգիներ կփրկեք, այլև ավելի կմոտենաք Ինձ: Այլ զոհաբերությունները, երբ հրաժարվեք աշխարհիկ բարիքներից, ձեզ ավելի կմոտեցնեն Իմ Սուրբ Սրտին:

Կյանքը, զավակներս, չպետք է լինի միայն նյութական իրերի հանդեպ հետապնդում, եթե դրանք ավել են ձեր իրական կարիքներից: Ընդունելով պարզ կարիքները և ձեր ժամանակը Ինձ նվիրելով, դուք ճշմարիտ բավարարվածություն կզգաք: Ոչ միայն դա, այլև ձեր կյանքում առաջին անգամ դուք կիմանաք ճշմարիտ ազատության իմաստը: Հիշեք, որ Սատանան վերահսկում է մարդկանց մարմնական ցանկությունների միջոցով, ներառյալ սնունդը, հագուստը, սեքսը, տները, ավտոմեքենաները, արձակուրդը, շքեզ ապրուստը, երաժշտությունը, ակոհուրը և հայտնի մարդկանց կուռք դարձնելը: Միայն այն ժամանակ երբ ընդունեք որ սրանք սոսկ իլյուզիա են, դուք կհասկանաք, որ երկրի վրա ձեր ժամանակը չպետք է վատնվի այդպիսի անօգուտ հետապնդումների վրա:

Երկրի վրա ձեր անցկացրած ժամանակը, զավակներս, դեպի հավերժություն ճամփորդության մի մասն է միայն: Մահվանից հետո ձեզ համար կշարունակվի այլ տեսակի կյանք: Հիմա փնտրեք լույսը, որպեսզի ձեր հոգին ճաշակի ճշմարիտ երջանկություն հավիտյան և բարձր տեղ Դրախտում: Հոգևոր սրբության այս աստիճանին հասնելու համար, խնդրում եմ մարմնական զոհաբերություններ արեք, քանի դեռևս կենդանի եք երկրի վրա: Նաև, ձեր կյանքի բոլոր տառապանքներն առաջարկեք կորած հոգիների համար, և կհնձեք այն պարզևները, որոնք սպասում են ձեզ հաջորդ կյանքում: Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

.....

## Մերժեք Նոր Դար հոգեկանությունը (սպիրիտուալիզմը)

Կիրակի 15 մայիսի, 2011թ, ժ 17.00

Իմ սիրելի աղջիկ, Ես կոչ եմ անում Իմ բոլոր հետևորդներին մերժել Նոր Դար շարժումը, որով համակվել է աշխարհը:

Քրիստոնեությունը միշտ եղել է Սատանայի գլխավոր թիրախը: Քանի որ նա բավականին խորամանկ է, նա մշտապես կփորձի հմայել դատարկ և հոգևորապես կորած հոգիներին: Նա միշտ կփորձի ներկայացնել Իր ստերը՝ քողարկված թվացող սիրով: Հետո նա կփորձի վերահսկել Իմ զավակների մտքերը ժամանակակից ապրելակերպի այսպես կոչված սթրեսներից: Զգուշացեք, դուք, ովքեր ենթարկվում եք այն գործունեություններին, որոնք հայտարարում են, թե ձեր մտավոր վիճակը բերում են մոռացության էտապի մեղիտացիայի անվան տակ: Հենց որ թույլ տաք, որ ձեր միտքը վերահսկվի այս ձևով, Սատանան և նրա չարքերը կարող են ներս մտնել անքան անաղմուկ, որ չեք հասկանա դա, այնքան որ հանդարտ կլինի այդ անցումը:

### **Խուսափեք հին հոգևոր պրակտիկային, ներառյալ տարոտ (tarot) կարտերի օգտագործումը**

Շատ ու շատ հոգիներ աշխարհում քաղցած են հոգևոր առաջնորդության: Իրենց կյաքնի մեջ իմաստ բերելու իրենց փնտրտուքի մեջ, նրանք ակամա թյլ են տալիս իրենց ներքաշվել այնպիսի գործունեությունների մեջ, որոնք հասնում են հեթանոսության: Ցանկացած կեղծ դոգմա, որը համոզում է ձեզ հավատալ, թե ձեր սրտում և հոգում կարող եք հասնել խաղաղության հին հոգևոր պրակտիկայի միջոցով, պետք է միշտ խուսափել դրանցից: Սովորեք ճանաչել դրանք որպես այնպիսին, ինչպիսին իրականում կան:

**Բյուրեղների, մեղիտացիայի, ռեյկիի, յոգայի, տարոտի օգտագործումը**, հավատը **հոգևոր առաջնորդների, մետաֆիզիկայի** և այսպես կոչված **հավատի միջոցով բուժողների** նկատմամբ, նրա համար են, որ գրավեն ձեզ հավատալու այլընտրանքային գերագույն գոյության, որը գտնվում է Աստծո՝ Հավիտենական Հոր կողմից ստեղծվածից դուրս:

### **Նախագգուշացում Բարձրացած տերերի (Ascended Masters) վերաբերյալ**

Ձեզանից շատերն այսօր, ովքեր մշտապես փնտրում են հոգևոր հարմարավետություն ձեր հրեշտակներին հետևելու պրակտիկայի միջոցով, նույնպես պետք է զգոն լինեք այն փաստի հանդեպ, որ երբ նշվում է **Բարձրացած տերեր (Ascended Masters)**, կարող եք վստահ լինել, որ այդ հրեշտակները Երկնքից չեն գալիս: Այդ հրեշտակները, զավակներս, **ընկած հրեշտակներ են** և գալիս են խավարից: Մակայն ձեզ կասեն և հետո կհամոզեն, թե դրանք գալիս են լույսից: Այս ամբողջ **հեթանոս հոգեկանությունը**, եթե դրան թույլ տաք իշխի ձեր կյանքում, վերջ ի վերջո ձեզ ներքև կքաշի դեպի խավարի

փոսերը այն ժամանակ, երբ ամենաքիչն էք այդ սպասում: Մատանան բավականին զգույշ կլինի այդ մութ ստերը ներկայացնելիս, որովհետև ձեզ միշտ կասվի, և դուք կհավատաք, թե դրանք բոլորն էլ լավ բաներ են:

Այդ գործունեությունների մեծ մասը ներկայացվում են որպես լավ ձեր ինքնագնահատման, վստահության համար, ձեր կյանքի վրա վերահսկողության համար, որոնք բոլորն էլ ստեր են: Սրանք ոչ միայն ձեզ հեռացնում են ճշմարտությունից, այլև բերում են անասելի թշվառություն, երբ չար ոգիները ներս են մտնում ձեր հոգու մեջ որպես այդ գործունեությունների ուղղակի արդյունք:

### **Կտակարանը նախագգուշացնում է կախարդության վտանգների մասին**

Ճշմարտությունը երբեք չի կարող կեղծվել: Սուրբ Աստվածաշնչի միջոցով տրված ուսուցումները նախագգուշացնում են մարդկությանը կախարդության, բախտագուշակության և կեղծ աստվածների պաշտելու վտանգների մասին: Այսօրվա աշխարհում այդ գործունեությունները ներկայացվում են որպես անվնաս, սակայն անհրաժեշտ, ձեր հոգևոր բարօրության համար: Իրենց քնքուշ բնույթի պատճառով հոգիներից շատերը կգրավվեն դեպի Նոր Դար պրակտիկան, սիրո այն կեղծ ֆասադի պատճառով, որը դուրս է հոսում այդ գործունեությունից: Դրանից ավելի հեռու ոչինչ չի կարող լինել ճշմարտությունից:

### **Նախագգուշացում հրեշտակների հանդեպ մոլեռանդ նվիրվածությունից**

Հիշեք, Մատանան և նրա ընկած հրեշտակներն են ձեզ խորամանկորեն և զգուշորեն տարել ձեզ այդ ստերի մեջ առանց կասկածներ հարուցելու: Ձեզնից նրանք, ովքեր քարոզում են մոլեռանդ նվիրվածություն հրեշտակների հանդեպ, Ես հետևյալն ունեմ ասելու. Ինչու՞ առաջին հերթին չեք հոչակում Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր խոսքը: Մի՞ թե այդ տարվածությունը հրեշտակներով պարզապես կռապաշտության մեկ այլ ձև չէ: Չնայած, անպայման աղոթեք Սուրբ Հրեշտակների օգնության համար, սակայն միշտ տվեք այս հարցը. արդյո՞ք հրեշտակների հանդեպ ձեր պաշտամունքը Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Սիրելի Որդու կամ Աստծո՝ Հավիտենական Հոր հանդեպ ձեր ունեցած սիրո հաշվին չէ: Եթե այդպես է, ուրեմն դուք վիրավորում եք Ինձ՝ ձեր Աստվածային Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին:

Արթնացեք հիմա այսպես կոչված հոգեկանության ստերի հանդեպ: Հրեշտակները, որոնց դուք գրավում եք մասնակցելով այսպիսի գործունեությունների մեջ, Երկնքից կամ լույսից չեն գալիս: Նրանք **կրվան որպես լույսից եկող**, բայց դա այն խաբեությունն է, որը Մատանան և նրա

չարքերն օգտագործում են իրենց դործողությունները խելամտորեն քողարկելու համար:

Հիշեք մի վերջին դաս: Որքան ցանկանում եք զգեստավորեք ձեր հեթանոս գործունեությունները դրանք ներկայացնելով որպես Երկնքի Աստվածային Լույսին հարգանքի մատուցում, միևնույն է դրանք կլինեն սուտ: Այն սուտը և նրանց, ում դուք համոզում եք հետևել այդ արտառոց ճամփորդությանը դեպի Իմ Հոր կամքից դուրս գտնվող մի այսպես կոչված հոգևոր թագավորություն, ձեզ այնքան կմոտեցնի Սատանային, որ մի որոշակի կետից հետո վերադարձ չի լինի:

Մի՞րո միակ Աստվածային թագավորությունը, որ գոյություն ունի այս երկրից դուրս՝ Երկինքն է: Մնացած ամեն ինչ, որ ձեզ ասել են, ճշմարիտ չէ: Սատանան, այնուամենայնիվ, ցանկանում է, որ հավատաք, թե կա: Իրականությունն այն է, որ նա քաշում է բոլոր չկասկածող և սնոտիապաշտ հոգիներին դեպի դժոխքի խավարը իր և բոլոր ընկած հրեշտակների հետ միասին: Ամենը կեղծ սիրո անվան տակ:

Խնդրում եմ հիշեք, որ սերը, ճշմարիտ սերը, կարող է գալ միայն Աստծուց՝ Հավիտենական Հորից:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Պատվեք Իմ Հորը**

Չորեքշաբթի 18 մայիսի 2011թ, Ժ17.00

Իմ սիրելի աղջիկ, Ես բաց թողեցի այն ժամանակը, որը դու երեկ Ինձ խոստացար: Ես հասկանում եմ, որ դու չափազանց զբաղված կյանքով ես ապրում, բայց հիշիր որ Ես այն կյանքն եմ, ում պետք է փնտրես ամենից առաջ քո ամենօրյա գործողություններից վեր:

**Ժամանակ՝ մարդու համար, որպեսզի անկեղծորեն մտածի իր կյանքի մասին**

Եկել է ժամանակը, որ մարդկությունն անկեղծորեն մտածի իր կյանքի մասին: Իմ բոլոր զավակներն ամենուր, աշխարհի յուրաքանչյուր անկյունում, պետք է իրենց տան այս հարցը. Արդյոք իրենք հավատու՞մ եթ, թե՞ ոչ, որ Հայր Աստված գոյություն ունի: Մինչ կանխասացված ժամանակների վերջը ավելի ու ավելի է մոտենում, հիմա պետք է կատարվեն մի շարք ընտրություններ: Դուք,

զավակներս, ընդունում եք, որ Աստված՝ Իմ Հավիտենական Հայրն է ձեզ ստեղծել: Եթե ընդունում եք, ուրեմն պատասխանեք հաջորդ հարցին: Որքա՞ն ժամանակն եք դուք անցկացնում շնորհակալություն հայտնելու Նրան Իր տված ընծաների՝ կյանքի, ձեր ընտանիքի և ընկերների համար: Այն տան համար, ուր ապրում եք: Այն սննդի համար, որ ուտում եք: Եթե շնորհակալություն չեք հայտնում, ապա դուք ճշմարտության հետևորդները չեք:

### **Հարգանք ցույց տվեք Իմ Հորը**

Ձեզնից նրանք, ովքեր հավատաում են Աստծուն՝ ամեն ինչի արարչին, մի՞թե չգիտեք, որ աղոթքը կենսական է, եթե օգտվելու եք հաջորդ փառահեղ կյանքից, որը Նա նախատեսել է ձեզ համար: Խոսեք Նրա հետ ամեն օր: Ցույց տվեք Նրան այն հարգանքը, որին Նա արժանի է: Որովհետև Նրան ուշադրություն չդարձնելով, դուք վիրավորում եք Ինձ: Իմ բոլոր նվիրված հետևորդներին, Ես՝ ձեր Աստվածային Փրկիչ Հիսուս Քրիստոսը, կոչ եմ անում ձեզ հիմա հասկանալ, թե որքան կարևոր է պատվել Իմ Հորը: Նրան չի տրվում այն ուշադրությունը, որին Նա արժանի է: Շատերի մոտ Հայր Աստծո պակերը խիստ է, վախեցնող և բարկացած: Դուք այնքան վախեցած եք, որ Նրան հրում եք մի կողմ: Եթե իմանայիք, թե Նա որքան է խնդրում ձեր սերը, հենց այս պահին ծնկի կգայիք և կխնդրեիք Նրան ներել ձեզ: Խնդրում եմ աղոթեք Հայր Աստծուն: Նա ձեր սիրո կարիքն ունի: Նա ձեր պաշտամունքի կարիքն ունի: Իմ Հորն ուղղված աղոթքը բերում է ահեղի Գթասրտություն, երբ խնդրում եք Իմ Հորը՝ պաշտպանել ձեզ և փրկել ձեզ Իմ անվամբ: Նա հազվադեպ է մերժում ձեր խնդրանքը, ըստ Իր Ամենասուրբ Կամքի: Աստված՝ Հավիտենական Հայրը, չափազանց սիրող է, կարեկից, և նրա հանդեպ նվիրվածությունը աշխարհին կբերի մեծ շնորհներ և փրկություն:

### **Աղոթեք Իմ Հորը, որպեսզի խուսափեք գլոբալ աղետներից**

Աղոթեք Իմ Հորը, որպեսզի խուսափեք գլոբալ աղետներից Իր Սիրելի Որդու անունով, և Նա կլսի ձեր աղոթքները: Այնքան քիչ քրիստոնյաներ են աշխարհում օգնության համար կանչում հատկապես Նրա անունը: Նա, ով այնքան սիրով ստեղծեց մարդուն Իր պատկերով, Նրա մասին մոռացել են: Ցույց տվեք հիմա Նրան այն պատիվը, որը հիմա պահանջվում է՝ օգնելու համար թեթևացնել Մեծ Դժբախտության ժամանակ երկրի վրա տեղի ունենալիք էկոլոգիական աղետները:

Իմ Հայրը բռնում է աշխարհին իր ձեռքերի մեջ: Նրա զավակները, սակայն, այլևս չեն պատվում կամ պաշտում Նրան: Նրանք մոռանում են այն փաստը, որ մինչ Սատանան շարունակում է գողանալ հոգիներ, միայն մեկ ուժ կա, որը կմնա

հավիտյան, և դա Աստծո ուժն է: Իր գթասրտությամբ, Նա կլսի օգնության ձեր կանչերը: Խնդրում եմ կանչեք Նրան հիմա, հատկապես մեծ փոփոխության այս ժամանակ:

Ձեր սիրող Փրկիչ

Աստծո՝ Ամենակարող Հոր Որդի Հիսուս Քրիստոս

## **Ծնողների պատասխանատվությունն այսօր աշխարհում**

Հինգշաբթի 19 մայիսի 2011թ, ժ 18.15

Իմ սիրելի աղջիկ, աշխարհը հիմա ամբողջապես ընկղմվել է հուսահատության խորքերը Աստծո՝ Ամենակարող Հոր հանդեպ հավատի պակասի պատճառով: Նույնիսկ փոքրիկ երեխաները զվարթորեն կմերժեն Նրա գոյությունը: Այդ դատարկ կարծրացած հոգիները ոչ միայն վիրավորում են Իմ Հավիտենական Հորը, այլև Ինձ խորը տառապանք են խառնառում:

Դուք այնքան եք հեռացել, զավակներս, որ ամբողջապես անտեսում եք հոգեկանության ողջ զգացողությունը, որով ծնվել եք: Ի՞նչ եք կարծում մինչև ուր կտանի ձեզ աշխարհի և նրա նյութապաշտության հանդեպ ձեր սերը: Դուք, ուլքեր ընկղմված եք հարստության և աշխարհիկ գրավչությունների հարմարավետության մեջ, պետք է իմանաք, որ դրանք շուտով կվերցվեն ձեզնից որպես առաջիկայում սպասվող մաքրագործման մաս:

### **Ծնողների պատասխանատվությունը**

Ինչու՞ եք ձեր զավակներին սովորեցնում մարդու կողմից պատրաստված նյութական աշխարհի կարևորությունը իրենց խեղճ փոքրիկ հոգիների գնով: Ձեր առաջնահերթ նպատակը ձեր երեխաներին հարստության ստեղծման և կառուցման կարևորությունը սովորեցնելն է: Դուք հազվադեպ եք նրանց սովորեցնում այն բարոյական նորմերը, որոնց նրանք պետք է հարմարվեն չափահասության պարտականությունների հետ այն առնչությամբ թե ինչպես պետք է իրենք հարգանք ցուցաբերեն ուրիշների նկատմամբ: Որ հասկանան անկեղծության կարևորությունը և իրենց եղբայրների ու քույրերի հանդեպ հասկացողություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Դժբախտաբար, Իմ զավակներն ամբողջապես մոլորվել են այն հոգևոր ճանապարհից, որը նրանց անհրաժեշտ է վերջնական նպատակին հասնելու համար: Մի՞թե դուք ամոթ

չունեք: Ե՞րբ պետք է իմանաք, որ փողի և նրա առաջարկած ամեն ինչի հանդեպ ունեցած ձեր կլանված սերը կավարտվի աղետով: Միայն այն ժամանակ, երբ մերկանաք ձեր ստեղծած հարմարավետություններից, այդ ժամանակ կհասկանաք թե որքան միանակ եք:

Լսեք Ինձ հիմա քանի դեռ կարող եք: Առաջին հերթին դրեք ձեր ընտանիքի կարիքները, քանի որ դա լավ է Ապահովեք ձեր ընտանիքի անդամներին: Բայց խնդրում եմ մի խրախուսեք ձեր զավակներին դառնալու հարստության և հռչակ ցանկանալու ստրուկը, քանի որ դրանով կհրեք նրանց դեպի Սատանայի բազուկները: Դուք ձեր զավակներին ծնել և ֆիզիկապես կյանք եք տվել: Բայց նրանք ստեղծվել են Աստծո՝ Հավիտենական Հոր կողմից, երբ նրանց տրվել է իրենց հոգիները: Անպայման պատասխանատվություն ցույց տվեք որպես ծնող՝ հոգալով ձեր զավակների ֆիզիկական կարիքները Բայց հիշեք, որ նրանց հոգիները սնուցման կարիք ունեն: Սովորեցրեք նրանց Իմ ուսուցումների ճշմարտությունը և իրենց հոգիներին հետևելու կարևորությունը: Միայն այդ դեպքում դուք կտաք ձեր զավակներին մարմնի և մտքի ճշմարիտ սնուցումը, որի կարիքն ունեն նրանք գոյատևելու համար, որպեսզի վայելեն հավիտենական կյանքը:

Ձեր սիրդ Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Խառնաշփոթություն Իմ Երկրորդ Գալստյան Վերաբերյալ**

Ուրբաթ 20 Մայիս 2011թ. ժ.10.00

Իմ սիրելի աղջիկ, շատ մարդիկ մտածում են, թե Երկրորդ Գալուստն իրականում ինչ է նշանակում: Ուստի թույլ տուր Ինձ բացատրել: Առաջին անգամ Ես եկա աշխարհ՝ մարդկությանը հավիտենական խավարից ազատագրելու համար, որպեսզի նա կարողանա օգտվել Հավիտենական Կյանքից: Աստված՝ Ամենակարող Հայրը, Իր Գթասրտությունից ելնելով, Ինձ ուղարկեց, որպեսզի Իր բոլոր զավակները կյանք ունենան: Քանի որ մինչ այդ, Ադամի և Եվայի մեղքերի պատճառով, դա հնարավոր չէր: Ես նորից գալիս եմ, այս անգամ՝ պարզևատրելու համար բոլոր նրանց, ովքեր հետևում են Ինձ: Բավականին խառնաշփոթ վիճակ է տիրում աշխարհում այս իրադարձության մասին: Շատերը հավատացած են, որ Իմ Երկրորդ Գալուստը նշանակում է, որ աշխարհի վերջը եկել է: Դա այդպես չէ, այլ դա նշանակում է, որ Ժամանակների Վերջն է (Վերջին Ժամանակնորը), երբ Սատանան և նրա

ահետևորդները, որոնք աշխարհում ստեղծեցին անասելի թշվառություն,  
կվերացվեն երկրի վրայից 1.000 տարով:

### **Երկրի վրա Նոր Դրախտի մասին**

Իմ խոստացած Նոր Դրախտը կգա այն ժամանակ, երբ Երկինքն ու Երկիրը  
կմխավորվեն, կդառնան մեկ: Այս նոր կյանքը, որը Ես բերում եմ Իմ բոլոր  
հավատարիմ հետևորդների համար, սիրո և փառքի կյանք է: Դուք, Իմ  
հետևորդներ, պետք է դիմանաք շատ տառապանքների, այնուամենայնիվ, մինչ  
այս անցումը տեղի կունենա: Որպեսզի աշխարհին օգնեմ նախապատրաստվել  
այդ մեծ իրադարձությանը, Ես նախապես բերում եմ Իմ Գթասրտության  
ընծան՝ **Նախագգուշացումը**, որը ձեզանից յուրաքանչյուրին և ամեն մեկիդ  
կտա հնարավորությունը՝ տսնելու ձեր մեղքերը և այն, թե որքան են դրանք  
վիրավորում Ինձ, ձեզ հնարավորություն կտա տեսնել ճշմարտությունը: Երբ  
հասկանաք մեղքի բիծը, որը գոյություն ունի ձեր ներսում, միայն այն  
ժամանակ կհասկանաք, թե որքան եմ Ես տառապում:

### **Մի հայացք, թե ինչ տեղի կունենա Վերջին Դատաստանի ժամանակ**

Ձեզ բոլորիդ թույլ տալով, որ զգաք Իմ Գթասրտության այս մեծ գործը, դուք մի  
ճշմարիտ պահ կտեսնեք այն, ինչ տեղի է ունենալու վերջին դատաստանի օրը:  
Այս ձևով ձեզ տրվում է արդար ընտրություն՝ մեկ անգամ ևս դեպի Ինձ  
դառնալ: Հասկանում եք, Ես ձեզ բոլորիդ սիրում եմ մի այնպիսի խորը և  
հաստատուն սիրով, որ հնարավոր ամեն ինչ կանեմ ձեզ Խաբեբայի ճանկերից  
փրկելու համար:

Զգուշացեք հիմա, քանի որ Սատանան հիմա կավելացնի իր գործունեությունը  
ձեր եղբայրների և քույրերի միջոցով, որ համոզի ձեզ մեջք դարձնել Ինձ այն  
բանից հետո, երբ այդ մեծ իրադարձությունը տեղի ունենա: Հիմա դուք պետք է  
բացեք ձեր միտքը, մի կողմ դնեք ամեն **մարդկային մտածելակերպ**, որպեսզի  
ընդունեք երկրի վրա ձեր գոյության մասին ճշմարտությունը: Մարդկային  
բանականության գիտական մտածողությունից սերված յուրաքանչյուր սուտ  
կներկայացվի ձեզ՝ արգելելու համար ձեզ, որ ընդունեք ճշմարտությունը:  
Սատանան չի ցանկանում, զավակներս, որ դուք Ինձ մոտ գաք: Նրա թույնը,  
ինչպես մամլիչ, պետք է կոտրվի, բայց դա կարող է արվել միայն ձեր  
օգնությամբ: Թույլ մի տվեք նրան պղտորել ձեր դատողությունը իր ստերով:  
Ձեզ համար չափազանց դժվար կլինի անտեսել նրա փստարկները,  
խայթոցներն ու ծաղրը, քանի որ այդ կերպ է նա աշխատում:

### **Սատանան կաշխատի այլ մարդկանց միջոցով, որ հուսալքի ձեզ**

Ձեզանից շատերը չեն հասկանա, որ Սատանան այս կերպ աշխատում է այն  
մարդկանց միջոցով, ում կարծիքները դուք հարգում եք: Բայց սա հենց այն ձևն



է, որով նա աշխատում է: Նա կհաղորդակցվի այդ խեղճ հոգիների միջոցով, ովքեր խավարի մեջ են: Նա այնպես կանի, որ նրանց մտքերը փակվեն Իմ փառքի ճշմարտության և հավիտենական կյանքի հանդեպ, որն իրավունքով ձերն է: Այլևս երբեք թույլ մի տվեք, որ նրա ազդեցությունը վնասի Իմ հաղեպ ձեր ունեցած սերը: Եվ հիշեք, քանի որ նա չի շահի այս ճակատամարտը, ապա այդ խեղճ հոգիները, որոնք հետևում են նրան, կգցվեն նրա հետ Դժոխք: Եթե ցանկանում եք հավիտենական կյանք, ուրեմն օգտագործեք երկրի վրա այս ժամանակը Սատանային մերժելու համար, քանի դեռ կարող եք:

### **Ես կկառավարեմ երկիրը 1000 տարի**

Աղջիկս, Ես 1000 տարի կկառավարեմ երկիրը: Չսխալվես, քանի որ հիմա Ես պատասխանատու եմ այն դեպքերի համար, որոնք այժմ կատարվում են երկրի վրա: Ես հիմա նախապատրաստել եմ ճանապարհը երկրի վրա Իմ նոր թագավորության համար, և այդ ժամանակը մոտ է: Շատ ավելի մոտ, քան շատերն են կարծում: Ուրախացիր, քանի որ այս նորությունը կողջունվի բոլորի կողմից: Դա վերջ կտա երկրի վրա ամեն տառապանքի: Այն կվառի սիր և փառքի մի աղբյուր որ Իմ բոլոր զավակները ստանան:

Նոր Դրախտը կլինի ձեր հասկացողության սահմաններից այն կողմ: Բայց լսիր սա. Այս նոր կյանքը Իմ բոլոր նվիրյալ հետևորդներին կառաջարկի անհանգստությունից ազատ մի կյանք: Դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա: Ամեն ինչ կապահովվի Իմ կողմից: Ձեզանից ամեն մեկը և յուրաքանչյուրը, ով ընտրել է այս Փառահեղ Թագավորությունը, կսարսափի այն Թանկարժեք Գոհարից, որը սպասվում է ձեզ: Աղոթեք հիմա, որ ձեր եղբայրներն ու քույրերը բացեն իրենց աչքերը Իմ տված խոստումների ճշմարտության հանդեպ, որպեսզի նրանք նույնպես կարողանան մտնել Երկրի վրա այս նոր կյանքի մեջ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

## **Թողությունը (ներումը)՝ դեպի ազատություն տանող ճանապարհ**

**Շաբաթ 21 մայիսի 2011թ, ժ 10.40**

Աղջիկս, ներումը դեպի ազատություն տանող ճանապարհն է: Երբ ներում եք նրանց, ովքեր վիրավորում են ձեզ կամ վնաս են պատճառել ձեզ, դուք դառնում եք հոգով ազատ: Այդ ժամանակ է ուրախությունը լցվում ձեր հոգին: Դա նաև նշանակում է, որ Ես ներկա եմ ձեր ներսում: Երբ ներում եք ուրիշներին, դա

սիրո նշան է ոչ միայն ձեր հարևանի հանդեպ, այլև Իմ՝ ձեր Աստվածային Փրկչի հանդեպ: Նրանք, ովքեր չեն հավատում Ինձ, իմացիր, որ երբ նրանք ներում են ուրիշներին, Ես ներկա եմ և քայլում եմ նաև նրանց հետ: Սակայն նրանք գաղափար չունեն այդ մասին:

Ներումը սեր է: Իմ սերն անսահման է: Բայց Ես աղերսում եմ ձեզ, զավակներս,, որ թույլ տաք Ինձ ներել ձեր մեղքերը: Եթե դուք միայն խնդրեիք Ինձ այդ անել, դուք ոչ միայն ազատ կլինեիք, այլև այն սերն ու ուրախությունը, որը կզգայիք, կգարմացներ ձեզ: Խոնարհության այդ գործողությունը ձեզ թույլ կտա սիրով հաղորդակցվել ուրիշների հետ: Ձեր լույսը կփայլի և կազդի մյուսների վրա յուրահատուկ կերպով, բայց ոչ դուք, ոչ էլ նրանք չեն գիտակցի դա: Իմ սերը, Ազատագրման գործողության տեղի ունենալուց հետո, կհեղեղի ձեր հոգին: Ձեր մաքուր հոգին կլինի մազնիսի պես, մինչ ուրիշներին կքաշի դեպի ձեզ:

Զավակներս, հեշտ չէ ներել ուրիշներին: Հպարտությունն ու ինքնարժանիքի զգացողությունը արգելում են, որ գթասրտության այս մեծ արարքը կատարվի: Դա Սատանայի գործն է: Քանի որ նա գիտի, որ ներողամտության պակասը տանում է Հայր Աստծո դեմ ավելի մեծ մեղքերի: Երբ չեք կարողանում ներել ուրիշներին, կառուցում եք վրդովմունք, որը երբ թարախակալում է, հանգեցնում է ատելության և նույնիսկ սպանության: Շատ դեպքերում այն կարող է հանգեցնել պատերազմների:

Եթե մարդիկ ամենուրեք ներեին միմյանց առատաձեռորեն, այդ դեպքում ատելությունը գոյություն չէր ունենա: Սպանությունը կլլիներ ավելի հազվադեպ, իսկ սերը, Աստծո՝ Հավիտենական Հորը սերը, կտարածվեր:

Սովորեք ներել միմյանց: Մի կողմ հրեք հպարտությունը և խնդրեք Իմ Գթասրտությունը: Քանի որ երբ դուք որևէ բան եք խնդրում Իմ Սուրբ Կամքին համապատասխան, ձեզ կտրվի ձեր խնդրանքը:

Ձեր սիրող Փրկիչ

Գթասրտության Թագավոր

Հիսուս Քրիստոս

**Նոր հայտնություններ. Ջրհեղեղներ Ֆրանսիայում  
այս տարվա ամռանը**

Կիրակի 22 Մայիս 2011, ժ. 14.30

Իմ սիրելի քնքուշ աղջիկ, 2011թ. մարտի 18-ին Իմ կողմից քեզ տրված հայտնությունը, որ մայիսին Իսլանդիայում հրաբխի ժայթքում կլինի, տեղի է ունենում հիմա: Դու մտածում ես, թե ինչու՞ այդպես ցնցվեցիր, երբ դա տեղի ունեցավ ինչպես կանխասացվել էր: Ուստի Ես կբացատրեմ: Չնայած քեզ հետ տեղի ունեցող Իմ հաղորդակցության իսկության վերաբերյալ քո ունեցած կասկածները մեծամասամբ ցրվել են, դու դեռևս վախենում էիր, որ ճիշտ ձևով չէիր ընկալում այս մարգարեությունները: Այժմ դու պետք է վստահությամբ վեր կենաս և թույլ տաս Ինձ ցրել քո վախը: Առաջ գնա հիմա և հրապարակիր, առանց տատանվելու, մյուս իրադարձությունները, որոնք Ես բացահայտել եմ քեզ: Այդ անելով, ավելի շատ մարդիկ կհասկանան, որ դա Ես եմ՝ Հիսուս Քրիստոսը, ով այժմ ուշադրություն է պահանջում՝ հոգիների փրկությանն օգնելու համար:

Երբ այս մարգարեությունները հաստատվեն, Իմ հետևորդների սրտերում քիչ կասկած կլինի դրանց իսկության վերաբերյալ: Թող կոշտացած հոգին, որ մերժում է հավատալ, և որը միշտ բանական պատասխան կտա ճշմարտությանն ականատես լինելիս, չհամոզվի:

## **Ջրհեղեղներ Ֆրանսիայում, ջերմության ալիք Թուրքիայում**

Լսիր Ինձ հիմա. Ջրհեղեղներ կլինեն **Ֆրանսիայի հարավում այս ամառ: Թուրքիայում ջերմության ալիք կլինի:** Ուրիշ էկոլոգիական դեպքերի թվում, որոնք իրարանցում կառաջացնեն, կլինի **Անգլիայում տեղի ունենալիք երկրաշարժը**, (բայց ոչ անմիջապես): Այդ դեպքերի մի մասը կազդեն նաև **Եվրոպական այլ երկրների վրա:** Սպասեք **Միջերկրականի շրջանում ծովի մակարդակի բարձրացման**, որը կցնցի բոլորին: Երկրաշարժեր կգրանցվեն նաև **Նորվեգիայում և Հարավային Ամերիկայում:** Ես, աղջիկս, ուրիշ իրադարձություններ ևս կբացահայտեմ քեզ, բայց միայն մեկ մտադրությամբ. Իմ գավակներին դարձի բերելու նպատակով: Եթե և երբ նրանք ընդունեն, որ Ես եմ խոսում իրենց հետ քո միջոցով, այդ դեպքում դա Ինձ ուրախություն կբերի: Ես ցանկություն չունեմ վախեցնելու Իմ գավակներիկն, բայց այս դեպքերը կշարունակվեն աճել աշխարհում, որպես սպասվող մեծ երկնային պատժի մի մաս: Սրանք Խաբեբայի դեմ Պատերազմի ամիրաժեշտ մասն են կազմում:

Աղոթեք հիմա, գավակներս, այս իրադարձությունները նվազեցնելու և դրանցից խուսափելու համար, քանի որ աղոթքը չափազանց հզոր միջոց է ներողամտություն գտնելու համար:

Գնա հիմա խաղաղությամբ: Մի վախեցիր հրապարակել այս

մարգարեությունները, քանի որ դրանք տեղի կունենան:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

.....

## **Ինչու եմ Ես հաղորդակցվում աշխարհի հետ այս ձևով**

Երկուշաբթի 23 Մայիսի 2011թ, ժ. 9.45

Իմ սիրելի աղջիկ, հիմա ժամանակն է մտածել Իմ սրբազան պատգամների մասին և հասնել նրան, որ ամբողջ աշխարհում որքան հնարավոր է շատ մեղավորներ ուշադրություն դարձնեն դրանց:

Չսխալվես, այս պատգամները տրվում են աշխարհին որպես ընծա, որպեսզի օգնեն փրկվել ձեզ բոլորիդ, բոլոր Իմ զավակներին, և ներառյալ նրանց, ովքեր ուրիշ կերպ են գալիս Հայր Աստծո մոտ:

Մարդիկ, հատկապես կաթոլիկները, կշփոթվեն, երբ Ես նրանց Իմ մյուս զավակներից, որոնք այլ դավանանք ունեն, բարձր չեմ դասի: Իմ բառերն ընտրված են այնպես, որ լավ են բոլորի կողմից, այլ ոչ թե միայն մի քանի ընտրյալների: Իմ սերը խտրականություն չի դնում: Նրանց, ովքեր քննում են, թե Ես ինչ ձևով եմ խոսում մարդկության հետ այս պատգամների միջոցով, լսեք Ինձ հիմա. Մինչ դուք, Իմ հետևորդներ, հասկանում եք, որ ճշմարտությունը երբեք չի փոխվել Իմ Խաչելության ժամանակից ի վեր, ուրեմն իմացեք, որ Ես պետք է տարածեմ Իմ սերը Աստծո բոլոր զավակների վրա: Ոչ մեկը մյուսից ավելի լավը չէ:

Աղջիկս, դու չպետք է պատասխանես կամ փորձես պաշտպանել Իմ խոսքը, երբ քեզ հարցնում են բացատրել, թե ինչու եմ Ես խոսում այս ձևով: Իմ խոսքն Աստվածային է: Այն չպետք է փոխվի կամ հարմարեցվի նրանց, ովքեր իրենց համարում են աստվածագիտության փորձագետներ: Քանի որ Իմ խոսքը կտրվի աշխարհին մի այնպիսի լեզվով, որը պարզ հասկանալի կլինի մարդկությանն այսօր: Շատերը կհարցնեն, թե ինչու այս խոսքերը չեն օգտագործում Իմ հին ժամանակների մարգարեների և առաքյալների կողմից օգտագործված տերմինաբանությունը: Ես նրանց այսպես կպատասխանեմ. Հիշեք, Իմ ուսուցումները երբեք չեն փոխվում: Անկախ այն բանից, թե Ես այսօր ինչ լեզու կօգտագործեմ ժամանակակից ձևով հաղորդակցվելու համար, ճշմարտությունը մնում է նույնը՝ անեղծ:

Զգուշացեք այն տեսանկյուններից, ովքեր հայտարարում են, թե իրենք պատգամներ են տանում Ինձնից, և օգտագործում են հին լեզուներ կամ հատվածներ Աստվածաշնչից: Քանի որ այսօր Ես այդ ձևով չեմ հաղորդակցվում մարդկության հետ: Ինչի՞ համար պետք է Ես դա անեմ: Ինչու՞ պետք է Ես հեռացնեմ մի նոր սերնդի, նրանց, ովքեր չգիտեն Իմ Հոր Սուրբ Գրքում պարունակվող լեզուն:

Պարզությունը այն բանալին է, զավակներս, որով հաղորդվում է Իմ Ամենասուրբ Խոսքը: Հիշեք, ուրիշներին Իմ գոյության ճշմարտության մասին սովորեցնելիս, որ պարզությունը էական է: Եթե այդպես չանեք, չեք հասնի այդ կորած հոգիներին, որովհետև նրանք չեն լսի:

### **Իմ սիրո պատգամը**

Իմ սիրո պատգամը շատ պարզ է: Ես կյանքն եմ, որն Իմ երկրի վրայի զավակները խնդրում են: Բացատրեք, որ Ես ճշմարտությունն եմ: Սա պարզ հասկացրեք: Առանց Ինձ չկա հավիտենական կյանք: Օգտագործեք այս մարգարեությունները, որոնք Ես տվել եմ այս պատգամատարին, որ գրավեք չհավատացողների ուշադրությունը: Սրա համար են այս պատգամները տրվում աշխարհին: Ոչ թե նրանց վախեցնելու համար, այլ ապացուցելու, որ Ես հիմա հաղորդակցվում եմ այսօր մի ձևով, որով Իմ Սուրբ Խոսքը ոչ միայն կլսվի, այլև՝ կհավատան:

Ձեր սիրող Փրկիչ եւ Ուսուցիչ

Հիսուս Քրիստոս

Թագավոր ողորմության

## **Երկինքը կբացվի Նախագգուշացման Ժամանակ**

Երկուշաբթի 23 Մայիսի 2011, ժ. 14.30

Իմ սիրելի քնքուշ աղջիկ, դու հիմա տառապում ես այն տանջանքներով, որոնք Ես եմ զգում մարդու մեղքերի պատճառով: Ահա թե դա ինչի է նման: Հիմա դու զգում ես Իմ տառապանքի միայն մի փոքր մասը, որը Ես զգում եմ օրվա յուրաքանչյուր պահի: Պետք չէ վախենալ Նախագգուշացումից, աղջիկս:

### **Նախագգուշացումը կլինի դրամատիկ իրադարձություն**

Այն կցնցի շատերին աշխարհում, քանի որ դա կլինի մի դրամատիկ իրադարձություն, երբ երկինքը կբացվի, և Իմ Գթասրտության բոցերը կթռչեն աշխարհով մեկ: Քանի որ շատերը չեն հասկանա, թե ինչ է տեղի ունենում, այնքան ցնցված կլինեն նրանք, որ սխալմամբ կկարծեն, թե տեսնում են աշխարհի վերջը: Ասա նրանց, որ ուրախանան, երբ տեսնեն Իմ Փառքը, քանի որ դա, եթե ինչպես հարկն է նախապատրաստված լինեք, կլինի Իմ Գթասրտության ամենաակնառու դեպքը, որ երբևէ եղել է Իմ Խաչելության Օրվանից ի վեր: Սա, զավակներս, կլինի ձեզ տրվող փրկարար շնորհը և կօգնի նրանց, ովքեր առանց դրա դատապարտված կլինեին մտնելու Դժոխքի խորքերը:

Իմ բոլոր զավակներն ամենուրեք պետք է նախագգուշացնեն կորած հոգիներին, թե ինչ պետք է ակնկալեն: Զգուշացրեք նրանց, որ հաշտվեն՝ հիմա

իրենց մեղքերը խոստովանելով: Կարևոր է, որ մինչ այդ որքան հնարավոր է շատ մարդիկ լինեն շնորհի վիճակի մեջ, քանի որ նրանք չեն կարողանա դիմանալ այդ իրադարձությանը շոկի պատճառով: Շատ ավելի լավ է ականատես լինել Աստվածային Ակնառու իրադարձությանը, քան անպատրաստ լինել վերջին Դատաստանի օրվան:

Ուժեղ եղեք դուք բոլորդ: Ուրախացեք, եթե հավատարիմ հետևորդներ եք, քանի որ ձեզ ցույց կտրվի Իմ Աստվածային Ներկայության մի փոքր մասը, որը ձեր նախնիները չտեսան իրենց կյանքի ընթացքում: Աղոթեք Իմ մնացած զավակների համար: Ասացեք նրանց ճշմարտությունը հիմա, քանի դեռ կարող եք: Բանի տեղ մի դրեք նրանց արհամարհանքը, քանի որ եթե հիմա նրանք գործեն՝ աղոթելով իրենց մեղքերի թողության համար, նրանք ձեզ շնորհակալություն կհայտնեն այդ մեծ հրաշքի կատարվելուց հետո: Գնա հիմա խաղաղությամբ: Մի վախեցիր: Պարզապես աղոթիր այն հոգիների համար, ովքեր ունեն մահացու մեղքեր, որպեսզի նրանք չմեռնեն մահացու մեղքերի մեջ:

Ձեր Աստվածային Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## Եթե դժվարանում եք աղոթել

Երեքշաբթի 24 մայիսի 2011թ, Ժ18.00

Իմ սիրելի աղջիկ, Ես այսօր ուրախ եմ, որ այդքան շատ աշխատանք է արվել Իմ Ամենասուրբ Խոսքն աշխարհին հասցնելու համար: Դու երբեք չպետք է մտածես, որ բավարար չափով չես անում այն մարդկանց քանակի պատճառով, ովքեր մերժում են այս պատգամները: Քանի որ Իմ զավակներից նրանք, ովքեր չեն ընդունում Իմ Խոսքը հիմա, նրանք կընդունեն այն երբ ժամանակը գա: Այդ ժամանակ նրանք քաղցած կլինեն Իմ ձայնը լսել:

Հիմա կենտրոնացիր Ինձ վրա: Մի շեղվիր նրանց կողմից, ովքեր վիրավորանքներ են հեղում այս պատգամների վրա: Երբեք մի հուսահատվիր, քանի որ նրանք, ովքեր հիմա լսում են Իմ Խոսքը, փաստորեն տարածում են ճշմարտությունը մյուսներին, Իմ հանդեպ իրենց ունեցած սիրուց ելնելով:

Դարձը մի դժվար մարտահրավեր է այնպիսի աշխարհում, որն այնքան կույր է հավիտենական կյանքի ճշմարտության հանդեպ: Հաստատականություն է

պետք քանի որ որ Սուրբ Հոգու օգնությամբ, ում զորությունը հիմա ամենուր զգացվում է աշխարհում, Իմ զավակները վերջապես ետ կգան դեպի Ինձ: Բայց ոչ բոլորը; Նրանք, ովքեր կնախընտրեն Խաբեբայի կողմից իրենց տրված արհեստական հարմարությունները, նրանց համար չափազանց դժվար կլինի մերժել այն կյանքը, որը վարում են: Աղոթեք ձեր ողջ ընտանիքի և բոլոր ընկերների համար հիմա, որպեսզի բոլորդ կարողանաք միավորվել Իմ հանդեպ ունեցած ձեր սիրո մեջ Նախագգուշացման ընթացքում: Քանի որ եթե ընդունեք այս իրադարձությունը որպես ձեր ազատության արմատ, դուք կպարզևատրվեք Իմ Մեծ Գթասրտությամբ:

### **Աղոթքը հեշտ չէ**

Աղոթքը հեշտ չէ Իմ զավակներից շատերի համար, ովքեր դժվարանում են ասել երկար կրկնվող և փոքր-ինչ ձանձրալի աղոթքներ: Եթե այդ ձևով եք աղոթում և պայքարում եք դրա համար, պարզապես հանգիստ նստեք և հաղորդակցվեք Ինձ հետ լռության մեջ: Պարզապես մտացեք երկրի վրա Իմ կյանքի մասին: Հիշեցում ձեզ այն ժամանակի մասին, որը ես անցկացրեցի այդտեղ և սիրո այն դասերի մասին, որոնք Ես տվեցի ձեզ բոլորիդ: Այդքանը բավական է: Թույլ տվեք ձեզ մտքով հանդարտվել, և Ես կնստեմ ձեզ հետ հայեցողության մեջ: Ես քայլում եմ յուրաքանչյուրի հետ: Ես ներկա եմ կյանքի յուրաքանչյուր պահի, անկախ նրանից, թե դուք ինչ եք անում: Ես երբեք հեռու չեմ: Հիշեք, որ Ես ձեր հենարանն եմ կյանքում: Հենվեք Ինձ վրա: Անկեղծությամբ խնդրեք Իմ օգնությունը, և Ես կլսեմ ձեր կանչը: Ես երբեք չեմ մերժում ձեր խնդրանքը, եթե այն Իմ Սուրբ Կամքին համաձայն է: Այնուամենայնիվ, եթե դուք խնդրում եք շնորհներ, որոնք նախատեսված են ձեզ երկրային ավելցուկներ կտակելու համար, իմացեք, որ Ես երբեք չեմ հեղի դրանք: Քանի որ Ես երբեք ձեզ չեմ տա այնպիսի ընծաներ, որոնք գիտեմ, որ վատ են ձեր հոգու համար: Իմ ընծաները տրվում են, որպեսզի Ես կարողանամ ձեզ ավելի մոտեցնել Իմ սրտին: Քանի որ, երբ դա տեղի ունենա, դուք այլևս ոչ մի բանի կարիք չեք ունենա:

Ձեր սիրող և նվիրված Փրկիչ Հիսուս Քրիստոս

**Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել նրանց,  
ովքեր օգնում են Իմ Սուր Խոսքը տարածելուն**

Հինգշաբթի 25 մայիսի 2011թ ժ16.00

Ես հիմա գալիս եմ արիություն տալու Իմ բոլոր հետևորդներին, երբ նրանք ճանաչելով Իմ ճշմարիտ ձայնը, արձագանքում են առատաձեռնության մեծ գործերով: Ձեզ, ովքեր կամովին ձեր ժամանակն եք տրամադրում քարոզելու և տարածելու Իմ պատգամները, Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել: Դուք, Իմ թանկագին զավակներ, մեծ ուրախություն են բերում Իմ վշտալի սրտին պատմության այս ժամանակահատվածում: Դուք, զավակներս, քաջ եք, խիզախ և լի Սուրբ Հոգու ընծայով: Ձեր հավատարմությունն Իմ հանդեպ և Ինձ տրված ձեր ժամանակի ընծան և սիրով լի նվիրվածությունը ճշմարտությանը մեծ շնորհներ կստեղծեն Նոր Դրախտում, որը Ես խոստացել եմ Իմ զավակներին:

Ես կդեկավարեմ ձեր ձեռքը այս սրբազան աշխատանքի ընթացքում, և դուք զգում եք Իմ սերը: Երբեք մի վախեցեք Իմ Խոսքը հոչակելուց, քանի որ ամենափոքր ջանքերն իսկ, ովքեր օգնում են քարոզել այս պատգամները, կպարգևատրվեն:

Գնացեք հիմա, Իմ թանկագին հավատարիմ հետևորդներ: Տարածեք Իմ Սուրբ Խոսքը և օգնեք ձեր եղբայրներին ու քույրերին, ովքեր ուղղության կարիք ունեն:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Ուղերձ նախագգուշացում համաշխարհային առաջնորդներին**

Հինգշաբթի 25 Մայիս 2011, ժ. 22.00

Աղջիկս, ամբողջ աշխարհում երկրները գտնվում են անհանգստության մեջ՝ մարդու կողմից մարդուն հասցված ատելության և էկոլոգիական ցնցումների հետևանքով: Սա այն է, ինչ Մայր Բնությունը շուտով անսպասելիորեն կսանձազերծի՝ մարդուն ցույց տալու համար, որ նա, անկախ իր ամբարտավանությունից, ոչ մի բան չի վերահսկում:

Մարդը շատ դասեր ունի սովորելու: Իշխանության բարձր մակարդակներում գտնվողների կողմից ուժի համար մղվող մշտական պայքարը ազդում է հասարակ մարդկանց վրա, ովքեր ստիպված են հույսները դնել կառավարության և գործարար մարդկանց վրա, իրենց կարիքների բավարարման համար: Մարդուն անհրաժեշտ օգնությունը ի ցույց կդրվի միայն այն ժամանակ, երբ այդ առաջնորդները կառավարեն՝ ունենալով սեր իրենց սրտերում ժողովրդի հանդեպ: Ցավոք, ազահությունն ու իշխանության ձգտումը ցույց են տալիս, որ այսօրվա համաշխարհային առաջնորդների



գլխավոր նպատակը դա չէ:

### **Հայր Աստված այլևս չի հանդուրժի ձեր մեղավոր գործերը**

Իմ նախագգուշացումը բոլոր առաջնորդների համար ամբողջ աշխարհում ուվքեր էլ որ նրանք լինեն, հետևյալն է. Կատարեք անարդար գործեր և արարքներ ձեր ժողովրդի հանդեպ, և Իմ Հավիտենական Հոր ձեռքն արագորեն կիջնի **այն երկրների և տարածքների վրա**, ուր դուք բնակվում եք: Նա այլևս թույլ չի տա ձեր մեղսալի արարքները: Դուք կթաքնվեք, բայց դա անօգուտ կլինի: Ձեր ոչնչացման զենքերը կոչնչացվեն: Ձեր վերաբերմունքը ձեր համաքաղաքացիների հանդեպ կստեղծի այնպիսի իրավիճակ, անկախ նրանից դա ձեզ դուր կգա թե ոչ, որ դուք ստիպված կլինեք պատասխան տալ Աստծուն՝ Հավիտենական Հորը: Դուք պետք է պահեք ձեր բարոյական պարտավորությունները, որովհետև վերջում դատվելու եք ըստ ձեր գործողությունների:

Միևուր, արժանապատվությամբ և հարգանքով առջնորդեք ձեր ժողովրդին դեպի իրենց ֆիզիկական և բարոյական բարեկեցություն: Ձրկեք ձեր ժողովրդին կրոնական ազատության իրավունքից կամ ցանկացած տեսակի բռնություն հաստատեք, որը կստիպի նրանց դադարեցնել կամ քողարկել իրենց կրոնական գործունեությունը հանուն Քաղաքական միասնության, և դուք կդատապարտվեք: Դուք ոչ միայն կտառապեք ձեր արածների համար, այլև՝ դատաստանը կլինի խիստ: Ձեզանից յուրաքանչյուրը, ով երդվում է Աստծո՝ Հավիտենական Հոր անունով և ներմուծում նոր անարդար օրենքներ, որոնք զրկում են ժողովրդին սննդի, ապաստանի և կրոնական ազատության իրավունքից, կտեսնեն Աստծո՝ Հոր ցասումը:

Աշխարհը տառապում է այժմ բոլոր երկրներում դիկտատորական ռեժիմի պատճառով, չնայած դուք չեք պատկերացնում, թե որ տեղերում: Աշխարհը տառապում է նաև ֆինանսական դժվարություններից, որոնք աղքատներին ավելի են թուլացնում: Հիմա Ես ասում եմ այն բոլոր առաջնորդներին, ովքեր քրիստոնեական պատասխանատվության զգացում ունեն, որ պայքարեն այն իրավունքի համար, որպեսզի իրենց որոշումները լինեն Իմ ուսուցումներին համապատասխան: Դա ամենուր ուղղակիորեն կօգնի Իմ զավակներին:

Ձեզ, որ խմբվում եք իշխանության միջանցքներում՝ վերահսկման միջոցով ազդելու բազմաթիվ երկրների վրա, որը կվնասի ազգ ազգի ետևից, և ամենուր կստեղծի դժվարություններ, Ես ասում եմ հետևյալը. իմացեք, որ ձեր գործերը կպատժվեն: Քանի որ Աստված՝ Հավիտենական Հայրը մինչև հիմա համբերատար է եղել, հուսալով, որ դուք կտեսնեք ձեր արարքների անիմաստությունը. Բայց այդքանից հետո դուք ձեզ առաջ մղեցիք որպես

**Էլիտար Խումբ**, որն ինքն իրեն ավելի կարևոր է համարում, քան մարդկային ռասայի մնացած մասը: Ձեր գործողությունները, նախագգուշացնում եմ ձեզ, կավարտվեն աղետով: Ձեր կապվածությունը հարստությանը, իշխանությանը

և ազահությանը կհասցնի ձեզ ոչ միայն մերկ և խոցելի վիճակի, այլ ավելի վատթար վիճակի, քան նրանք են, ում դուք շահագործում եք ձեր ունեցած իշխանության միջոցով:

Եկել է ժամանակը աշխարհը չարից և Սատանայի իշխանությունից ազատելու պատերազմի համար: Աստված՝ Հայրը, պատրաստվում է սանձազերծել **երկրաշարժեր, ցունամիներ, ջրհեղեղներ**, որպեսզի ստիպի ձեզ արթնանալ: Ձեր դավադրությունները՝ աշխարհի, կրոնական խմբերի առաջնորդներին տապալելու և վերահսկման միջոցառումներ մտցնելու համար, այդ թվում **մեկ համաշխարհային արժույթ** /վայրուտա/, չեն անտեսվի: Այս իրադարձությունները կցնցեն իշխանության հանդեպ ունեցած ձեր կույր ձգտումը: Դուք կարթնանաք կտեսնեք ձեր սխալ ուղիները: Եվ այդ ժամանակ Ես կանգնած սպասելիս կլինեմ: Դուք կվազեք դեպի Ինձ և ոչ միայն ներողամտություն կհայցեք, այլև կօգտագործեք Իմ հանդեպ ձեր ունեցած սերը փոխհատուցելու/վերականգնելու համար: Դուք, զավակներս, որ Իմ հանդեպ ունեք խորը թաղված սեր, Իմ ամենամեծ հույսն եք՝ Չարին և այժմ աշխարհում անարդար քաղաքական կոռուպցիային հաղթելու համար: Աղոթեք շնորհների համար, որոնք կօգնեն ձեզ դեպի Ինձ դառնալ:

### **Կլիմայական աղետներ, որոնք չեն եղել Նոյի ժամանակներից ի վեր**

Աղոթքը, ինչպես Ես ասել եմ նախկինում, օգնում է նվազեցնել աղետներն աշխարհում, մինչ աշխարհն այսօր կանգնած է կլիմայական աղետների շեմին, որոնք մարդկությունը չի տեսել Նոյի ժամանակներից ի վեր: Աշխարհը միանգամից այնքան շատ դժբախտություններ կտեսնի, որ քառսն ու խառնաշփոթությունը նորմալ վիճակ կհամարվի:

Ինչու՞ թույլ կտաք, որ սա պատահի: Ես սա ասում եմ հզոր ֆինանսական ու քաղաքական իշխանություն ունեցողներին, ովքեր գաղտնի են խոսում տեղի ունեցող բաների մասին՝ փակ դռների ետևում: Սա ձեր վերջին ընտրությունն է, որը ձեզ տրվում է ամենուր մարդու հանդեպ ունեցած սիրուց և կարեկցանքից ելնելով, որ դարձի գաք հիմա և վերջ տաք ձեր չար ուղիներին: Կամ էլ կանգնեք հետևանքների առաջ:

Ձեր Արդար Դատվոր

Հիսուս Քրիստոս

Թագավոր Ողորմության

# Գործ ունենալ ֆինանսական դժվարությունների հետ

Ուրբաթ 27 մայիսի 2011թ, ժ 13.00

Իմ սիրելի աղջիկ, Իմ ցանկությունն է, որ հիմա դու սկսես պահեցողություն անել առնվազն շաբաթական մեկ օր: Քանի որ այդպես վարվելով, դու մեծապես գոհություն կպատճառես Ինձ: Այս գոհաբերությունը կուժեղացնի քո հոգու մաքրությունը և քեզ ավելի կմոտեցնի Իմ Սուրբ Սրտին:

Այս ժամանակներում Իմ գավակներն աշխարհում դիմակայում են բազմաթիվ մարտահրավերների: Մարտահրավերներ, որոնց հետ նրանք նախկինում երբեք գործ չեն ունեցել: Հիմա ամենամեծ մարտահրավերը այն ուղին գտնելն է, երբ փողը սկսում է ավելի ու ավելի պակասել: Մա բավականին սափսափեցնող է շատերի համար, ովքեր պահում են իրենց տունը և կերակրում ընտանիքին: Երկրորդ դժվարությունը նրանց կյանքում իմաստալի հոգևոր առաջնորդության պակասն է, որ մինչև հիմա համարվում է կարևոր:

Կորցրեք ձեր եկամուտը և դուք կկորցնեք աշխարհիկ բարիքների հանդեպ ձեր ոգևորությունը: Քանի որ ի՞նչ օգուտ կունենա շքեղ ավտոմեքենան, երբ չեք կարողանում կերակրել ձեր ընտանիքը: Ի՞նչ օգուտ ունի գեղեցիկ զգեստը, երբ չեք կարողանում տաքանալ տան մեջ, որն ի վիճակի չեք ինչպես հարկն է տաքացնել: Միայն ան ժամանակ, երբ Իմ գավակները կգրկվեն այդ ծայրահեղություններից, որոնց նրանք վարժվել են, այդ ժամանակ նրանք կհասկանան այն իրականությունը, որի մեջ մխրճվել են:

Այսօր ձեր հիմնական կարիքները պետք է առաջնահերթ լինեն ձեզ համար: Դրանից հետո դուք պետք է հարց տաք ձեզ. Ի՞նչն է կարևոր հիմա: Երբ արդեն կուշտ եք և հագած, հետո ի՞նչ: Մեկի վերադասությունը մյուսից այլևս կարևոր չէ, երբ դուք պայքարում եք գոյատևման հիմնական տարրերի համար: Ձեր հասանի հարստության և դիրքի նկատմամբ նախանձն արդեն ոչ մի նշանակություն չունի: Միայն այդ ժամանակ է, որ դուք կսկսեք որոնել այն հոգևոր հարմարությունները, որոնք այդքան երկար ժամանակ պակասում էին ձեր կյանքում:

Մտքի հանգստություն գտնելու ձեր որոնման մեջ շրջվեք դեպի Ինձ և Իմ Հավիտենական Հայրը՝ Աստված, ամեն ինչի Արարիչը: **Մի գայթակղվեք բուժամիջոցներ փնտրել հոգևոր բուժողներից**, եթե նրանք չեն ներկայացնում

Ինձ: Մի փնտրեք արհեստական հանգստացնողներ խթանիչների մեջ՝ ձեր ջալն ու վիշտը թեթևացնելու նպատակով: Անհանգստությունից ու տառապանքից ազատվելու միակ ճանապարհը դեպի Ինձ՝ Հիսուս Քրիստոսը, ձեր Փրիչը շրջվելն է:

Հիմա Ես սպասում եմ: Խնդրեք Ինձ, որ օգնեմ ձեզ, և Ես կմատակարարեմ ձեր հիմնական կարիքները: Ես միշտ ձեզ կապահովեմ այն ամենով, ինչի կարիքն ունեք: Բայց դուք պետք է նախ և առաջ խնդրեք Ինձ: Երբեք ձեզ մի պահեք ձեր անհանգստությունները: Կիսեք դրանք Ինձ հետ: Ինձ հանձնեք ձեր բոլոր հոգսերը: Ես անմիջապես կպատասխանեմ: Քանի որ Ես ուրախությամբ եմ լցվում, երբ դուք ամբողջապես վստահում եք Ինձ:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ

Ձեր նվիրված Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Թագավոր Գթասրտության և Կարեկցանքի

## **Մեղքը միշտ կմնա մեղք, անկախ նրանից, թե ինչպես կարդարացնեք այն**

Կիրակի 29 մայիսի 2011թ, ժ 17.30

Իմ սիրելի աղջիկ, որքան եմ Ես լաց լինում Իմ բոլոր զավակների համար, ովքեր մեղանչում են, որովհետև չեն հասկանում Իմ ուսուցումները: Նրանցից շատեր չեն գիտակցում, որ վիավորում են Ինձ, որովհետև կամ նրանց երբեք չեն ասել ճշմարտությունը, կամ էլ նրանք որոշել են պաշտպանել իրենց մեղքերը: Նրանցից շատերը, ովքեր մեղք են գործում, փորձում են արդարացնել իրենց գործողությունը, որոհետև լսում են ուրիշներին, ովքեր օգտագործում են հանդուրժողականությունը որպես պատրվակ մեղքն արդարացնելու համար: Մեղքը միշտ էլ կմնա որպես մեղք Իմ Հոր աչքում, անկախ նրանից, թե որքան փոքր է այն: Շատերը, ովքեր ծանր մեղք են գործում, ինչ-որ կերպ միշտ կարողանում են պաշտպանել իրենց այսպես կոչված <<մեղանչելու իրավունքը>>, կուրանալով այն չարի հանդեպ, որ ներկայացնում է նրանց մեղքը:

**Իմ զավակները բախտավոր են, որ Ես ներում եմ նրանց իրենց մեղքերը**

Եթե միայն Իմ զվակներն ամենուր իմանային Իմ Գթասրտության մասին, այդ դեպքում նրանք կհասկանային, թե որքան բախտավոր են իրենք, որ իրենց տրվում է մեղքերի թողության մեծ ընծան, որը Ես առաջարկում եմ իրենց այս կյանքում: Եթե նրանք կանոնավոր ձևով թողություն չեն խնդրում, ապա նրանց մեղքերը կառաջնորդեն նրանց շարունակելու ներքից ու նորից մեղանչել: Որքան ավելի շատ նրանք մեղանչեն, այնքան ավելի կհեռացնեն իրենց Ինձնից, և այնքան ավելի դժվար կլինի ետ գալ դեպի Ինձ: Լսեք Ինձ: Իմ Գթասրտությունը ներկա է ձեզ բոլորիդ համար, որ օգուտ ստանաք դրանից: Ընդունեք սա հիմա Ինձնից: Թույլ մի տվեք, որ աշխարհը ձեզ ծուղակը գցի՝ ձեզ թույլ տալով դառնալ մեղքի գայթակղությունների գոհը: Հենց որ մեղք եք գործում, ընկնում եք թակարդը և չեք իմանում, թե ուր շրջվեք: Մեղքը ձեզ անհանգստություն է պատճառում խորը ձեր ներսում:

### **Հանդուրժողականությունը ժամանակակից է այսօր**

Իմ զավակներից այնքան շատերն են շարունակում բարձրաձայնել <<Հասարակության մեջ հանդուրժողականության>> անհրաժեշտության մասին: Այսօր հանդուրժողականությունը ժամանակակից է իր անճշգրիտ իմաստով: Այն կարող է օգտագործվել աղավաղելու համար նույնիսկ մեղքերից ամենածանրը: Հանդուրժողականությունը խելամտորեն կադապարվում է պաշտպանելու համար ցանկացած մեղք, որն այսօր գոյություն ունի աշխարհում: Բոլորը հայտարարում են հանդուրժողականության իրավունքի մասին: Ինչպիսին էլ որ լինի մեղքը, այն մեծամասամբ կքարոզվի որպես քաղաքացիական իրավունք: Անկախ նրանից, թե ինչպես են այդ մեղքերը քարոզվում որպես <<Ճիշտ>>, նրանք միշտ կմնան սխալ: Ժամանակն է, որ մարդը կանգնի ճշմարտության դիմաց: Որպեսզի նորից պատասխանատու դառնա: Որպեսզի ընդունի, որ մեղքի գործողությունները, որոնց նա մասնակցում է, բարոյապես սխալ են: Որպեսզի վարվի իր ընկեր մարդկային արարածների հետ, ներառյալ արգանդում գտնվող իրենց զավակների, որպես ամեն ինչում հավասար:

Աղոթեք ջանասիրաբար շնորհների համար, որ տեսնեք ճշմարտությունն այնպես, ինչպես այն կա, այլ ոչ թե այն դոկտորական տարբերակը, որին դուք ընտրում եք հավատալ, որովհետև այն հարմար է ձեր եսասիրական նպատակներին: Միայն մեկ ճշմարտություն կա: Ձեր սրտերի մեջ, ձեզանից յուրաքանչյուրը գիտի ճշտի և սխալի միջև եղած տարբերությունը: Ընդունեք սա հիմա, եթե ցանկանում եք, որ Ես փրկեմ ձեզ դժոխքի կրակներից:

Ձեր Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# Արդարադատության սրերը կիջնեն հիմա

Կիրակի 29 Մայիս 2011թ., ժ. 03.00

Լսեք հիմա Ինձ, Իմ երեխաներ ամենուր: Արդարադատության սրերը կիջնեն նրանց վրա, ովքեր չեն կարողանա ինպես հարկն է նախապատրաստվել Նախագուշացմանը:

Իմ Աստվածային Գթասրտության բոցերը, որոնք կներկայացրվեն աշխարհին, ձեզանից յուրաքանչյուրին զգացնել տալու համար, թե Վերջին Դատաստանի Օրն ինչի նման է լինելու, սխալ կմեկնաբանվի ձեզանից այնքան շատերի կողմից: Նախագուշացման այդ մեծ օրը ամսեամիս մոտենում է: Ուստի դուք պետք է ժամանակ տրամադրեք Իմ Աստվածային Գթասրտության համար նախապատրաստվելու:

Շատ շատ հոգիների համար դժվար կլինի հասկանալ, թե ինչ է իրականում նշանակում այդ իրադարձությունը. Այնքան շատերը կմահանան շոկի հետևանքով, որը տխրեցնում է Ինձ, քանի որ նրանք, ովքեր չեն գոյատևի, դա կլինի իրենց հոգիների խղճալի վիճակի պատճառով: Կաթոլիկներն ամենուր պետք է փնտրեն խոստովանություն հիմա, եթե ուզում են օգուտ ստանալ Իմ սիրող ողորմածության այս մեծ գործից: Քրիստոնյաներն ու այլ հավատի ներկայացուցիչները պետք է լռությամբ խոսեն եւ պատմեն Աստծուն իրենց զղջման մասին, թե որքան են ափսոսում իրենց հետաճի համար և Նրանից խնդրեն, որ ների իրենց մեղքերը: Միայն նրանք, ովքեր ուժեղ են սրտով Իմ և Աստծո՝ Ամենակարող Հոր հանդեպ ունեցած իրենց սիրով, նախապատրաստված կլինեն համապատասխան ձևով: Ուրիշները, իրենց մտքի ուժի եւ բնավորության շնորհիվ վերջապես կկարողանան հասկանալ ճշմարտությունը, եւ սիրով կընդունեն Ինձ իրենց սրտերում:

Ինչ վերաբերում է մյուսներին, այնքան կոպիտ կլինի շոկը, որ երբ նրանց հոգիները բացահայտվեն նրանց իրենց մթության մեջ, նրանք մեռած կընկնեն: Այդ ժամանակ արդեն շատ ուշ կլինի ներողամտություն հայցելու համար. Նրանց համար հույս չի լինի: Աղոթեք, աղոթեք դուք բոլորդ, որպեսզի որքան հնարավոր է շատ հոգիներ գոյատևեն մեծ Ողորմության այս գործողությունից:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# Նախագգուշացում նրանց, ովքեր ներգրավված են սատանայական պաշտամունքների մեջ

Երկուշաբթի, 30 մայիսի, ժ 22.00

Աղջիկս, հիմա դու ավելի ուժեղ ես դառնում և, Իմ ամենասուրբ կամքին քո հնազանդության միջոցով, հիմա կարող ես ազդանշան տալ այն մասին թե ինչ է սպասվում:

Երբ Ես խոսում եմ մեղքի մասին, Ես դեռևս չեմ բացահայտել այն նողկալի մեղքերը, որոնք կատարվում են, որոնք նույնիսկ կանոնավոր մեղավորները կդժվարանան պատկերացնել: Արևմտյան այսպես կոչված խեղաթյուրված հասարակության փակ դռների ետևում կատարվող նողկալի պրակտիկան կցնցի ձեզ մինչև ոսկորները:

Չար վայրագությունները, ուր ծիսակատարություններով սպանում են երեխաների՝ ի պաշտպանություն Սատանայի, այսօր իրականություն են աշխարհում: Բայց դրանք Մարդու կողմից Սատանայի ազդեցությամբ կատարվող չափազանց չար գործողություններից միայն մի քանիսն են: Շարունակեք այդպես, զավակներս, և ձեզ համար անհնարին կդառնա վերադառնալ դեպի Ինձ: Մյուս գործողությունները, որոնցից Իմ սիրտը կոտրվում է, ներառում են ֆիզիկական բռնությունները, հատկապես անմեղ երեխաների հանդեպ: Թույլ տվեք Ինձ թվարկել ձեզ այն մեղքերը, որոնք մեծապես կազդեին ձեզնից շատերի վրա, եթե Ես դրանք նկարագրեի մանրամասն կերպով: Սատանայի հետևորդները իրենց կուլտերի միջոցով վայրագաբար են վարվում այն մարդկային արարածի հանդեպ, ում չեն հարգում: Չոհաբերությունները, ներառյալ մարդկային, հայիոյանքները, անեծքները և ներառյալ Իմ, Իմ Հավիտենական Հոր և Իմ Օրհնյալ Մոր հանդեպ սրբապղծությունները կանոնավոր պաշտամունքներ են: Այդ սատանայական պաշտամունք կատարողներն այնքան անամոթ են, որ հրապարակայնորեն ծածանում են իրենց անհարգալիք վերբերմունքը երեժշտության, կինոնկարների, հեռուստատեսության և նկարչության միջոցով: Նրանք, ովքեր մեղավոր են այսպիսի սրբապղծությունների մեջ կկանգնեն հավիտենական դատապարտության առջև, ուր նրանք կայրվեն դժոխքում հավիտյան:

Սա վերջին նախագգուշացումներից մեկն է, որը դուք կստանաք Ինձնից՝ ձեր Փրկիչ Հիսուս Քրիստոսից: Նաև իմ վերջին խնդրանքն է ձեզ՝ փրկել ինքներդ ձեզ, քանի դեռ կարող եք:

Ես՝ Հիսուս Քրիստոսը, դատարկ տեղը չեմ վախեցնում: Ես կանեմ ամեն ինչ, որ փրկեմ ձեզ: Բայց որոշակի սահմանից այն կողմ Ես ոչինչ չեմ կարող անել, որ կանգնեցնեմ ձեզ փնտրելուց այն կեղծ սփոփանքը, որը ձեր կարծիքով կառաջարկվի ձեզ Չարի կողմից: Բացեք այն սատանայական կապանքները, որոնցով կապված եք և թռեք Ինձ մոտ հիմա: Ես կփրկեմ ձեզ, բայց դուք պետք է խնդրեք Ինձ, որ ներեմ ձեզ, քանի դեռ կենդանի եք այս կյանքում:

Հիշեք, դա ձեր ընտրությունն է, երկինք կամ դժոխք: Դուք ընտրում եք, քանի դեռ կենդանի եք այս երկրի վրա: Որովհետև դուք չեք կարողանա անել դա, երբ անցնեք հաջորդ կյանք:

Ձեր միշտ համբերատար և սիրող Հիսուս Քրիստոս

## **Ասա նրանց, որ Ես սիրում եմ իրենց, բայց Ես ցանկանում եմ, որ նրանք խոսեն Ինձ հետ**

Երեքշաբթի 31 մայիսի, 2011թ, ժ 10.00

Իմ սիրելի աղջիկ, սա քեզ համար բավականին տարօրինակ ճամփորդություն է այսքան կարճ ժամանակում: Ես հասկանում եմ, որ դու հիմա հոգնած ես: այն արագությունը, որով դու ստացար այս պատգամները, և որով դրանք հրատարակվեցին այդքան շատ լեզուներով այդքան արագորեն, ցույց է տալիս նրանց հրատապությունը: Սա նաև ցույց է տալիս, որ աստվածային առաջնորդությունն աշխատում է իր ամենակատարյալ ձևով:

Այս պատգամները, լի Իմ ուսուցումներով, իսկապես տրվում են, բացատրելու համար ձեր հոգիների կարևորությունը այս կյանքում, քանի դեռ կարող եք: Շատերը, երբ կարդան այս պատգամները, հատկապես նրանք ովքեր քիչ հավատ ունեն Աստծո՝ Հավիտենական Հոր հանդեպ, կանհանգստանան: Շատերը դարձի կգան: Ոմանք կվախենան այս երկրի վրա իրենց ապագայի համար և իրենց ընտանիքների ու ընկերների ապագայի համար:

**Խնդրում եմ ասա նրանց, որ Ես սիրում եմ իրենց:** Եթե նրանք սկզբում բացեն իրենց մտքերն այն փաստի հանդեպ, որ աստված իսկապես գոյություն ունի, ապա նրանք պատրաստ կլինեն երկրորդ էտապի համար: Դա այն ժամանակ, երբ նրանք սկսեն մտածել, թե ինչու է այսպիսի հաղորդակցություն տեղի ունենում, ինչու՞ Հիսուս Քրիստոսը՝ Աստծո՝ Հավիտենական Հոր միակ Որդին, դիմում է այդպիսի արտասովոր քայլերի, այդ ժամանակ նրանք կգան ակնհայտ եզրակացության: Որովհետև Ես սիրում եմ ձեզանից յուրաքանչյուրին և ամեն



մեկիդ, այդ պատճառով է, որ Ես ցանկանում եմ փրկել ձեզ: Ես ցանկանում եմ փայփայել ձեզ բոլորիդ և Ես պետք է գնամ ամենաանսովոր ուղղություններով, որ ձեզ ավելի մոտեցնեմ Իմ Սրտին:

Ես ցանկանում եմ դիպչել ձեր սրտերին, որպեսզի ձեր հոգում մի լույս առկայծի: Այս աշխարհում ոչնչից չպետք է վախենալ, եթե դուք ամբողջապես վստահեք Ինձ: Ես հրաշալի ծրագրեր ունեմ ձեզ բոլորիդ համար, ովքեր ավելի կմոտենան Իմ Սուրբ Սրտին: Ամենաարտասովոր ընծաներն են սպասում ձեզ: Մի վախեցեք աշխարհիկ անհանգստությունից: Քանի որ Ես կպաշտպանեմ բոլոր նրանց, ովքեր հավատում են Ինձ, և **կապահովեմ ձեր մարմնի կարիքները:** Վստահեք Ինձ՝ մարդկության Տիրոջը՝ նորից ուղարկված, որ փրկի ձեզ հավիտենական խավարից:

**Դարձեք դեպի Ինձ ինչպես անմեղ երեխաներ:** Կարիք չկա աղոթքներ սովորելու, եթե անգրագետ եք: Այո, դրանք օգնում են, բայց Ես ձեզնից միայն խնդրում եմ, որ խոսեք Ինձ հետ այն ձևով, ինչպես սովորաբար զրուցում եք ընկերոջ հետ: Հանգստացեք, վստահեք Ինձ: ԽՆդրեք Ինձնից Իմ օգնությունը: Իմ գթասրտությունն առատ է դուրս է հորդում, սպասելով միայն, որ հեղվի ձեզ վրա: Եթե միայն իմանայիք, թե Ես ինչպիսի կարեկցանք ունեմ երկրի վրա ձեզնից յուրաքանչյուրի հանդեպ: Նույնիսկ մեղավորների: Իմ զավակները մնում են Իմ զավակները, նույնիսկ երբ մեղքն է աղտոտում նրանց հոգիները: Ես նողկում եմ մեղքից, բայց սիրում եմ մեղավորին:

Ձեզնից այնքան շատերն են վախենում կանոնավոր կերպով թողություն հայցել: Դուք երբեք չպետք է անհանգստանաք: Երբեք: Եթե դուք ճշմարիտ ցավում եք, ապա ներում կստանաք

Մեղքը, զավակներս, կլինի մշտական խնդիր: **Նույնիսկ Իմ ամենանվիրյալ հետևորդներն են մեղանչում:** Եվ մեղանչում են: Նորից ու նորից: Դա փաստ է: Երբ Սատանան սանձազերծվեց, մեղքը դարձավ համատարած: Շատերը շատ են ամաչում շրջվել դեպի Ինձ: Նրանք խոնարհում են իրենց գլուխները, և չտեսնելու են տալիս, երբ վատ են վարվում: Չափազանց հպարտ և շփոթված նրանք շարունակում են, ասես այդ մասին կմոռացվի: Նրանք չեն հասկանում, որ **խավարը ձգում է խավար:** Ուստի երբ մի անգամ մեղք եք գործում, շատ ավելի հեշտ է նորից մեղք գործել: Փակելով ձեր գիտակցությունը, այդ դեպքում ցիկլը նորից ու նորից պտտվում է: Հետո մեղավորը կբերի ամեն տեսակի պատճառաբանություն, անտեսելու համար սխալ արարքը: Նրանք կշարունակեն ոլորվելով դեպի ցած ընկնել: Սա այն պատճառով, որ նրանք չգիտեն, թե ինչպես թողություն խնդրեն: Քանի որ նրանք չեն հասկացել խոնարհության կարևորությունը, նրանք անհնար են համարում շրջվել դեպի Ինձ: Բարդ բան չէ, գիտեք, թողություն խնդրել: Երբեք մի վախեցեք Ինձնից: Ես

սպասում եմ ձեզանից յուրաքանչյուրին, ով արիություն ունի արհամարհել իր սեփական մեղքերը: Երբ դուք դարձնում եք դա սովորություն, ձեզ տրվում են արտակարգ ընծաներ: Ձեր մեղքերի խոստովանությունից հետո դուք շնորհի վիճակում եք գտնվում: Հետո, երբ ստանում եք Հաղորդություն, կզգաք մի ներթափանցող էներգիա, որը ձեզ կգարմացնի: Միայն և միայն այդ ժամանակ դուք կգտնեք ճշմարիտ խաղաղություն:

Ոչինչ ձեզ չի վրդովվեցնի: Դուք ուժեղ կլինեք ոչ միայն հոգով: Ձեր միտքը կլինի ավելի հանգիստ և ավելի վերահսկելի: Դուք կնայեք կյանքին տարբեր և ավելի դրական հայացքով: Ո՞վ չի ցանկանա այդպիսի կյանք:

Եկեք ետ, զավակներս, դեպի Ինձ, աշխարհում վշտի այս ժամանակ: Թույլ տվեք Ինձ ցույց տալ ձեզ այն ուրախությունը, որը ձերն է, երբ դուք շրջվեք դեպի Ինձ:

Հիշեք, որ Ես ժամանակին Իմ կյանքը տվեցի ձեզ համար: Ես կպատասխանեմ ձեր կանչին: Ձեզ մնում է միայն խնդրել:

Ձեր թանկագին սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Գարաբանդալի մարգարեությունը հիմա կդառնա իրականություն**

Երեքշաբթի 31 մայիսի 2011թ, ժ 15.30

Իմ սիրելի աղջիկ, մենք երկար ճանապարհ ենք անցել այսպիսի կարճ ժամանակում: Դա նպատակ ուներ: Քանի որ ամեն անգամ կարիք կար հանձնել Իմ ամենասուրբ խոսքը Իմ Սիրո հանդեպ քաղցած աշխարհում: Նրանք դեռ չեն լսում: Որովհետև չեն ցանկանում իմանալ: Մինչ Իմ հավատարիմ հետևորդներից շատերն են զգոն հիմա գալիք փոփոխությունների հանդեպ, այնքան շատերը ընդհանրապես հետաքրքրություն չունեն մինչ այժմ Իմ Սիրելի Մոր կողմից աշխարհին տրված նախազգուշացումների հանդեպ: Գարաբանդալում տրված մարգարեությունները հիմա իրականություն կդառնան: Նախապատրաստվեք հիմա այդ իրադարձությանը, քանի որ ձեզ մնացել է **միայն մի քանի ամիս, որ նախապատրաստեք ձեր հոգիները:**

Խնդրում եմ մի վախեցիր աղջիկս, քանի որ Ես գիտեմ, որ այդ իրադարձությունները տխրեցրել են քեզ, որովհետև դու մտածում ես քո զավակների ապագայի մասին: Նախագգուշացումը կփոխի ամեն ինչ: Բայց այն կներկայացնի մի ճյուղավորում ճանապարհի վրա: Մարդկությունը, երբ արթնացվի Աստծո գոյության ճշմարտության հանդեպ, այդ ժամանակ, իր սեփական ազատ կամքով կընտրի այդ երկու ճանապարհներից մեկը: Փրկության ճանապարհը, կամ դատապարտության ճանապարհը:

### **Երկնային պատիժը կարբի աշխարհի մեծ մասը**

Աղոթիր ջանասիրաբար, որ մարդկությունն ընտրի առաջինը: Քանի որ եթե չընտրի, **աշխարհը կտառապի ամենադաժան երկնային պատժից, որը կարբի աշխարհի մեծ մասը:** Ինչու՞ պետք է Իմ զավակները ցանկանան սա: Այո, մեղքի պատճառով մարդը դժբախտաբար կընտրի անտեսել Իմ խոստումը և հետևել Խաբեբայի ուղուն: Ես ասել եմ քեզ, որ քեզ չեմ տա Նախագգուշացման ամսաթիվը, քանի որ սա հայտնի է միայն մի քանի ընտրյալ հոգիների: Քանի որ եթե այդ օրը հայտարարվեր, մարդիկ կհակվեին ազատագրում փնտրել կեղծ խոնարհությունից ելնելով: Վստահեք Ինձ: Ամեն ինչ լավ կլինի, զավակներս: Օրինյալ եք դուք, որ ձեզ տրվել է Հայտնության այս հրաշալի ընծան: Աշխարհը հիմա թվում է թե դարձել է ավելի հանգիստ և ինչ-որ տարօրինակ գալիք ամիսներին դեպի Նախագգուշացումը: Քանի որ երբ այն տեղի ունենա, չնայած այն տեսողականորեն տպավորիչ կլինի երկնքում, այնքան հանդարտ կլինի այդ խորհրդավոր փորձառությունը, որ դուք ավելի շատ նախապատրասատված կլինեք ձեր գիտակցության հետ այդ լուռ հանդիպմանը:

Հիշեք, որքան շատ մարդիկ նախապես զգուշացվեն այս իրադարձության վերաբերյալ, այնքան շատ հոգիներ կփրկվեն: Աղոթեք, աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը այն հոգիների համար, ովքեր կմահանան Նախագգուշացման ընթացքում: Նրանք ձեր աղոթքների կարիքն ունեն:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

### **Հոմի Պապ Բենեդիկտի օրերն այժմ հաշված են**

Հինգշաբթի 1 հունիսի 2011թ, Ժ11.00

Իմ սիրելի աղջիկ, դու հենց նոր փորձության ենթարկվեցիր, հանուն Իմ ամենասուրբ անվան, որ շեղվես ճշմարտությունից: Սա կանոնավորապես տեղի կունենա, քանի որ չի լինի մի օր, որ Խաբեբան չփորձի քեզ հեռացնել այս աշխատանքից, քո մտքում կասկածներ դնելու միջոցով:

Դու **չպետք է նայես մյուս տեսանկյունների պատգամներին**, կամ լսես այլ մարդու, ով հայտարարում է, թե գալիս է Իմ անունով, եթե նա տա քեզ մի այնպիսի պատգամ, որը կհակասի այն խոսքին, որ դու ստանում ես Ինձնից: Իմ մարգարեությունները ճշտորեն տրվում են քեզ, աղջիկս: Սատանան կշարունակի հարվածել և վնասել քեզ, երբ դու ամենաքիչն ես սպասում դրան: Ուստի միշտ զգոն եղիր: **Իմ սիրելի Երեցի օրերը հիմա հաշված են:** Նա ստիպված կլինի **հեռանալ Վատիկանից, նախքան Նախագգուշացումը** տեղի կունենա: Վստահիր Ինձ: Ենթարկվիր Ինձ: Դու հիմա լավ ես առաջանում: Բայց երբեք աչքերդ Ինձնից մի հեռացրու:

Այնուամենայնիվ մի վախեցիր ապրել նորմալ կյանքով քանի դեռ աղոթքն ու Իմ հանդեպ պաշտամունքը քո կյանքի համապարփակ ու կարևոր մասն են կազմում: Ես այժմվանից կապահովեմ, որ դու միայնակ չլինես այս աշխատանքը կատարելիս, և որ միայն նրանք, ովքեր Իմ կողմից են ուղղություն ստանում, ունենան ազդեցություն քո զանազանման վրա:

Վստահիր Ինձ, երբ ասում եմ, **որ Սատանան դիվեսիայի չի ենթարկի Իմ Խոսքը**, ոչ էլ կթունավորի այս պատգամները, որոնք դու ստանում ես Ինձնից: Դա տեղի չի ունենա այս դեպքում, քանի որ այս առաքելությունը հույժ կարևոր է, և քեզ տրվում է ամեն տեսակի պաշտպանություն, աղջիկս: Եթե երբևէ անհանգստություն զգաս որևէ պատգամի համար, պարզապես հարցրու Ինձ պատասխանը, և այն կտրվի քեզ: Մի հարցրու ուրիշ ոչ մեկին իրենց կարծիքը, որովհետև նրանց տրված չէ մեկնաբանել Իմ Աստվածային Խոսքը:

Երբեք մի մտածիր այլ տեսանկյունների պատգամների մասին: Սա շատ կարևոր է, քանի որ այն կվնասի քո աշխատանքին:

Մինչ այժմ դու գիտես, որ Ես՝ ձեր Փրկիչն ու մարդկության Թագավորը, Իշխանություն ունեմ: Ոչ մի մարդ չպետք է արատավորի Իմ Խոսքը: Շնորհակալ եղիր, որ քեզ տրվում է մարգարեության ընծան, և Ինձ ենթարկվիր միշտ: Երբեք մի վիրավորիր Ինձ՝ կասկածելով: Այդ ժամանան արդեն անցել է: Փնտրիր խոնարհությամբ քո սրտի և հոգու մեջ: Լուռ մնա, երբ Իմ Խոսքը ծաղրի է ենթարկվում, երբ հարձակվում են Իմ Խոսքի վրա, մերժում, հակասում կամ կասկածում, քանի որ քո գործը չէ պատասխան տալ Իմ փոխարեն: Դու Ինձնից չափազանց շատ բան կսովորես, աղջիկս, եթե նստես և լսես Ինձ: Ես քո

մտքի մեջ ներարկում եմ զանազանելու ընծան: Ընդունիր այս ընծան: Մի կասկածիր: Ուրախացիր Ինձ հետ:

Սա չափազանց կարևոր առաքելությունն է, տարբեր՝ մինչ այժմ որևէ մարգարեի միջոցով մարդկությանը տրվածներից: Մարդկային առումով քո կողմից ուժ է պահանջվում: Հիմա կարևորն այն է, որ պարզապես հաղորդակցվես Ինձ հետ աղոթքի, պաշտամունքի և Օրհնյալ Խորհուրդների միջոցով: Մնացած ամեն ինչ պետք է սրանից դուրս լինի: Քո ընտանիքը չափազանց կարևոր է: Այս երկուսից դուրս ցանկացած ամեն ինչ ավելի ցածր մակարդակի վրա է գտնվում: Փորձիր հանդստանալ և զգալ Իմ սերը: Անտեղի մի ծախսիր թանկարժեք ժամանակը անհանգստանալու վրա: Պարզապես ամբողջովին միացիր Ինձ, և ապահով կլինես վնասվելուց: Ես սիրում եմ քեզ, աղջիկս, և վստահում եմ քեզ:

Ձեր նվիրված Փրկիչ և Ուսուցիչ

Հիսուս Քրիստոս

## **Սատանան հավաքագրում է երիտասարդների փոփ (pop) մշակույթի միջոցով**

Շաբաթ 4 հունիսի 2011թ, ժ17.00

Իմ սիրելի աղջիկ, դարձը, որպես Իմ կողմից քեզ տրված պատգամների ուղղակի արդյունք, տարածվում է աշխարհով մեկ: Ուրախացիր, քանի որ Ես քեզ ասել էի, որ Իմ խոսքը, երբ կարդացվի, ամենուր կբոցավառի հոգիներ, ներառյալ գաղջ մեղավոր հոգիները: Երբ Ես տվեցի աշխարհին Իմ խոսքը հազարավոր տարիներ առաջ Իմ սիրելի առաքյալներին, նրանք մեծ ազդեցություն ունեցան մարդկության վրա: Այսօր, բացառությամբ Աստծո՝ Հավիտենական Հոր և Իմ հետևորդների, այդ ասվածների մեծ մասը դժբախտաբար մոռացվել է:

Իմ հաղորդակցությունները քո միջոցով, աղջիկս, Իմ ուսուցումները փորձելն ու պարզեցնելն է: Ամենակարևորը, պատճառը, որ Ես այսօր խոսում եմ քեզ հետ, Իմ Ամենասուրբ Խոսքի հիշեցումը, ուսուցումն ու ներարկումն է Իմ զավակների մտքերի մեջ, որպեսզի նրանք կարողանան փրկվել Սատանայի ճիրաններից:

Աղջիկս, Ես լցրել եմ քո հոգին, Սուրբ Հոգու ընծայի միջոցով, զանազանության ուժով: Այս ուժը տրվում է քեզ ոչ միայն այս պատգամները հասկանալ

կարողանալու համար, այլև բացահայտելու համար մեղքի չարությունը: Հիմա, երբ դու ականատես ես լինում մեղքի, դու այն աստիճան ես քեզ վատ զգում, որ դա ստիպում է քեզ հոգվել: Հիմա Ես քեզ տալիս եմ մի փոքր այն զգացողությունից, որով Ես տառապում եմ, երբ տեսնում եմ Իմ զավակներին մեղքից աղտոտված:

Նրանցից շատերը, ում դու քո ամենօրյա կյանքում տեսնում ես, **լրատվամիջոցներով, կինոնկարներում և հեռուստատեսությամբ**, քեզ շփոթության են մատնում: Մեղքը, երբ այն առկա է հոգում, ցուցադրում է ինքն իրեն այն ձևով, որը պարզ երևում է որոշ նշանների միջոցով: Դու, աղջիկս, կարող ես հիմա Իմ շնորհների միջոցով անմիջապես նկատել մեղքը մարդու մեջ: Առաջին նշանը, որ կտեսնես՝ գոռոգամտությունն ու հպարտությունն է, երբ մարդ իրեն մեկ ուրիշից ավելի կարևոր է համարում: Քեզ ներկայացվող մյուս նշանների արմատը հպարտության և ազահույության մեջ է:

Այսօր աշխարհում ամենազազրելի մեղքերից մեկը **սեռական ինքնահաճությունն է**: Երբ այն ներկայացվում է աշխարհին, այն միշտ կքողարկվի հումորով: Սա մի խելացի ձև է՝ փորձելու համոզել ուրիշներին, որ դա ձեր մարդկային կառուցվածքի բնական մասն է: Հասկանում ես, աղջիկս, աշխարհում յուրաքանչյուր մարդ սիրում է ծիծաղել և կարիք ունի հումորի զգացողության, որը մի ընծա է Աստծուց: Ուստի երբ քարոզվում է շեղված սեռական վարքագիծ, այն սովորաբար կներկայացվի այնպես, որ ստիպի ձեզ ծիծաղել: Այստեղ է, որ այն կստորացնի ոչ միայն կանանց, այլև կազդի երիտասարդ երեխաների վրա, այնպես որ նրանք կընդունեն **չար անկումային (դեկադենտական) վարքագիծը որպես նորմալ փոփ մշակույթ**:

**Սատանան սիրում է հավաքագրել երիտասարդ հոգիներ**: Ուստի նա օգտագործում է ժամանակակից միջոցները՝ Իմ այդ թանկագին փոքրիկ գառնուկներին թիրախ դարձնելու համար: Նրանք, Իմ փոքրիկ զավակները, ականա հետամուտ կլինեն իրենց զգվելի պահվածքին, որն ավելի կխրախուսվի իրենց հասակակիցների կողմից:

**Նախագգուշացում երաժշտության արդյունաբերության մեջ գտնվողներին**

Ես հիմա նախագգազգուշացնում եմ բոլոր նրանց, ովքեր երաժշտության, կինեմատոգրաֆիայի և արվեստի արդյունաբերության մեջ են: Եթե դուք շարունակեք թունավորել Իմ զավակներին, դուք դաժանաբար կպատժվեք: Դուք, Իմ մոլորված (սխալ ուղիով գնացող) զավակներ, **խամաճիկներ եք Սատանայի զինանոցում**: Նա օգտագործում է ձեզ, սկզբում հրապուրելով ձեզ **հարստության, հռչակի և ճոխության փայլով** Հետո նա գրավում է ձեր հոգին: Դրանից հետո նա ձեզ քարշ կտա անառակության խորքերը, ուր նրա **դները**

**կմտնեն ձեր մարմնի մեջ**, այնպես որ կարողանան կատարել իրենց սեփական սահմոկեցուցիչ կտիրությունները և սեռապես անառակ արարքները: Այդ ամբողջ ընթացքում դուք կմտածեք, որ դա պարզապես անվնաս ժամանց է: Մի՞թե չգիտեք, որ ձեր հոգիները գողացվում են: Մի՞թե ձեր հոգը չէ: Մի՞թե չեք հասկանում, որ եթե կատարում եք այդ **լկտի սեռական անառակության** գործողությունները, դուք ընդմիշտ կկորչեք: Մինչ ազահորեն փնտրում եք նոր զգացողություններ, ուր վերջին գործողությունն այլևս գոյություն չի ունենա, դուք կդառնաք անհագ: Դրանից հետո կավերեք ինքներդ ձեզ: Ի՞նչ եք կարծում, ինչու՞ են ձեզնից այնքան շատերը, ովքեր ապրում են մշակույթի փառք կոչվող կեղծ ֆասադում, **ինքնասպանություն գործում**: Չափից դուրս թմրանյութ են օգտագործում: Դեպքեսիա՞ն են զգում: Հուսահատորեն լա՞ց եք լինում ձեր սրտերի մեջ: Մի՞թե չգիտեք, որ սատանան արագորեն ձեր հոգին է ցանկանում: Որքան շուտ դուք մեռնեք մահացու մեղքի մեջ, այնքան արագ կարող է Սատանան գողանալ ձեր հոգին Աստծուց՝ Հավիտենական Հորից, ձեր Արարչից:

Այս ստի մեջ բռնված Իմ զավակների համար դժվար է հասկանալ: Բայց դրա մասին մտածեք այս կերպ: Նույնիսկ երբ դուք մեղքի մեջ եք, **Աստծո լույսը դեռևս ներկա է ձեր մեջ**: Շատ մեղավորներ և աթեիստներ չեն հասկանում սա: Նրանք շարունակում են դեպի ներքև իենց պտույտը՝ ավելի մոտենալով Դժոխքին: Սակայն միայն Աստծուց եկող լույսն է, որ դեռևս պահում է նրանց ողջամտությունը: Առանց Աստծո լույսի այս երկիրը կլինի խավարի մեջ: Այդ խավարը, երբ այն զգաք, սարսափի կմատնի ձեզ: Ձեր մեղսալի արարքները ոչ միայն զարշելի կլինեն ձեզ համար, այլև դուք կցանկանաք փախչել և թաքնվել: Քանի որ նույնիսկ այդ ժամանակ, երբ Աստծո լույսը հանկարծ հայտնվի, դուք չեք կարողանա դիմանալ դրա փայլին:

**Առանց Աստծո լույսի հոգու ամբողջական խավար է**: Քանի որ դուք, զավակներս, երբեք առանց այդ լույսի չեք եղել, դուք չեք կարողանա գոյատևել, եթե և երբ այդ լույսը հանգչի:

**Մենք ձեր հոգին, հոգին այն ամենն է, ինչ դուք կտանեք ձեզ հետ հաջորդ կյանք**

Նախազգուշացումը ձեզ կտա մի հասկացողություն, թե ինչի նման է այդ զգացողությունը: Եթե Նախազգուշացման ժամանակ լինեք մահացու մեղքի մեջ, չվախենաք, քանի այն միայն Նախազգուշացում է: Տխուր է, բայց ձեր մեղքերն այնքան ցնցող կլինեն, երբ դուք նրանք տենեք շարքով և տգեղ վիճակում, որ դրանք կարող են վնասել ձեզ ձեր ֆիզիկական վիճակում շուկի միջոցով: Մի սպասեք մինչև այդ պահը: Արեք ինչ-որ բան հիմա ձեր հոգևոր կյանքի համար: Հաշվի առեք ձեր հոգու արժանապատվությունը: Մենք ձեր հոգին, որովհետև դա այն է, ինչը դուք կտանեք ձեզ հետ հաջորդ կյանք: Ձեր

մարմինը նշանակություն չունի: Այնուամենայնիվ, եթե օգտագործեք ձեր մարմինը, որը տրված է ձեզ Աստծո՝ Ամենակարող Հոր կողմից որպես ընծա, մեղավոր կերպով, այնպես, որ ուրիշներին ստիպեք մեղք գործել, ապա ձեր մարմինը կլինի ձեր հոգու անկման պատճառը:

Մտածեք, զավակներս ձեր ապագա երջանկության մասին: Քանի որ երկրի վրա ձեր ժամանակը միայն ժամանակի մի հատված է, որ կզգաք ձեր գոյության մեջ: Ձեր հոգուն չհետևելը կերաշխավորի ձեր մեկուսացված լքվածությունը դժոխքի մեջ, ուր կյանք գոյություն չունի հավիտենական ցավից և տառապանքից բացի:

**Ամեն օր միլիոնավորներ են արագորեն սահում դժոխքի դարպասների միջով**

Ամեն օր **միլիոնավոր հոգիներ, մահվան պահին, արագորեն սահում են դեպի դժոխքի դարպասները:** Հզոր մարդիկ, առաջնորդներ, հարուստներ, աղքատներ, երգիչներ, դերասաններ, տեռորիստներ, բռնաբարոդներ և նրանք, ովքեր արորտ են արել: Նրանք բոլորը կիսում են այս մեկ ընդհանուր միաբանությունը: **Նրանցից ոչ մեկը չէր հավատում, որ դժոխքը գոյություն ունի:**

Ձեր սիրող Փրկիչ և Ուսուցիչ

Հիսուս Քրիստոս

**Երկու գիսաստղ կբախվեն, Իմ խաչը կերևա կարմիր երկնքում**

Կիրակի 5 հունիսի 2011թ, ժ16.30

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը մոտ է: Նախագգուշացումը մոտ է հիմա: Մեծ վշտով պետք է ասեմ քեզ, որ շատ հոգիներ ուշադրություն չեն դարձնի Նախագգուշացման մասին այս պատգամներին: **Իմ խոսքը իջնում է խուլ ականջների վրա:** Ինչու՞ նրանք չեն լսում: Ես ոչ միայն տալիս եմ նրանց Իմ Գթասրտության մեծ ընծան երբ կհեղեմ Իմ շնորհները ողջ աշխարհի վրա, Ես նաև փորձում եմ նախապատրաստել նրանց այս իրադարձության համար: Բազմաթիվ **միլիոնավոր մեղավորներ կհրճվեն**, երբ նրանց ցույց տրվի իմ մեծ գթասրտությունը: Մյուսները հնարավորություն չեն ունենա ազատագրել իրենց ժամանակին, որովհետև կմեռնեն շոկից:



Աղջիկս, դու պետք է անես այն ամենն, ինչ կարող ես, որ նախագգուշացնես աշխարհին: Որովհետև **այս մեծ իրադարձությունը շոկի կմատնի բոլորին:** Նրանք կտեսնեն **մեծ նշաններ երկնքում**, նախքան Նախագգուշացումը տեղի կունենա: Աստղերը կբախվեն իրար այնպիսի ուժգնությամբ, որ մարդ կշփոթի այդ՝ **երկնքում տեղի ունեցող հրաշքը՝ մտածելով թե այն աղետաբեր է:** Մինչ այդ գիսաստղերը կբախվեն, **արդյունքում կլինի մի մեծ կարմիր երկինք**, և յուրաքանչյուր ոք **կտեսնի Իմ Խաչի նշանը ամբողջ աշխարհում:** Շատերը կվախենան: Բայց Ես ասում եմ ուրախացե՛ք, քանի որ դուք կտեսնե՛ք, ձեր կյանքում առաջին անգամ, մի ճշմարիտ Աստվածային Նշան, որը ներկայացնում է **մեծ նորություն ամենուր գտնվող մեղավորների համար:**

Երբ այդ ժամանակ տեսնե՛ք Իմ խաչը, կիմանա՛ք, որ Իմ մեծ գթասրտությունը տրվում է ձեզանից յուրաքանչյուրին, Իմ թանկագին զավակներ: Քանի որ ձեր հանդեպ ունեցած մի խորը կենդանի սիրով էր, որ Ես մահացա, կամավորաբար, խաչի վրա որ փրկեմ ձեզ: Երբ տեսնե՛ք խաչեր երկնքում Նախագգուշացման ժամանակ, կիմանա՛ք, որ դա ձեր հանդեպ ունեցած Իմ սիրո նշանն է:

Աղոթե՛ք, Իմ սիրելի հետևորդներ, որ ձեր եղբայրներն ու քույրերը կարողանան ուրախանալ, երբ նրանց նույնպես ցույց տրվի **Իմ գոյության ապացույցը:** Աղոթե՛ք, որ նրանք ընդունեն որ դա իրենց հնարավորությունն է՝ ազատագրելու իրենց Իմ աչքում: Որ Գթասրտության այդ մեծ գործողությունը կփրկի նրանց հոգիները, եթե նրանք Ինձ թույլ տան որ օգնեմ իրենց:

### **Ձեզ ցույց կտրվի թե ինչի է նման մեռնել մահացու մեղքի մեջ**

Նախագգուշացումը ձեզ բոլորիդ համար կլինի մի մաքրագործող փորձառություն: Այն **մասամբ տհաճ** կլինի, հատկապես ծանր մեղքի մեջ գտնվողների համար: Քանի որ երբևէ առաջին անգամ ձեզ ցույց կտրվի, թե ինչ են զգում, երբ Աստծո լույսն անհետանում է ձեր կյանքից: Ձեր հոգիները կզգան այն լքվածությունը, որոնք զգում են նրանք, ովքեր մեռնում են մահացու մեղքի մեջ: Այն **խեղճ հոգիները, ովքեր չափից դուրս ուշացնում են** խնդրել Աստծուն, որ ների իրենց մեղքերը: Հիշե՛ք, կարևոր է, որ Ես թույլ տամ ձեզ բոլորիդ զգալ հոգու այդ դատարկությունը: Քանի որ միայն այդ դեպքում դուք վերջապես կհասկանա՛ք, որ առանց ձեր հոգիներում եղած Աստծո լույսի դուք դադարում եք զգալ: Ձեր հոգին և ձեր մարմինը կլինեն պարզապես դատարկ անոթներ: Նույնիսկ մեղավորներն են զգում Աստծո լույսը, քանի որ նա ներկա է երկրի վրա գտնվող իր զավակներից յուրաքանչյուրի մեջ: Բայց երբ մեռնե՛ք մահացու մեղքի մեջ, այդ լույսն այլևս գոյություն չի ունենա:

Նախապատրաստվեք հիմա այդ մեծ իրադարձության համար: Փրկեք ձեր հոգիները քանի դեռ կարող եք: Քանի որ միայն այն ժամանակ, երբ Աստծո լույսը հեռանա ձեզնից, դուք վերջապես կհասկանաք այն դատարկությունը, ամայությունն ու խավարը, որը Սատանան է առաջարկում՝ լի տառապանքով և ահաբեկչությամբ:

Վերալցրեք ձեր հոգիները: Ուրախացեք հիմա, քանի որ Նախագգուշացումը կփրկի ձեզ և ձեզ ավելի մոտ կբերի Իմ Սուրբ Սրտին:

Ողջունեք Նախագգուշացումը: Քանի որ այդ ժամանակ ձեզ կտրվի Հավիտենական Կյանքի ապացույցը և կիմանաք, թե որքան կարևոր է այն:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

Թագավոր մարդկության

## **Հոռմի բանալիները հիմա ետ են վերադարձվում Աստծուն՝ Ամենակարող Հորը**

Երկուշաբթի 6 հունիսի 2011թ, ժ 10.30

Իմ սիրելի աղջիկ, ուժեղ եղիր հիմա: Իմ պատգամների բովանդակությունը քեզ վախ է պատճառում, որին դու չպետք է տեղիք տաս: Երբեմն դու այնքան միայնակ ես զգում այս աշխատանքում, սակայն Ես կանգնած եմ քեզ հետ ամեն օր և հեռու չեմ քո կողքից: Իմ պատգամները, ինչպես Ես նախկինում քեզ ասել եմ, **միշտ չէ, որ ուրախություն կբերեն հոգիներին**: Հավատացողները, այնուամենայնիվ, կհասկանան, որ երկնային պատիժն անհրաժեշտ է աշխարհը մաքրագործելու համար:

Գիտեմ, որ երբեմն դժվար է մարսել բովանդակությունը, բայց դու պետք է ամբողջապես վստահես Ինձ: Ես ձեզ սովորեցնում եմ, մեկ անգամ ևս, ամենուր գտնվող հավատացյալներ, որ գլուխ չդնեք այն մարդկանց հետ, ովքեր մարտահրավեր են նետում, վերլուծում, կամ անցքեր բացում Իմ Սուրբ Խոսքի մեջ: Քանի որ **ոչ դուք, ոչ էլ այդ հոգիները իրավասու չեք այդպես անել**: Հիմա դուք պետք է ենթարկվեք Ինձ: Թող նրանք, ովքեր շարունակում են վիրավորանքներ հեղել և մերժել Իմ Խոսքը, լինեն, քանի որ դա այլևս ձեր հոգսը չէ: Այո, իհարկե, ձեզ կքննադատեն, երբ հայտարարեք Իմ Խոսքը:

Անտեսեք նրանց հիմա, ովքեր կփորձեն գրավել ձեզ: Ժամանակը չափազանց քիչ է այդպիսի հակամարտությունների մեջ մտնելու համար: Հիմա դուք պետք է մտահոգված լինեք Իմ այն խեղճ զավակներով, ովքեր հավատ չունեն, կամ չեն ճանաչում Ինձ և Իմ Հավիտենական Հորը: Նրանք են Իմ ամենամեծ մտահոգությունը:

Ուստի, մինչ Իմ լավատես քրիստոնյաները, ովքեր միշտ փորձում են զանազանել Իմ խոսքը նվիրելով իրենց ժամանակը վերլուծությանը, փոխանակ պարզապես հետևելու Իմ ուսուցումներին և աղոթելու իրենց այդ խեղճ եղբայրների և քույրերի համար, արժեքավոր ժամանակ է կորչում:

Աղջիկս, ասա աշխարհին, որ **կանխասացված էկոլոգիական աղետները հիմա կհարվածեն երկրին**: ամեն ինչ կսկսվի հիմա: Այնքան շատ, այնքան արագորեն: Եվ այդ ամենն ի շնորհիվ անիրավության իրենց որջերում փաթաթված մեղավորների կուրության պատճառով, որ ունեն Հայր Աստծո Խոսքի հանդեպ:

### **Հավատացողներ մի վախեցեք**

Հավատացողներ աղոթեք հիմա: Մի վախեցեք: Ես կառաջարկեմ ձեզ Իմ Աստվածային պաշտպանությունը միշտ, նույնիսկ երբ ծաղրի եք ենթարկվում Իմ անվան համար: Աղոթքը ձեզ ուժ և արիություն կտա, մինչ Չարը և իր զինակիցները հիմա հեղում են թույնը Իմ զավակների վրա: Մինչ մարդկության հանդեպ նրանց ոճրալի գորշողությունները սկսում են ավելանալ տեռորիզմի, աշխարհի արժույթների նկատմամբ մոնոպոլիզմի և ինքնակամ թունավորման միջոցով երկիրը թունավորելու միջոցով, լսեք Ինձ հիմա: Հայր Աստծո ցասումը կիջնի հիմա և արագորեն կիջնի: Աղոթքը պետք է ղեկավարվի խմբերի միջոցով ամբողջ աշխարհով մեկ,, որովհետև այն կօգնի խուսափել այդ իրադարձություններից մի քանիսից:

Աղոթեք Իմ սիրելի Բենեդիկտ Պապի համար: Նա շրջապատված է Աստծո շատ ուժեղ թշնամիներով: Իմ Եկեղեցու հանդեպ իշխանության և վերահսկման որկրամուկներով: Աղոթքը կարող է օգնել հետաձգելու նրա պարտադիր հեռացումը, երբ նա ստիպված կլինի հեռանալ Վատիկանից, ինչպես կանխասացվել է: Աղոթեք, աղոթեք, աղոթեք այդ ժամանակի համար, քանի որ այն կլինի ամենախավար ժամանակը որ երբևէ իջել է Իմ սրբազան ծառաների վրա՝ եպիսկոպոսների, կարդինալների և Իմ բոլոր ճշմարիտ հետևորդների վրա: Հռոմի բանալիները հիմա ետ կվերադարձվեն Աստծուն՝ Ամենակարող Հորը:

Եկել է Սատանայի և նրա չար հետևորդների դեմ մարտի ժամանակը:  
Մարդկությանը սաբոտաժի ենթարկելու նրանց փորձերը կպատժվեն ամենայն  
խստությամբ, քանի որ նրանք կկրեն մեծ տառապանք իրենց չար գործերի  
համար:

Բարձրացե՛ք հիմա, գավակներս: Դրե՛ք ձեր ողջ վստահությունն ու  
նվիրվածությունն Ինձ վրա որպես առաջնահերթություն: Ամենօրյա աղոթքը  
պատարագն ու Սուրբ Հաղորդությունը կօգնեն Ինձ և Իմ Հորը կնքել այս  
չարիքը: Հետևե՛ք Ինձ: Վերցրե՛ք Իմ գավաթը: Քանի որ երբ դա անե՛ք, կվայելե՛ք  
հավիտենական կյանքը:

Ձեր սիրող Փրկիչ

Մարդկության Թագավոր

Հիսուս Քրիստոս

## **Պատգամ Կույս Մարիամից իր կորած գավակների վերաբերյալ**

երեքշաբթի 07 հունիսի, 2011թ, ժ 14.45

Զավակս, այս վերջին մի քանի օրը հեշտ չէր: Ամենակարևորն այն է, որ դու  
ենթարկվում ես Իմ Որդուն: Խնդրում եմ թույլ մի տուր կասկածներ կամ վախ  
քո սրտի մեջ այս էտապում, քանի որ երբ դրանք գալիս են, ուրեմն Խաբեբան է  
գործի անցել:

Բաց քո սիրտը, որ թույլ տաս շնորհները հեղեն քո հոգին, որպեսզի ավելի  
մետենաս Իմ թանկագին Որդուն: Հիմա դու մոտ ես քո Օրհնյալ Մորը, ով  
օգնում է քեզ և առաջնորդում միշտ: Առաքելության այս մասը դժվարին է, բայց  
հիշիր, որ Իմ Որդու համար աշխատելը երբեք հեշտ չէ: Դու ավելի ուժեղ  
կղառնաս, չնայած քո տատանմանը, որովհետև դու դեռևս հետևում ես Նրա  
ցուցմունքներին, ուրեմն դա լավ է: Աղոթիր հիմա ամենուր գտնվող Իմ բոլոր  
կորած գավակների համար, քանի որ նրանք դատարկ են սիրուց, այն իսկական  
սիրուց, որն Իմ Որդին է առաջարկում նրանց: Այդ սերը նրանց փրկությունն է:  
Ուստի խնդրում եմ առաջարկիր քո բոլոր աղոթքները այդ խեղճ կորած  
հոգիների համար:

Գնա հիմա խաղաղությամբ և շարունակիր միշտ անել այն ամենը, ինչ Իմ Որդին խնդրում է քեզ անել:

Ձեր Օրհնյալ Մայր

Մարիամ Երկնքի Թագուհի

## Պատգամ քահանաներին, եպիսկոպոսներին և կարդինալներին Կեղծ մարգարեի մասին

Երեքշաբթի 07 հունիսի, 2011թ, ժ.15.15

Իմ սիրելի աղջիկ, դու տառապեցիր, որովհետև Խաբեքան տանջում է քեզ: Դու պետք է ջանասիրաբար աղոթես, դիմակայելու համար քեզ վրա նրա հարձակումներին: Դիր քո ողջ վստահությունը Ինձ վրա և թույլ տուր Ինձ տնօրինել այն: Դրա փոխարեն դու հուզվում ես, այն դեպքում, երբ պետք է առաջարկես այդ տառապանքն Ինձ սրտի ուրախությամբ: Եթե շարունակես ինքդ քեզ հիշեցնել որ այդ տառապանքները գալիս ես Ինձ հետ քո ունեցած միության պատճառով, և որ դու ճշմարիտ օրհնյալ ես որպես մի ընտրված հոգի, այդ դեպքում դու քեզ այլ կերպ կզգաս:

Հիմա Իմ հետևորդներից շատերն են սկսում հասկանալ, թե ինչ է տեղի ունենում աշխարհում, և Սուրբ Հոգու շնորհների միջոցով նրանք բարձրանում են Իմ խոսքը պաշտպանելու մարտահրավերի դեմ: Հիմա հավատարիմների այդ բանակն ավելի ուժեղ կդառնա և անվախորեն մեղավորներին կառաջնորդի դեպի փրկություն:

Իմ սուրբ երեց **Բենեդիկտը ձեր աղոթքների կարիքն ունի: Աղոթեք նրա համար ամեն օր**, քանի որ նա հիմա յուրաքանչյուր մակարդակի վրա պաշտպանության կարիք ունի, որ անցկացնի նրան այն տառապանքի միջով, որն սպասվում է նրան: Կարևոր է, որ Իմ հետևորդները զգոն լինեն **ցանկացած նոր Պապի հանդեպ, որը առաջ կգա, քանի որ նա Աստծուց եկած չի լինի:** Խնդրում եմ կոչ արեք Իմ բոլոր սրբազան ծառաներին նախապատրաստվել այն ամենասարսափելի, ամենավատեցնող մարտահրավերներին, որոնց երբևէ ստիպված կլինեն դիմակայել իրենց ծառայության ընթացքում: Մեծ արիություն կպահանջվի պաշտպանելու համար Իմ ուսուցումների ճշմարտությունը: Իմ սրբազան ծառաներից այնքան շատերն են կույր Իմ այն խոստումների հանդեպ, երբ ես ասացի, որ նորից կգամ: Նրանք Ի՞նչ են կարծում, ե՞րբ կլինի դա: Անքան են նրանք վարժվել ասելու Իմ ուսուցումները, որ մոռացել են, թե

կարող են ականատես լինեն այդ դեպքերին ցանկացած ժամանակ և, գուցե, հավանաբար, հենց իրենց կյանքի ընթացքում: Քանի որ սա այսօր ամենամեծ մարտահրավերներից մեկն է:

Եթե Ես մարգարեներ ուղարկեցի աշխարհի հազարավոր տարիներ առաջ, ուրեմն, իհարկե, Ես նրանց նորից կուղարկեմ այն ժամանակ, երբ նորից գալու լինեմ, որ նախապատրաստեն աշխարհը:

Արթնացեք այն դասերի հանդեպ, որոնց դուք ուսուցանում եք ձեր միաբանությունում: Հասկացեք, որ այդ Ես եմ խոսում ձեզ հետ հիմա: Շատերը կզան Իմ անունով, բայց մի քանիսը միայն կխոսեն ճշմարտությունը: Այս պատգամը գալիս է Ինձնից՝ ձեր Աստվածային Փրկչից: Աղոթեք զանազանության համար, որ ճանաչեք Իմ ճշմարիտ ձայնը, երբ այն տրվում է ձեզ: Բացեք հիմա ձեր սրտերը և լսեք, թե Ես ինչ ունեմ ասելու ձեզ: Եկել է ժամանակը ձեզ տեղեկացնելու համար, որ **Հայտնության Գրքում** պարունակվող մարգարեությունները պատրաստ են ծավալվել ձեր աչքերի առջև:

Դուք, Իմ սիրելի ծառաներ, պետք է քաջությամբ պայքարեք ձեր կյանքի ընթացքում Ինձ համար Խաբեբայի կողմից դրված այն խոչընդոտների դեմ, որոնք ձեզ մարտահրավեր կնետեն ձեր կարողության չափով: Դուք պետք է գիտակցեք, որ շուտով Կեղծ մարգարեն կհրապուրի ձեզ, կհմայի ձեզ, կհամոզի ձեզ, թե ինքը ներկայացնում է ճշմարտությունը: Հիմա դուք պետք է ցույց տաք ձեր նվիրվածությունն Իմ հանդեպ և Իմ Հավիտենական Հոր հանդեպ: Խնդրում եմ մի հուսահատվեք: Քանի որ չնայած այս իրադարձությունները կվախեցնեն և կանհանգստացնեն ձեզ, ձեր նվիրվածությունն ու հավատարմությունը պետք է լինեն Իմ հանդեպ:

Առաջին անգամ ձեր սպասավորության մեջ հիմա ձեր հավատն Իմ հանդեպ ճշմարտապես փորձության կենթարկվի: **Պետրոսի Եկեղեցին Իմ Եկեղեցին է:** Բայց երբ բանալիները ետ տրվեն Հայր Աստծուն, որը հիմա կարվի, **Եկեղեցին կդառնա Իմ Թագավորության մի մասը: Ես ճշմարտությունն եմ: Հետևեք ճշմարտությանը ամեն ժամանակ:**

Աղոթեք Ինձ հիմա այն շնորհների համար, որոնք անհրաժեշտ են վստահանալու, որ երբ ժամանակը գա, դուք վեր կլինեք Սատանայի խաբեությունից: Այլապես Կեղծ մարգարեն վստահություն կներշնչի Իմ զավակներին իր կեղծ հմայիչ խաբիզմատիկ միջոցներով: Խաբեբայի միջոցներով, ում հետ նա կապված է: **Սատանան չի հաղթի Իմ Եկեղեցուն**, եթե Իմ սպասավորները զգոն լինեն խաբեության հանդեպ և տեսնեն այն ինչպես որ կա: Մի սատանայական սուտ, որը, եթե դուք ներգրավվեք դրա մեջ և

հավատարմության երդում տաք այդ նոր պոփուլյանը, դրանից վերադարձ չի լինի:

Լսեք Ինձ հիմա: Շրջվեք դեպի Ինձ առաջնորդության համար և այն հատուկ պահանջվող շնորհների համար, որ առաջնորդեք Իմ հոտը դեպի Ինձ և Իմ Հավիտենական Հայրը: Քանի որ, երբ այդ անեք, Ես կհեղեմ այնպիսի շնորհներ, որ չեք ուշանա ուժ գտնել ամեն գնով պաշտպանելու Իմ խոսքը:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և բաղձում ձեր աջակցությունը **այս Վերջին Ժամանակներում:**

Հիսուս Քրիստոս

## **Նախապատրաստեք ձեր ընտանիքը, որ ականատես լինեն Իմ Խաչին երկնքում**

Չորեքշաբթի 08 հունիսի 2011թ, Ժ16.45

Իմ սիրելի աղջիկ, Ես հիմա պետք է կիսեմ այն զգացմունքները, որոնք կրում եմ: Առաջինը՝ երջանկության զգացմունքն է, որովհետև Ես պատրաստվում եմ բերել այնքան շատ գթասրտություն Գիտակցության Լուսավորման ընթացքում, որը մոտ է: Հետո, Իմ մեծ տխրության արցունքներն են նրանց համար, ովքեր մոռացկոտ են այս իրադարձության համար և ովքեր նախապատրաստված չեն: Իմ զավակները պետք է ասեն որքան հնարավոր է շատ ընկերների և ընտանիքի անդամներին, որպեսզի փրկեն նրանց հոգիները: Կապ չունի, եթե նրանք ժպտան կամ ծաղրեն ձեր ասածները, քանի որ հետագայում նրանք ձեզ շնորհակալ կլինեն: **Ասացեք նրանց ճշմարտությունը:** Խնդրեք նրանց, որ բացեն իրենց միտքը: Նրանք պետք է գիտակցեն, թե ինչի են ականատես լինում, որպեսզի երբ տեսնեն Իմ Խաչը երկնքում, նախապատրաստված լինեն: Սա է ամենը, որ նրանք պետք է հասկանան: Այդ դեպքում նրանք կընդունեն այն տհաճությունը, որը կրելու են, երբ իրենց անցած կյանքը ցուցադրվի իրենց աչքերի առաջ: **Ասացեք նրանց, որ վերանայեն իրենց կյանքը,** և հիշեցրեք նրանց այն վնասները, որոնք կարող է պատճառած լինեն իրենց ընկեր եղբայրներին և քույրերին:

**Տարածեք Իմ խոսքը Նախագգուշացումից հետո**

Զավակներս, հենց որ Նախագգուշացումը տեղի ունենա և երբ դարձը տեղի ունենա, ավելի արագորեն տարածեք Իմ Ամենասուրբ Գործը: Սրա

հրատապությունը կա, որովհետև այն կլինի մի չափազանց վճռորոշ ժամանակահատված: Այդ ժամանակ է, որ ամենուր գտնվող Իմ նվիրված հետևորդների միջոցով Իմ զավակները կկանգնեն ճիշտ ուղու վրա: Դա կլինի այն ժամանակը, երբ աղոթքն ու **դարձը կարող են նվազեցնել այն ավերածության ազդեցությունը**, որը կստեղծվի **Հակաքրիստոսի և Կեղծ մարգարեի թագավորության ընթացքում**:

Ընդունեք ճշմարտությունը հիմա այնպես, ինչպես որ կա: Մի վախեցեք ճշմարտությունից: Գրկեք այն: Քանի որ երբ դա անեք, դուք կազատվեք, և ձեր վստահությունն Իմ հանդեպ ձեզ կարող կդարձնի պատշաճ կերպով պաշտպանել Իմ խոսքը: Վախը ձեզ ետ կպահի, Իմ թանկագին զավակներ: Արիությունը՝ կգրավի հոգիներ: Ձեր մարտը Իմ կողմից կթեթևացնի Իմ տառապանքը և հավիտենական կյանք կրերի այնքան շատ հոգիների, որոնք հուսահատորեն ձեր օգնության կարիքն ունեն:

Իմ սերը ձեր հանդեպ, զավակներս, ամեն սահմանից այն կողմ է, և երբեք նրա ուժգնությունը չի թուլանում: Իմ Խաչը ծանր է, բայց երբ դուք այն վերցնում եք ձեր սրտի մեջ սիրո զգացմունքով, ձեր բեռը թեթևանում է: Դուք, Իմ սիրելի հետևորդներ, սրբազան ծառաներ և աշխարհիկ մարդիկ, Իմ ապագա բանակն եք, որ կօգնեք պարտության մատնել Սատանային: Աղոթեք հիմա այն գործության համար, որ ստանաք ձեր հավատի վրա եկող մարտահրավերներին դիմակայելու համար: Առաջնորդվելով օրինակով և այն ընծայով, որը Ես հեղում եմ ձեզանից յուրաքանչյուրի վրա, ով հայտարարում է իր դաշնակցությունն Իմ հանդեպ, դրանք կառաջացնեն վայրկենական դարձ, երբ դուք ասեք Իմ Ամենասուրբ Խոսքը: Հիշեք, Ես ձեզ հետ եմ ամբողջ ժամանակ հիմա: Ձեզանից շատերը, ովքեր մոտ են եղել Ինձ, հիմա կունենան Սուրբ Հոգու ավելի ուժգին զգացողություն և զանազանության ուժ, որը կսարսափեցնի ձեզ: Ընդունեք սա որպես այն մեծագույն ընծաներից մեկը, որոնք այսօր տրվում են մարդկանց: Ես թանկարժեք ընծաների այսպիսի բազմություն չեմ հեղել այն պահից ի վեր, երբ Իմ առաքյալներին Սուրբ Հոգու միջոցով տրվեցին թանկարժեք ընծաները:

Դուք, Իմ հետևորդներ, ներառյալ Իմ սրբազան ծառաները, Իմ ճշմարիտ Եկեղեցին եք: Ես, Աստծո՝ Հավիտենական Հոր օգնությամբ, առաջնորդում եմ ձեզ, այնպես որ դուք կարող եք, Իմ բոլոր զավակների հետ, քայլել դեպի Նոր Դրախտը, որը սպասում է ձեզ բոլորիդ:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

**Սիրո պատգամ Իմ բոլոր հետևորդներին**



Չորեքշաբթի 08 հունիսի, 2011թ, ժ 21.00

Իմ սիրելի աղջիկ, այսօր Ես հրճվում եմ ողջ աշխարհում Իմ սիրելի հետևորդների կողմից ցույց տրված հավատով, ովքեր լսում են Իմ կանչն այս պատգամների միջոցով: Ես ուրախանում եմ այն խորը հավատի պատճառով, որն Իմ սիրելի զավակները ցույց են տալիս մի աշխարհում, որը մերժում է Ինձ: Իմ թանկագին զավակները, նրանք ովքեր հավատում են Ինձ, տխրության պահերին ուրախության արցունքներ են բերում Ինձ: Եթե չլինեին Ինձ այդքան խորը նվիրվածություն ցույց տվողները, Ես չէի սփռվի:

Իմ զավակները, ովքեր սիրում են Ինձ, պետք է Ինձ լսեն հիմա: Թույլ տվեք Ինձ գրկել ձեզ Իմ բազուկների մեջ և բացատրել ձեր հավատի կարևորությունը: Ձեր հավատը նման է բոցի Իմ Սրտի մեջ, որը երբեք չի մեռնում: Այն կթուլանա ժամանակ առ ժամանակ, բայց Ես կլցնեմ ձեր մեջ այն էներգիան, որն այդ բոցը վառ կպահի: Դուք, լույսի Իմ զավակներ, կկլանեք խավարը, բայց դուք պետք է ավելի ուժեղ մնաք որպես մեկ, որ կովեք Հակաքրիստոսի դեմ:

### **Մատանան չի կարող հաղթել, քանի որ դա անհնարին է**

Միշտ հասկացեք այս կարևոր փաստը: Նա, Խաբեբան, չի կարող հաղթել և չի հաղթի, քանի որ դա անհնարին է: Հետևաբար, դուք պետք է միշտ ընդունեք, որ Իմ լույսը և Իմ Հավիտենական Հոր լույսը երևեք չի մարի: Բայց խավարն է, որ կգրավի այն խեղճ հոգիներին, որոնք կքշվեն դեպի խավարը: Այդ խեղճ մոլորված զավակներն Իմ Սրտի մեջ են, և Ինձ համար նույնքան կարևոր են, որքան դուք: Դուք զավակներս, ինչպես ցանկացած ընտանիքում, պետք է հետևեք ձեր ճանապարհից շեղված եղբայրներին և քույրերին: Որքան էլ ծանր լինեն նրանց մեղքերը, երբեք մի դատեք նրանց: Ետ բերեք նրանց դեպի Ինձ: Խոսեք նրանց հետ: Աղոթեք Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքը նրանց համար, որպեսզի նրանք կարողանան փրկվել Չարի ճանկերից մահվան ժամին:

Կանչեք հիմա սարերի կատարներից: Հիշեցրեք բոլորին ճշմարտությունը: Անտեսեք նրանց խայթոցները: Բայց երբ Իմ զավակներին բացատրեք թե որքան շատ եմ Ես նրանց սիրում, մի պարտադրեք նրանց ձեր տեսակետները: Դրա փոխարեն պարզապես բացատրեք, որ նրանք ստեղծված են Հայր Աստծո կողմից: Ասացեք նրանց, որ Նա ուղարկել է Ինձ՝ Իր Միակ Որդուն, որ փրկեմ իրենց: Որ իրենց հնարավորություն տամ ապրել Հավիտենական կյանքը: Իսկ հետո ասացեք, որ ես սիրում եմ նրանց և որ Ես քայլում եմ նրանցից յուրաքանչյուրի հետ օրվա ամեն պահի: Նույնիսկ երբ Ես տեսնում եմ նրանց

մերժումը և ուրիշների հանդեպ նրանց կատարած չարիքը, Ես դեռևս այնտեղ եմ՝ իրենց կողքին: Հուսալով, որ նրանք կշրջվեն դեպի Ինձ և կխնդրեն Իմ օգնությունը: Քանի որ եթե նրանք այդ անեն, Ես կգրկեմ նրանց ուրախության և թեթևության արցունքներով: Օգնեք Ինձ փրկել այդ թանկագին հոգիներին: Թույլ մի տվեք, որ Խաբեբան վերցնի նրանց Ինձնից: Նրանք ձեր ընտանիքն են: Իմ ընտանիքը: Մենք մեկ ենք: Մեկ կորած հոգին նույնպես շատ է:

Շնորհակալություն ձեզ, Իմ սիրելի զավակներ ամենուր: Իմացեք, որ Ես հիմա ձեզ հետ եմ շատ ավելի ուժեղ ներկայությամբ Սուրբ Հոգու միջոցով, քան պատմության ցանկացած ժամանակաշրջանում: Բռնեք Իմ ձեռքը և Ինձ հետ քայլեք դեպի Երկրի վրա Նոր Դրախտը, որը կլինի ձեր փառապանծ տունն ապագայում:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս Գթասրտության Թագավոր

## **Իմ հոգևոր առաջնորդությունը կփակի Սատանայի ավերածության գործողությունները**

Շաբաթ 11 հունիսի, 2011թ, ժ 15.30

Իմ սիրելի ազգիկ, սա ևս մեկ փորձության շաբաթ էր, երբ Իմ խոսքը, մի կողմից, գրկեցին այնքան շատերը, մինչդեռ միևնույն ժամանակ նաև ուրիշների կողմից մերժվեց որպես խաբեություն: Մի՞թե նրանք, ովքեր մերժում են Իմ խոսքը, չեն կարդացել ճշմարտությունը: Իմ Սուրբ Գրքի մեջ պարունակվող ճշմարտությունը: **Հայտնության Գիրքը տրվեց Իմ բոլոր զավակներին, որ օգնի նրանց հասկանալ այն իրարանցումը**, որը կստեղծվի վերջին ժամանակների մոտենալու հետ Սատանայի և նրա չարքերի կողմից ստերի տարածման միջոցով: Մինչև չհասկանաք Հայտնության Գրքի մեջ պարունակվող ճշմարտությունը, ինչպե՞ս կարող եք հասկանալ այն պատգամները, որոնք Ես այսօր բերում եմ ձեզ:

Մի՞թե կարծում եք, թե Ես մեջքս կշրջեմ դեպի ձեզ և ձեզ կթողնեմ Սատանայի և նրա չար բանակի գթասրտությանը: Մի՞թե չեք հասկանում, որ Ես կփորձեմ նախազգուշացնել ձեզ, իսկ հետո՝ օգնել ձեզ:

**Իմ Մեծ Գթասրտությունը կոչնչացնի այն ազդեցությունը, որը Սատանան ունի Իմ զավակների հանդեպ:** Ես գալիս եմ նորից, որ փրկեմ ձեզ նրա ճանկերից: Նախազգուշացման Իմ ընծան կցրի այն սարսափը, որը կշարունակի ավելացնել իր իշխանությունը, եթե դա (Նախազգուշացումը) տեղի չունենա:

Հիմա Ես հաղորդակցվում եմ ձեզ հետ ոչ միայն ձեզ բոլորիդ Իմ Գթասրտության այդ մեծ գործողությանը նախապատրաստելու համար, այլև առաջնորդելու ձեզ ավերածության այն քառսի միջով, որ պլանավորել է Չար Խումբը, որի Թագավորն է Չարը: Իմ հոգևոր ազդեցությունը **զգալիորեն կփակի Սատանայի ավերածության գործողությունները**: Լսեք Իմ խոսքը: Հետևեք Իմ ցուցումներին: Առաջնորդեք և աջակցեք մեկդ մյուսին ձեր հավատի մեջ, և ձեզ կտրվի պահանջվող օգնությունը՝ արագորեն գնալու այն ճանապարհով, որ տանում է դեպի Իմ կողմից ձեզ տրված խոստումները:

Ձեզնից շատերը, Իմ թանկագին զավակներ, կվախենան, բայց **խնդրում եմ, թույլ մի տվեք, որ վախը փակի ճշմարտությունը**: Սատանան կօգտագործի վախը, որ ետ կանգնեցի ձեզ Իմ սիրո պատգամն ընդունելուց: Հիմա Իմ ասածներից շատ բան չափազանց դժվար է հասկանալ ձեզ համար: Բայց հասկացեք հետևյալը: Եթե Ես հիմա չգայի և ձեզ ճշմարտությունը ցույց չտայի, դուք կկորչեիք: Սա ձեզ համար բավականին դժվար ժամանակ կլինի ապրելու: Ինչպես նախկինում Ես նախապատրասել եմ Իմ մարգարեների միջոցով, **Ես հիմա ձեզ կնախապատրաստեմ այսօր**, այս պատգամի միջոցով, այն ժամանակվա համար, երբ Ես նորից կգամ:

Սա մի ընծա է՝ Իմ խորունկ սիրուց եկող, իմ բոլոր զավակների հանդեպ, որ դիմանան **Հակաքրիստոսի** և նրա դաշնակից խաբեբա **Կեղծ մարգարեի** գալիք թագավորությանը, ով (Կեղծ մարգարեն) **կմոլորեցնի երկրի վրա Իմ Եկեղեցուն**:

Ցած դրեք ձեր պաշտպանությունները: Բացեք ձեր աչքերը ճշմարտության հանդեպ: **Իմ խոսքն այսօր տրվում է պարզապես ձեզ հիշեցնելու համար** Իմ ուսուցումների ճշմարտությունը: Իմ Սուրբ Գիրքը ճշմարտությունն է: Ճշմարտությունն արտացոլված է Իմ Սուրբ Գրքում: Եթե Ես այսօր ձեզ հիշեցնում եմ նախկինում ձեզ տրված Իմ խոստումները և փրկության ուղին, ուրեմն սա Իմ Սուրբ Խոսքի կրկնությունն է միայն: **Ճշմարտությունը միշտ կմնա նույնը**: Այն երբեք չի կարող փոխվել կամ փոփոխվել, որ հարմարեցվի մարդկությանը: Այն միշտ կմնա նույնը:

Թույլ տվեք Ինձ օգնել ձեզ՝ հասկանալու թե ինչ է տեղի ունենում հիմա: Վախից մի կծկվեք: Ես սիրում եմ ձեզ բոլորիդ և պարզապես ցանկանում եմ բռնել ձեր ձեռքը, զավակներս, և պաշտպանել ձեզ: Իմ նպատակն է վստահանալ, որ ձեզնից յուրաքանչյուրը կապրի երկրի վրա Իմ Նոր Դրախտում:

Ձեր մշտապես սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# <<Ազատարարները>> Միջին Արևելքում ցանկանում են վերահսկել հրեաներին

Շաբաթ 11 հունիսի, 2011թ, ժ 22.00

Իմ սիրելի աղջիկ, սիրով է, որ ես այս գիշեր խոսում եմ քեզ հետ, որովհետև հիմա շատ շուտով Իմ փայփայած հետևորդներից շատ ու շատերը կմիավորվեն որպես մեկ՝ կովելու համար Խաբեբայի դեմ: Հենց հիմա, նա և հարուստ ազդեցիկ խմբերը, որոնց ետևում նա թաքնվում է, նյութում են որքան հնարավոր է շատ վերահսկողություն ստանալ ձեզ բոլորիդ վրա: Սակայն դուք չեք կարող տեսնել այդ:

Նրանք կկանգնեցվեն ավելի շուտ, քան կարծում ես: Նրանցից շատերը դարձի կզան Նախագգուշացման ընթացքում: Սա կթուլացնի Սատանայի Մեկ համաշխարհային խումբը այն աստիճան, որ շատերը կմտածեն, թե ո՞ր ուղին ընտրեն, այնքան որ շփոթված կլինեն նրանք: Այդ ժամանակ շատերը ետ կջջվեն դեպի Ինձ, զավակներս, քանի որ նրանք ազատագրում կփնտրեն:

Վրեժխնդրությունը, վերահսկողությունը, ուժն ու աստելությունը միավորված ստեղծում են ամենամեծ վտանգը մարդու գոյատևման դեմ: Մերձավոր արևելքում և նրանից այն կողմ բոլոր պատերազմները, որ տեսնում եք, արհեստականորեն են ստեղծված: Նրանք պատահականությունն են: Հասկացեք, որ միանգամից այդքան շատ երկրներ իրենք իրենց ոտքի չկանգնեցին: Նրանց օգնել են բոլոր կառավարություններում գտնվող չար խմբերը: Այն կառավարությունների, որոնք վերահսկում են աշխարհը: Միջին արևելքում այդ առաջնորդներին հիմա հեռացնում են, ազատարարների համար ճանապարհ պատրաստելու, նրանց համար ովքեր արդարություն կհռչակեն և խաղաղ միջոցներ՝ Իմ զավակներին օգնելու նպատակով: Բայց նրանց մտադրությունը դա չէ: Նրանց նպատակը Իմ սիրելի ժողովրդին՝ հրեաներին վերահսկելն է, ովքեր հիմա բոլոր կողմերից վտանգի տակ են:

Այս բոլոր դեպքերին կմիջամտի Նախագգուշացումը: Այս Գլոբալ Չարիքի մեջ բոլոր ներգրավվածները նույնպես ստիպված կլինեն կանդնել Իմ դեմ, մեկ առ մեկ, երբ Ես նրանց ցույց տամ, թե որքան են նրանք Ինձ վիրավորում: Շատերը ծնկի կզան և թողություն կխնդրեն:

Սա, զավակներս, շատ կարևոր է, քանի որ որքան շատ մեղավորներ շրջվեն ետ՝ դեպի Ինձ, ամենուր և հատկապես նրանք, ովքեր վերակսում են ձեք

կենսակերպը, այնքան ավելի մեծ կլինի Իմ Գթասրտությունը: Աղոթեք, որ բոլոր նրանք, ովքեր ականատես կլինեն Ճշմարտությանը Նախագգուշացման ընթացքում, հասկանան, որ Ես սիրում եմ իրենց և դարձի գան:

Աղոթքը, գավակներս, չափազանց հզոր է: Երբ աղոթում եք Հայր Աստծո Իմ անունով այս և ուրիշ հոգիների փրկության համար, նա չի մերժի ձեզ:

Ձեր հավատարմությունն Իմ հանդեպ և ամենօրյա աղոթքը հրատապորեն անհրաժեշտ է թուլացնելու համար Սատանայի ճանկը, ով բռնել է իրավամբ Ինձ պատկանող Իմ գավակներին:

Ձեր ամենագթառատ Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## **Առատ սերը պաշտամունքի ժամանակ դարձնում է քեզ ավելի հանդարտ և ուժեղ**

Կիրակի 12 հունիսի 2011թ, ժ 19.00

Իմ սիրելի ազգիկ, Սուրբ Հաղորդության պաշտամունքի ընթացքում Իմ գավակների ստացած շնորհները զորեղ են: Նրանք ձեզ ոչ միան տալիս են շնորհներ՝ կյանքի տառապանքներին դիմանալու համար, նրանք ձեզ ավելի ուժեղ են դարձնում Իմ՝ ձեր հավատարիմ և նվիրված Փրկչի հանդեպ սիրո մեջ:

**Մերը, որը դուրս է հեղվում հոգիների վրա Պաշտամունքի ընթացքում, տրվում է առատորեն:** Հոգիները զգում են Իմ շնորհների հոսքը այնքան տարբեր ձևերով: Առաջին ընծան՝ ձեր հոգու մեջ խաղաղության ընծան է: Դուք դա անմիջապես կզգաք, երբ ավարտվի Ինձ հետ մոտիկ միության ձեր ժամանակը:

Իմ գավակներից այնքան շատերն են իրենց զրկում այն բազմաթիվ ընծաներից, որոնք Ես առաջարկում եմ Պաշտամունքի ժամանակ, երբ դուք ձեր ժամանակից մեկ ժամ անց եք կացնում խորանի վրա Իմ ներկայության առջև: Չնայած կաթոլիկները գիտեն Հաղորդության Նշխարի ուժը, շատերը չեն ընդունում Ինձ հետ մտահայեցության այս ամենակարևոր ժամանակի կարևորությունը: Նրանք պարզապես անտեսում են այս ընծան: Նրանց համար ձանձրալի է Ինձ հետ լրացուցիչ ժամանակ անցկացնելը:

Ոհ, եթե միայն իմանայիք, թե սա որքան կուժեղացներ նրանց: Նրանց վախն ու անհանգստությունները կանհետանային, եթե նրանք ընկերակցեին Ինձ հանդարտ մտերմիկ մտածմունքի մեջ: **Եթե Իմ զավակները կարողանային տեսնել այն լույսը, որը պարուրում է նրանց հոգիները այդ յուրահատուկ Սուրբ Ժամի ընթացքում,** նրանք կսարսափեին:

Զավակներս, այդ ժամի ընթացքում է, որ **դուք դառնում եք շատ ու շատ մոտիկ Ինձ:** Այս ժամանակ է, որ ձեր ձայնը, ձեր աղերսները, Իմ հանդեպ ձեր սիրո խոստումները կլսվեն: Բազմաթիվ հրաշալի շնորհներ են տրվում ձեզ, զավակներս, այդ ժամանակ, ուստի խնդրում եմ մի արհամարհեք այդ ժամանակն Իմ ընկերակցությամբ անցկացնելու Իմ աղերսները:

**Պարզևները կազատեն ձեզ անհանգստությունից**

Պարզևները կազատեն ձեզ անհանգստությունից, սրտով, մտքով և հոգով թեթև և ավելի հանդարտ կզգաք ինքներդ ձեզ: Երբ դուք ստանաք Ինձ Սուրբ Հաղորդության մեջ, Ես կլցնեմ ձեր հոգին: Բայց երբ դուք գաք Ինձ մոտ պաշտամունքի, Ես կպարուրեմ ձեզ այն աստիճան, որ **Իմ գթասրտ լիրո հեղեղները կողողեն ձեր միտքը, մարմինն ու հոգին:** Դուք կզգաք մի գործություն, որը կառաջացնի հանդարտ ինքնավստահություն, որ դժվար կլինի անտեսել:

Եկեք Ինձ մոտ զավակներս, հիմա: Ես ձեր ընկերակցության կարիքն ունեմ: Ես կարիք ունեմ, որ դուք խոսեք Ինձ հետ, երբ Իմ Աստվածային ներկայությունն ամենաուժեղն է: Ես սիրում եմ ձեզ և ցանկանում եմ հեղել Իմ բոլոր շնորհները ձեզ վրա, որպեսզի կարողանամ խառնել ձեր հոգիները Իմ Սուրբ Սրտի հետ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

**Հանձներ Ինձ ձեր հոգուերը, և ես կթեթևացնեմ ձեր բեռը**

Երկուշաբթի 13 հունիսի, 2011թ, ժ18.00

Իմ սիրելի աղջիկ, հիմա աղոթքն ավելանում է ավելի ուժգնորեն Սուրբ Հոգու ընծայի շնորհիվ, որը ներթափանցել է Իմ բոլոր հետևորդների հոգիների մեջ ամբողջ աշխարհում: Նրանց ականջները հիմա զգոն են Իմ Ամենասուրբ Խոսքի հանդեպ:

Աղոթեք Իմ բոլոր խեղճ տառապած զավակների համար, ովքեր մեծ դժվարություններ են տեսնում աշխարհում այն գործողությունների սարսափի հետևանքով, որոնց զոհերն են նրանք: Այդ ամենը մարդկության մեղքերի պատճառով:

Թույլ տուր Ինձ հիշեցնող Իմ բոլոր զավակներին ամենուր, որ աղոթեն Իմ **Աստվածային Գթասրտության** աղոթքն ամեն օր: Աղոթեք նաև, Ես ներառում եմ բոլոր քրիստոնյաներին, **Սուրբ Վարդարանը՝** Իմ Ամենասուրբ Մորն ուղղված, քանի որ այդ հզոր աղոթքը կթուլացնի Սատանայի ուժը Իմ զավակների վրա:

Ես ձեզ բոլորիդ խնդրում եմ միայն, ովքեր վշտի տառապանքների կամ անհանգստության մեջ են, որ Ինձ հանձնեք հիմա այդ հոգսերը և թույլ տաք Ինձ գործ ունենալ դրանց հետ: Վստահեք Ինձ և ձեր բեռը կթեթևանա: Թույլ տվեք Ինձ առաջնորդել ձեզ դեպի ավելի խաղաղ վիճակ: Հանգստացեք զավակներս, և թույլ տվեք Իմ խաղաղությունը ողողի ձեր նուրբ սովամահ հոգիները: Ձեր զգացած խավարի արմատը վախի մեջ է: Վախի արմատը՝ վստահության պակասի մեջ է: Երբ դուք կորցնում եք Իմ հանդեպ վստահությունը, Սատանան կասկածներ է ցանկում ձեր մտքերի մեջ:

Երբեք մի թերագնահատեք նրա արածը, երբ նա մշտապես խաղեր է խաղում ձեզ ձեր հարևանի դեմ շրջելու համար: Այս խաբեությունը միշտ հիմնականում ուղղվում է Իմ նվիրված հետևորդների վրա: Նա ասում է ձեզ, եթե դուք սիրում եք Ինձ: Նա երբեք չի հանգստանա, մինչև ձեզ անհանգստություն չպատճառի: Նա ծիծաղում է, երբ դուք գայթում եք: Մի տվեք նրան այդ ուժը, որովհետև այդ դեպքում ձեր հավատն Իմ հանդեպ թուլանում է:

Սուրբ Միքայելին ուղղված աղոթքն ու **Ամենասուրբ Վարդարանի** աղոթը ձեր ամենաուժեղ զենքերն են Սատանայի դեմ:

Գնացեք հիմա վելի մեծ վստահությամբ և տվեք Ինձ ձեր խնդիրներն ու հոգսերը, քանի որ Ես այստեղ եմ, սպասում եմ ձեզ միշտ, որ բերեմ ձեզ լույսի մեջ:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ, զավակներս: Ավելի շատ վստահեք Ինձ:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# **Իմ հետևորդները պետք է արիություն ցույց տան, ուրիշներին Նախագգուշացման մասին նախապատրաստելու համար**

Երեքշաբթի 14 հունիսի, 2011թ, ժ 19.00

Իմ սիրելի աղջիկ, Իմ հետևորդները շատ աշխատանք ունեն անելու, որ  
մարդկանց ասեն, թե ինչ պետք է ակնկալել Նախագգուշացման ընթացքում:

Տվեք նրանց մանրամասներ նախապես, որպեսզի եթե նրանք տեսնեն կարմիր  
երկինքը բոցավառված, Իմ Մեծ Գթասրտության արտացոլումը, իմանան որ  
վախենալու ոչինչ չկա: Դրա փոխարեն նրանք պետք է ուրախանան, քանի որ  
դա վերջապես կլինի այն ապացույցը, որն ամբողջ աշխարհում Իմ  
զավակներից շատերը փնտրել են իրենց ողջ կյանքի ընթացքում:

Մեծ ուրախություն եմ Ես ցանկանում Իմ զավակների մոտ, այլ ոչ թե  
տխրության արցունքներ: Երբ տեսնեք Իմ խաչը, այդ ժամանակ բոլորդ  
կհասկանաք ձեր բոլորի հանդեպ Իմ ունեցած սիրո մեծությունը:

Շատերը լաց կլինեն ուրախության արցունքներով, քանի որ կիմանան, որ ես  
եկել եմ հեղեղելու համար իրենց հոգիները ազատագրման շնորհով:  
Ուրիշները, ովքեր չեն ճանաչում Ինձ, նրանք կվախենան, քանի որ այդ  
ժամանակ նրանց ակնհայտ կդառնա իրենց մեղքերի ծանրության ճշմարիտ  
հասկացողությունը:

Ամենուր գտնվող Իմ հետևորդներ, Ես ձեզ կոչ եմ անում աիրություն  
ցուցաբերել, ասելով Իմ զավակներին, որ իրենք չպետք է վախենան, երբ  
ականատես լինեն մարդկության համար տրվող Իմ Մեծ Գթասրտության  
աստվածային տեսողական ցուցադրումը: Ետ բերեք նրանց Իմ փարախ՝  
նախապատրաստելով նրանց: Եթե նրանք չլսեն, աղոթեք նրանց համար:

Ձեր հավիտեանկան Փրկիչ և մարդկության Ազատարար

Հիսուս Քրիստոս

## **Մտավոր կրոնական պճնամոլությունը (սնոբիզմ) վիրավորում է Ինձ**



Չորեքշաբթի 15 հունիսի, 2011թ, ժ10.00

Այսօր, աղջիկս, Ես ցանկանում եմ նախագգուշացնել Իմ այն նվիրված հերևորդներին, ովքեր հրապարակայնորեն հռչակում են Իմ անունը, որ հետևեն Իմ ուսուցումների ճշմարտությանը և զգուշորեն խոսեն:

Ես սիրում եմ Իմ բոլոր հետևորդներին, և հատկապես նրանց, ովքեր միշտ խոնարհություն են ցուցաբերում: Ես ջախջախված եմ զգում, այնուամենայնիվ, երբ լուրջ և անկեղծ քրիստոնյաները, ովքեր խոսում են Իմ խոսքը, փորձում են վերլուծել Իմ ուսուցումները բարձր և գերիշխող ձևով: Նրանք բավական չեն համարում տարածել Իմ խոսքը, այլ մտածում են թե պետք է Իմ ուսուցումները դարձնել մարդկային ինտելեկտուալ բանավեճի առարկա, որը միայն մեկ նպատակ է հետապնդում. Ապացուցել մյուսներին, որ իրենք ավելի շատ են հասկանում Իմ Ամենասուրբ Խոսքը: Այնքան են նրանք ցանկանում ապացուցել, թե ճիշտ են իրենց զանազանման մեջ, որ բաժանում են Իմ ճշմարիտ հետևորդներին: Նրանց հանդիսավոր և անկեղծ նվիրվածությունն Իմ հանդեպ կարող է երբեմն նրանց անկարող դարձնել Իմ հանդեպ ունեցած իրական սիրո մեջ, որը պետք է միշտ արմատավորված լինի խոնարհության վրա:

Նրանք պետք է մտավոր քննադատությամբ լի իրենց բարձր ձայները ցածրացնեն: Նրանք պետք է կանգ առնեն, լսեն Իմ ձայնը և դիմադրեն իրենց կրոնկան հարցերի մասին իրենց գիտելիքներն ուրիշներին ապացուցելու ցանկությունը: Երբ նրանք այդպես են վարվում, նրանք մեղավոր են հպարտության մեղքի մեջ: Նրանք ընդհանրապես չեն ճանաչում Ինձ: որովհետև նրանք ժամանակ չեն հատկացնում մնալ լուռ և խոնարհ Իմ աչքերի առջև, որոնք ամեն ինչ տեսնում են: Մինչև Իմ այդ հանդիսավոր հետևորդները չփոքրանան Իմ աչքում և չխոնարհեցնեն իրենց Իմ առջև, Ես չեմ կարողանա նրանց բերել դեպի Ինձ:

Փառաբանեք Ինձ: Պատվեք Իմ խոսքը: Հետևեք Իմ օրինակին: երբեք մի հետապնդեք ուրիշներին Իմ անվամբ, հատկապես ձեր ընկեր քրիստոնյաներին:

Ձեր սիրող Ուսուցիչ և Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# Հաղորդակցվիր անկայուն և նյութապաշտ երտասարդ հասարակության հետ

Չորեքշաբթի 15 հունիսի, 2011թ, ժ 23.00

Իմ սիրելի աղջիկ, այն փորձություններն ու հոգևոր չորությունը, որը դու զգում ես ներկայումս, թույլ են տրված Իմ կողմից, որպեսզի քեզ բերեն Ինձ հետ ավելի մոտիկ միության:

Երբեմն, երբ դու տառապում ես, Ես ստիպված եմ լինում շրջվել, որպեսզի չտեսնեմ քո վիշտը: Չնայած դրան, մինչ դու դիմանում ես յուրաքանչյուր փորձության և շարժվում ես առաջ դեպի հաջորդ էտապը, դու դառնում ես նախկինից ավելի ուժեղ: Որքան խորն է դառնում քո տառապանքը՝ կապված այլոց դաժանության և մեղադրանքի հետ, ովքեր ծաղրում են քեզ այս սուրբ աշխատանքի պատճառով, այնքան շատ շնորհներ կստանաս:

## Ինչպես տառապել Իմ անվամբ

Այնուամենայնիվ Իմ անվամբ տառապելը բավական չէ: Դու չպետք է բացահայտորեն բողոքես այդ չարչարանքների մասին: Դու պետք է, Ինձ բավարարելու համար, **տառապես լուռ**, աղջիկս: Արտաքին աշխարհին դու պետք է ուրախ երևաս: Միայն այդ դեպքում քո հոգին կուժեղացվի և կհասցվի սրբության այն մակարդակին, որը Ես պահանջում եմ քեզնից այս առաքելության համար: Քանի որ երբ զարգանաս այս ձևով, ստացված պտուղները, երբ ասես Իմ խոսքը, կնշանակեն, որ Իմ պատգամները ավելի արդյունավետորեն կլսվեն աշխարհի յուրաքանչյուր անկյունում:

Այս անգամ, մինչ Ես նախապատրաստում եմ Իմ բոլոր զավակներին **Իմ Խաչելությունից ի վեր եղած ամենամեծ մարտահրավերին**, կենսական է, որ որքան հնարավոր է շատ մարդիկ լսեն Իմ Ամենասուրբ Խոսքը:

Բացահայտված ճշմարտությունն այժմ կլսվի ոչ միայն հավատացողների կողմից, այլև նրանց, ովքեր չեն ցանկանում ճանաչել Ինձ, կամ չեն ցանկանում ընդունել Աստծո՝ Հավիտենական Հոր գոյությունը:

## Հաղորդակցվիր անկայուն և նյութապաշտ երիտասարդ հասարակության հետ

Աղջիկս, դու պետք է օգտագործես այնպիսի մեթոդներ, որ հաղորդակցվես **անկայուն և նյութապաշտ երիտասարդ հասարակության հետ**: Ապահովիր, որ

հաղորդակցվես այնպես, որ նրանք հասկանան, ուշադրություն դարձնեն և խոսեն այդ մասին: Քանի որ ի՞նչ օգուտ կլինի այս աշխատանքից, եթե այն ուժեղացնի Իմ Սուրբ Խոսքը միայն հավատացողների համար: Այո, կարևոր է, որ Իմ հետևորդներին հիշեցվեն այն խոստումները, որոնք Ես տվեցի, երբ ասացի որ նորից գալու եմ, բայց Ես ամեն գնով պետք է հասնեմ այն հոգիներին, որոնք չգիտեն, չեն հասկանում կամ հետաքրքրված չեն մարդկության հանդեպ Իմ տաճած կարեկցանքով:

Դու աղջիկս և Իմ հետևորդները պարտականություն ունեք՝ ճշմարտությունը հաղորդելու **ագնոստիկներին, աթեիստներին** և մի ամբողջ երիտասարդ սերնդի: Խոսեք նրանց հետ մեղմ տոնով: **Երբեք մի եղեք ագրեսիվ:** Օգտագործեք խրախուսանքի խոսքեր: Հետաքրքիր դարձրեք Իմ խոսքը:

### **Աշխարհի վերջը չէ**

Խոսեք նրանց հետ այն խոստումի մասին, որ Ես տվեցի **Երկրի վրա Նոր Դրախտի վերաբերյալ**: Դա չի նշանակում աշխարհի վերջ, այլ այն, որ հիմա կտարածվի խաղաղության, ուրախության և երջանկության մի նոր դարաշրջան: Նրանք չեն կարող և չպետք է շրջեն իրենց մեջքն այս Փառքի հանդեպ: Աղոթեք նրանց համար: Բերեք նրանց ետ դեպի Ինձ և դուք կստանաք յուրահատուկ առաջնորդություն և շնորհներ:

**Պարզությունը և ճշմարտությունը պետք է լինեն ձեր ընտրած զենքերը:** Առաջնորդեք օրինակով: Աղջիկս, դու պետք է հիմա պլանավորես ընտրել օգտագործելու համար տարբեր և ժամանակակից մեթոդներ Իմ խոսքը հաղորդելու համար: Քեզ օգնություն կուղարկվի, որ հասնենս այդ բանին:

### **Տարածիր Իմ խոսքը, օգտագործելով հաղորդակցման ժամանակակից միջոցները**

Ժամանակակից հաղորդակցության միջոցներն անհրաժեշտ է օգտագործել՝ ապահովելու համար Իմ խոսքի արագ տարածումը: Աղոթեք հիմա: Խնդրիր հրատարակիչներին որքան հնարավոր է շատ երկրներում տպագրել այս հատորներ, ըորքան հնարավոր է շատ լեզուներով: Օգտագործիր աուդիո, վիդեո և այլ մեթոդներ, որ Իմ խոսքն արագորեն տարածվի: **Կոչ արա կամավորներին** տարածել Իմ պատգամները բազմություններին:

Քանի որ սա, աղջիկս, կփրկի հոգիներ: Ես սիրում եմ քեզ: Քո ուժն ու վճռականությունը այս աշխատանքում հաջողության հասնելու համար, որը գալիս է Իմ և Իմ Սիրելի Սոր հանդեպ քո ունեցած մաքուր սիրուց, կրերի

հոգիներ ետ՝ Իմ բազուկների մեջ և դեպի հավիտենական փրկություն, որոնք այլապես կգնային Դժոխք:

### **Արհամարհիր նրանց, ովքեր անհարգալից են Իմ Անվան հանդեպ**

Խիզախ եղիր: Արհամարհիր մեղադրանքը: Մի պատասխանիր նրանց, ովքեր անհարգալից են Իմ Անվան հանդեպ: Ամենաշատը Իմ հետևորդները կվիրավորեն քեզ: Քանի որ **Իմ լավ աշակերտներից շատերն են ժամանակ առ ժամանակ սխալվում:** Իմ ուսուցումների վերաբերյալ նրանց ունեցած **գիտելիքները կարող են առաջացնել հպարտության զգացում**, որը տանում է դեպի մեծամտություն: Հետո սողոսկում է **մտավոր հպարտությունը**: Իմ այդ խեղճ սիրող և լուրջ հոգիները, որոնց սերն Իմ հանդեպ հարցականի տակ չէ, երբեք չպետք է վերևից նայեն նրանց, ովքեր իրենց կարծիքով սխալ ուղու վրա են: Նրանք չպետք է ընկնեն Սատանայի թակարդը՝ ընդունելով **գերակայության և հանդիսավոր նսասանության դիրք**: Այլապես սա կդառնա սրամտության մարտ, տեսնելու համար, թե մարդկային տերմիններով, ով է ավելի գիտուն, կամ ով է ավելի լավ հասկանում Իմ ուսուցումների ճշմարտությունը:

Հիշեք, թե Ես ինչ եմ ասել ձեզ բոլորիդ: **Ճշմարտությունը պարզ է: Ճշմարտությունը սեր է:** Եթե Իմ Սուրբ Խոսքի մեկնաբանման որոնումների մեջ սեր և համբերություն չցուցաբերեք, ուրեմն **Ճշմարտության ձեր տարբերակը, որ գալիս է, Ինձնից չէ:**

Սիրեք մեկը մյուսին: Դուք բոլորդ հավասար եք Իմ աչքում: Բայց ձեզնից նրանք, ովքեր դուրս են գալիս իրենց ճանապարհից, որ օգնեն Իմ կորած հոգիներին դեպի Ինձ վերադարձնել, դուք կբարձանաք Իմ աչքում:

Ձեր Աստվածային Փրկիչ

Թագավոր ողջ մարդկության

Հիսուս Քրիստոս

**Նախագգուշացման ժամանակ Իմ զավակներն առաջին անգամ կկանգնեն Իմ դեմ**

Երկուշաբթի 20 հունիսի, 2011թ, ժ 11.45

Իմ սիրելի աղջիկ, նախապատրաստիր Իմ գավակներին հիմա, քանի որ շատ շուտով նրանք կկանգնեն Իմ առջև Իմ ողջ փառքով և կարեկցանքով: Շատ շուտով Ես Ինձ ցույց կտամ յուրաքանչյուր մարդու, կնոջ և բանական տարիքի հասած երեխայի:

Այդ նրաշալի օրը, երբ Ես նրանց ցույց կտամ Իմ Գթասրտությունը՝ հակադրված Իմ արդարադատությանը, պետք է ողջունվի բոլորի կողմից: Ուրախացեք, քանի որ դուք բոլորդ, ձեզանից ամեն մեկն ու յուրաքանչյուրդ առաջին անգամ կկանգնեք Իմ առջև:

Շատերի համար այն կլինի սիրով և ուրախությամբ լի, քանի որ դա մի հրաշալի վերամիավորում է: Մյուսները կլինեն վախով լի: Բայց վախենալու ոչինչ չկա, քանի որ Ես սիրում եմ բոլորիդ: Մեղքը կլինի միակ բաժանումը, բայց եթե ապաշխարեք և ընդունեք ձեր վիրավորանքների ճշմարտությունն Իմ հանդեպ և Իմ Հավիտենական Հոր Հանդեպ, դուք կհասկանաք այն հրաշալի Գթասրտությունը, որը տրվում է ձեզ: Նրանց, ովքեր կվախենան, Ես ասում եմ հետևյալը: Վախեցեք մեղքի արմատներից: Ձեր հոգու մեջ եղած մեղքով դուք կհեռանաք Ինձանից: Ընդունեք ձեր մեղքերն այնպես, ինչպես նրանք կան՝ մարդկային թուլություն: Հետո նայեք Ինձ, և Ես կառաջնորդեմ ձեզ դեպի հավիտենական կյանք և ճշմարտությունը:

### **Իմ Մեծ Գթասրտությունը բերում է հրաշալի նորություններ**

Իմ Մեծ Գթասրտությունը հրաշալի նորություններ է բերում Իմ գավակներին ողջ աշխարհով մեկ: Քանի որ երբ այն, Մեծ Նախագգուշացումը, տեղի ունենա, ձեզ հնարավորություն կտրվի փոխել ձեր կյանքը դեպի ավելի լավը: Երբ Իմ գոյության ճշմարտությունը բացահայտվի, այդ ժամանակ դարձը կլինի համատարած:

Միայն և միայն այդ ժամանակ, Նախագգուշացման տեղի ունենալուց հետո, աշխարհին կտրվի հնարավորություն դիմակայել այն մեծ երկնային պատժին, որը կհետևի, **եթե մեղավորները չապաշխարեն բազմություններով:** Դրա համար **Իմ Հոր ձեռքը կիջնի ամենուր** նրանց վրա, ովքեր մերժում են լսել ճշմարտությունը, նրանց վրա ովքեր իրենց մեջքն են շրջում դեպի սերը, դեպի Իմ և ձեր եղբայրների ու քույրերի հանդեպ սերը: Քանի որ ձեր մեղավոր ուղիներն, այդ էտապում, այլևս չեն ընդունվի: Քանի որ դա կլինի վերջին ծոցը: Քանի որ Սատանայի ուժեղ ազդեցությանը չի թույլատրվի պահել իր թույլը մարդկության վրա: Նրանք ովքեր համառորեն հետևում են չար ճանապարհին՝ հետապնդելով Իմ գավակներին, նրանք կկանգնեցվեն:

### **Երկնային Մեծ Պատիժը**

Մի մեծ երկնային պատիժ, որի նմանը չի եղել **Նոյի ժամանակներից ի վեր**,

կսանձագերծվի Աստծո՝ Հավիտենական Հոր կողմից: Իմ հետևորդները, որոնք կասեն, թե Հիսուսն այս ձևով չի խոսում, դուք պետք է հիմա ձեզ տաք այս հարցը: Եթե Հիսուսը լի է Գթասրտությամբ, ինչու՞ Պետք է Նա կամ Հայր Աստված թույլ տա Սատանայի բանակին շարունակել տեռորը Իմ զավակների դեմ: Աստծո բոլոր զավակների հանդեպ տաժա՞ծ սիրուց ելնելով է, որ այդ մեծ պատիժը տեղի կոնենա: Ապաշխարեք դուք բոլորդ: Մերժեք Սատանայի դատարկ խոստումները: Մերժեք այն կեղծ դատարկ կյանքը, որ նա առաջարկում է ձեզ: Ընդունեք, որ երբ աշխարհում լսում եք այսօր Իմ անունը մերժված, այդ գալիս է Սատանայի ուղղակի ազդեցությունից: Մինչև Իմ զավակները չըջվեն նրանից, աշխարհում **խաղաղություն չի կարող լինել:**

Ընդունեք այս Նախագգուշացումը որպես մաքուր սիրո պատգամ:  
Իշխանություն ունեցեղներին Ես ասում եմ հետևյալը: Մերժեք այն ստերը, որոնց հավատարիմ եք եղել, կամ էլ տառապեք դրանց հետևանքներից:

Այն Մեծ Գթասրտությունը, որը Ես ցույց կտամ ձեզ Նախագգուշացման ընթացքում, խաղաղության նոր դարաշջանի լուծումն է: Ընդունեք դա և **կխուսափեք երկնային պատժից:** Մերժեք դա, և միայն Իմ հետևորդները կկարողանան փրկվել: **Մյուսներիդ համար չափազանց ուշ կլինի:**

Ձեր սիրող Փրկիչ

Արդար Դատավոր

Հիսուս Քրիստոս

## **Պատգամ Կույս Մարիամից երիտասարդների հետ հաղորդակցվելու մասին**

Չորեքշաբթի 22 հունիսի, 2011թ, ժ 18.00

*(մի մասնավոր երևումից հետո, երբ Տիրամայրը մոտ 30 րոպե երևաց տեսանողուհուն)*

Ես գալիս եմ Հիսուս Քրիստոսի անունով: Ես Աստծո Մայրն եմ, ձեր Սիրելի Մայրը, բոլոր հրեշտակների Թագուհին:

Ջավակս, հենց նոր դու փորձության ենթարկվեցիր, Իմ Սիրելի Որդու Հիսուսի Քրիստոսի համար արվող քո աշխատանքի պատճառով, և դրա հետևանքով

դու ավելի ուժեղ ես դարձել: Հիմա դու գիտես, թե ինչ պետք է արվի, որպեսզի որքան հնարավոր է շատ երիտասարդներ հասկանան, թե ով է Իմ Որդին: Նա, Իմ Ամենաթանկագին Որդին՝ աշխարհի Փրկիչը, ամեն ինչ կանի, որ փրկի բոլոր նրանց, ովքեր քայլում են աշխարհում՝ անգիտակից Նրա Գթասրտությանը:

Այն զավակները, ովքեր համառորեն մերժում են լսել, նրանց պետք է ասվի ճշմարտությունը, և բավականին շուտ: Խնդրում եմ ասա երիտասարդներին աշխարհով մեկ, որ Հիսուսը քայլում է նրանց հետ օրվա յուրաքանչյուր վայրկյան: Նա այնքան շատ է հոգ տանում նրանց համար: Նրանք գաղափար չունեն Նրա սիրո խորությունից: Նա ցանկանում է գրկել նրանց դեպի Իր Սուրբ Սիրտը, որպեսզի նրանք ուրախանան երկրի վրա խաղաղության նոր դարաշրջանով: Եթե միայն նրանք պատասխանեն:

Զավակս, մարդկանց համար այնքան դժվար է հասկանալ Հայր Աստծո գոյության ճշմարտությունը: Շատ դժվար է համոզել նրանց Աստծո Սիրելի Որդու զոհաբերության մասին: Սա, զավակս, պետք է լինի քո նպատակը:

Գնա հիմա սիրով և խաղաղությամբ:

Ձեր սիրող Մայր

Հրեշտակների Թագուհի

## **Նախագգուշացումը կապացուցի, որ Աստված գոյություն ունի**

Չորեքշաբթի 22 հունիսի, 2011թ, Ժ19.00

Իմ սիրելի աղջիկ, որ հիմա ավելի ուժեղ ես, դիմանալուց հետո մինչ այժմ եղած ամենավատ փորձությանը, դու առաջ կշարժվես տալու համար աշխարհին Իմ հրատապ խնդրանքները:

Նրանք, Իմ սիրելի զավակները, պետք է իմանան, որ երբ Ես շուտով գամ, նրանք դեմ առ դեմ կգան Ինձ: Որքան եմ Ես ցանկանում ցույց տալ նրանց, որ Ես իսկապես գոյություն ունեմ, և ինչպես եմ ես սպասում նրանց դեմքերի վրայի ուրախությանը, երբ նրանք ականատես լինեն Իմ սիրուն և գթասրտությանը:

Քանի որ Իմ գավակներից շատերը ծնկի կգան և **կարտասվեն թեթևության արցունքներով**, ուրախության և երջանկության արցունքներով, զարմաքնի և սիրո արցունքներով: Քանի որ վերջապես, դրանից հետո հնարավոր կլինի ապրել մի նոր կյանքով, որտեղ բոլորը կարող են հետևել Իմ ուսուցումների ճշմարտությանը:

Իմ գավակները չեն հասկանա այս **Գթասրտության Մեծ Գործի** նշանակությունը, Իմ Խաչելությունից ի վեր մարդկության վրա հեղված ամենամեծ ընծան: Քանի որ Նախագգուշացման այս ընծայի միջոցով է, որ **մարդու աչքերը վերջապես կբացվեն այս երկրի վրա և նրանից այն կողմ իրենց ամբողջ գոյության ճշմարտության հանդեպ:**

Նրանք, ովքեր այսօր կենդանի են այս աշխարհում, պետք է հասկանան, թե իրենք որքան արտոնյալ են, ստանալու համար Աստծո՝ Հավիտենական Հոր և Իմ՝ Նրա Սիրվի Որդու գոյության ապացույցը, չնայած սա ձեր հասկացողության սահմանից այն կողմ է:

**Նախագգուշացումից հետո նորից մի դարձեք ձեր նախկին ուղիներին**

Ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ, որ երբ ձեզ ցույց տրվի Իմ ներկայությունը և թե ինչպես է մեղքը ոչ միայն վիրավորում Ինձ, այլև ձեզ ցած նետում դեպի դժոխք տանող ճանապիհով, որ դուք ետ չդառնաք ձեր հին ուղիներին:

**Նախագգուշացմանը հաջորդող ժամանակահատվածը էական է աշխարհի խաղաղության և ձեր փրկության համար:** Մի մերժեք այս ընծան: Բռնեք այն երկու ձեռքով: Թող որ Նախագգուշացումը ձեզ որպես մեկ բերի Իմ մեջ: Երբ դուք դա անեք և աղոթեք առաջնորդության համար, ձեզ որպես պարզևատրություն կտրվի Երկրի վրա Նոր Դրախտը, որտեղ դուք ոչ մի բանի կարիք չեք ունենա:

Ուրախացեք: Լսեք Ինձ: Ուշ դարձրեք Իմ պատգամին, և թույլ տվեք, որ Իմ սերը պարուրի ձեզ դեպի Իմ Փառահեղ Թագավորություն:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Երբ հաջորդ անգամ սիրո մի հոսք զգաք ձեր սրտի մեջ ընկերոջ հանդեպ, հիշեք որ այդ ընծան գալիս է Ինձնից: Առանց սիրո կյանք չկա:

Գթասրտության ձեր Աստվածային Թագավոր

Հիսուս Քրիստոս

Աստծո՝ Հավիտենական Հոր Որդի



# Հասարակ մարդիկ, բարի մարդիկ, իրենց մեջքն են շրջում դեպի Ինձ

Հինգշաբթի 23 հունիսի, 2011թ, ժ 22.10

Իմ սիրելի աղջիկ, այն ուրախությունը որը դու զգում ես այսօր, այն շնորհների հետևանքով է, որոնք հեղվել են քեզ վրա երեկվա պաշտամունքի ժամանակ: Հիմա դու գիտես, թե որքան կարևոր է թույլ տալ Ինձ հեղելու այսպիսի շնորհներ հոգիների վրա այդ ամենահատուկ ժամին, երբ Իմ անձնական ընկերակցության մեջ են:

## Ինչպես ճանաչել կորած հոգիներին

Այսօր Ես ցանկանում եմ խոսել քեզ հետ աշխարհում կորած հոգիների մասին, և թե ինչպես ճանաչել նրանց: Իմ ետևորդները հաճախ սխալմամբ հավատում են, թե կորած հոգիները նրանք են, ովքեր մահացու մեղքի մեջ են: Սա միշտ չէ, որ ճիշտ է: Կորած հոգի կարող է լինել այն մարդը, ով չի հավատում Ինձ կամ Իմ Հավիտենական Հորը: Կորած հոգիներ կարող են լինել նաև այն զավակները, ովքեր այնքան են տարված իրենց ամենօրյա հետապնդումով՝ փող վաստակելու, հարստություն ստեղծելու, կարիերայի կամ նյութական իրերի ետևից վազելով: Այս ամենն այն ուրախության պատճառով, որը նրանց հավատացմամբ, թե այդ իրերը կբերեն իրենց հետագայում: Սրանք հասարակ մարդիկ են, բարի մարդիկ, բայց դարձրել են իրենց մեջը Իմ հանդեպ:

Իմ այդ զավակներից շատերը բարի սիրտ ունեն: Նրանք կարող են սիրով լցված լինել իրենց ընկերների հանդեպ, իրենց ընտանիքի և ծանոթների: Նրանք կարող են լինել հոշակավոր և սիրված: Եվ չնայած դրան, նրանք կարող են լինել կորած հոգիներ: Այդ ինչպե՞ս, կհարցնեք դուք: Որովհետև նրանք չեն հավատում, որ իրենց հոգին նույնքան կարևոր է, որքան իրենց ֆիզիկական կարիքները, և ուստի նրանք մերժում են այն: Մերժելով իրենց հոգին, նրանք ենթակա են ամեն օր իրենց ճանապարհին նետված գայթակղությունների գոհ դառնալուն: Նրանց համար դժվար է մերժել աշխարհիկ բարիքները, առանց մտածելու, որ այն ժամանակը, որը նրանք ծախսում են իրենց փառասիրությունների վրա, կարող է ծախսվել՝ ուրիշների հանդեպ սեր ցույց տալով՝ կիսելու գործողության միջոցով: Փողի հետապնդման իրենց վազքի մեջ նրանք կարող են հպարտ դառնալ: Հպարտությունը դժվարացնում է վարվել ինչպես Իմ ճշմարիտ հետևորդ:

Զավակներս, եթե դուք ամբողջ ժամանակն անց կացնեք հետապնդելով այն երազանքները, որոնք ձեր կարծիքով այս աշխարհն ունի ձեզ առաջարկելու

հւամար՝ հարստություն, ունեցվածք և դիրք, ապա քիչ ժամանակ է մնում աղոթելու կամ սնելու համար ձեր հոգին հաջորդ կյանքի համար: Իմ զավակներից այնքան շատերը չեն կարողանում հասկանալ, թե ինչու են աշխարհիկ բարիքները իրենց ներսում դատարկություն թողնում: Նրանք չեն լսում Իմ այն հետևորդներին, ովքեր գիտեն ճշմարտությունը: Չկարողանալով ճանաչել Աստծո՝ Ամենակարող Հոր գոյությունը, նրանք չեն կարողանում հաճույք պատճառել ուրիշ այլ մեկի իրենցից բացի: Արտաքինից այդ մարդիկ ապրում են ակտիվ կյանքով, առողջ են, լի ուրախությամբ, առանց որևէ հոգսի: Բայց այս տեսակի կենսակերպին հնարավոր չէ հասնել ճիշտ ձևով, առանց հավատալու Հավիտենական Հորը: Խոնարհությունը պակասում է նրանց կյանքում:

Դուք կարող եք ասել, ի պաշտպանություն նրանց, որ նրանք պետք է կերակրեն իրենց ընտանիքները և հոգ տանեն ուրիշների մասին, ովքեր նրանց են վստահում և ուստի նրանք աշխատում են դեպի իրենց նպատակները: Իմ պատասխանն է, ոչ: Նրանց նպատակն իրենց ընտանիքներին կերակրելը չէ: Շատ դեպքերում նրանց նպատակը ծայրահեղություններն են շքեղության ծարավը բավարարելու համար: Որքան շատ են նրանք այդ անում, այնքան նրանք կորած են դառնում Ինձ և Իմ Հավիտենական Հոր համար:

Մինչև Իմ զավակները չարթնանան և չհասկանան այն ուղիները, որոնցով Սատանան օգտագործում է աշխարհի բոլոր փառահեղ գրավչությունները ձեզ ներքաշելու համար նյութական ապահովության կեղծ զգացողության մեջ, նրանք չեն կարող գալ Ինձ մոտ: Ժամանակն այս կյանքում պետք է անցկացվի ձեր Արարչին գովաբանելով, բարեգործության միջոցով ձեր հարևանի կարիքներին օգնելով, այլոց կարիքները ձեր սեփական կարիքներից առաջ դնելով, Իմ ոտնահետքերին հետևելով:

Քանի դեռ Իմ զավակները, ովքեր չեն հավատում Հայր Աստծուն, կամ ովքեր հավատում են նրան, բայց ընտրում են հարմարավետորեն մի կողմ հրել Նրան պատիվ հատկացնելը՝ աշխարհիկ հարցերով ավելի մտահոգված լինելու պատճառով, նրանց համար դժվար կլինին ներս մտնել Երկնքի դարպասներից այն ճշմարիտ Դրախտը, որը նրանք խնդրում են: Երկիրը պարզապես մի էտապ է ձեր ողջ էության մեջ: Երկինքը, նույնիսկ մի հայացք, թե ինչ է այն առաջարկում, հնարավոր չէ զգալ երկրի վրա ապրած կյանքի ընթացքում: Աշխարհի գրավչություններից ոչ մեկն արժանի չէ հետապնդման, եթե դա արվում է Երկնքում սպասվող ժառանգության գանձը գրավ դնելու միջոցով:

Իմ Փառապանծ Թագավորություն մտնելու համար էական հատկանիշներն են հավատը, սերը, խոնարհությունը և Ինձ հաճելի լինելու ցանկությունը:

Ձեր սիրող Ուսուցիչ և ողջ մարդկության Փրկիչ

Հիսուս Քրիստոս

## Մարդիկ չգիտեն, թե ինչ է իրենց հոգին – պատասխանը պարզ է

Շաբաթ 25 հունիսի, 2011թ, առավոտյան Ժ1.30

Իմ սիրելի աղջիկ, քո ձայնը մինչ վերջնականապես կլսվի Իմ նվիրվյալ ծառաների կողմից աշխարհում, **լռությամբ իջնում է այն մասերում, որոնք մոռացված են** Աստծո՝ Ամենակարող Հոր գոյության հանդեպ:

Դու կասես, որ նրանք չեն լսում, բայց **նրանք չեն կարող լսել, եթե լսողություն չունեն**: Հիմա եղիր խիզախ, որ խոսես որքան հնարավոր է շատեր հետ: **Խնդրիր մարդկանց հրատարակել Իմ խոսքի նորությունները**: Կանչիր նրանց: Խնդրիր նրանց: Բացատրիր, որ նրանք պետք է կարդան Իմ պատգամները նախքան դրանք հեռացնելը: Քանի որ միայն այն ժամանակ, երբ նրանք զգան Իմ Աստվածային Շրթունքներից եկող զորությունը, երբ Իմ հոգին կգրավի նրանց հոգուն, նրանք վերջնականապես կհասկանան, որ **այդ Ես եմ, որ հաղորդակցվում են աշխարհի հետ**:

Ես տխուր եմ, աղջիկս, այն խորը բարիկաղների և բաժանումների պատճառով, որոնք այսօր **փակում են Իմ Օրհնյալ Մոր կողմից և Իմ՝ Նրա Որդու կողմից տեսանողների միջոցով** աշխարհի հետ խոսելու **յուրաքանչյուր փորձ**: Անցյալում խոնարհությունը մի փոքր ավելի գերիշխող էր: Այսօր այս կարևոր հատկանիշն անհետացել է: Նրա փոխարեն մի աշխարհ է, ուր **ամեն ինչ, որ արտահայտում է մարդկային բանականություն, գրավչություն կամ ֆիզիկական գեղեցկություն, մարդկանց կյանքում ընդունվում է որպես առաջնահերթություն**: Նրանց հոգեկանությունը մեռել է: Նրանք, աղջիկս, սուկ **դատարկ պատյաններ են**: Պատյաններ, որ երբ կոտրվում են, ոչինչ են: **Հոգու նյութին պետք է ձգտեն Իմ զավակները**: Սա դժվար է շատերի համար, հատկապես նրանց, ում մտքերը լի են մարդկային իմաստությամբ, ուր քիչ տեղ է թողնված հոգևոր իմաստության համար:

Այսպիսին է հոգեկանության պակասը, լիցքավորված Սատանայի զորությամբ, որ մարդիկ թակարդն են ընկել՝ բաց թողնելու իրենց հոգիները մեղք գործելու համար: Հոգեկանության կամ Աստծո հանդեպ հավատի պակասը տանում է հոգուն դեպի Խաբեբայի կողմից թունավորման: Խաբեության Թագավորը առաջնորդում է հոգիներին այն հավատով, որ միայն մարմինն ու միտքն են

միահյուսված՝ ամբողջ դառնալու համար: Տխուր է, բայց դուք չեք կարող ամբողջական լինել առանց ձեր հոգու:

## **Ի՞նչ է ձեր հոգին**

Շատերը չգիտեն, թե ինչ է իրենց հոգին: Ի՞նչ է այն զգում, կամ ինչպե՞ս ճանաչել այն: Դա ձեր մի՞տքն է: Ձեր գիտակցությունը: Պատասխանը պարզ է **Ձեր հոգին դուք եք: Այդ դուք եք:** Ձեր գիտակցությունը, ձեր հավատալիքները, ձեր հասկացողությունը, անկախ նրանից, այն ներկայացնում է ճշմարտությունն այնպես, ինչպես որ կա, թե այն ճշմարտությունը, որին դուք եք ցանկանում հավատալ թե կա: Այն ձեր առանձին մասը չէ, սիրելի զավակներս: Մի բան,, որ պատկանում է այլ աշխարհի: Այն ներկա է յուրաքանչյուր մարդկային արարածի ներսում:

Ձեր հոգուն կարող էք խնամել, հետևելով Իմ ուսուցումներին: Այն կարող է մերժվել մեղքի միջոցով, որից չափազանց դժվար է խուսափել: Բայց այն կարող է վերականգնվել խոստովանության միջոցով, կամ խղճի խայթ զգալով և նորից սկսելով: Կամ էլ կարող է ավերվել: Ոմանք դիտավորյալ կերպով ոչնչացնում են իրենց հոգին՝ մեղք գործելով հաճույքների համար կամ աշխարհի անառակությունների համար, ամբողջապես գիտակցելով, թե ինչ են անում: **Ուրիշները՝ ժխտում են, որ իրենք ունեն հոգի:** Նրանց գոռոզամտությունը համոզում է իրենց, թե ամեն ինչ գիտեն: Թե կյանքը սկսվում և ավարտվում է այս երկրի վրա:

Կան նաև այն երտասարդ հոգիները, ովքեր ոչ իրենց մեղքով, իրենց ծնողների կողմից մեծացվել են առատությամբ, երբ նյութական իմաստով ոչ մի բանի կարիք չեն ունեցել: Նրանց **կրոնը հիմնված է նյութական օգուտի վրա:** Ձգտելով ավելի շատի, նրանց փառասիրությունը շարունակում է աճել, մինչև, վերջնականապես ոչինչ չի մնում ձգտելու, երբ մահը վրա է հասնում: Այդ ժամանակ նրանք կորած են: Ջարմացած: Շփոթված: Իրենց ներսում մի խորը հիվանդագին զգացողությամբ նրանք գիտեն, որ ինչ-որ բան սխալ է: Հոգին ասում է նրանց, բայց նրանք չգիտեն, թե ինչպես պատասխանել: Նրանց է, որ դուք պետք է փրկեք:

Ես կոչ եմ անում ամենուր գտնվող Իմ զավակներին, որ **օգնեն Ինձ փրկելու Իմ բոլոր խեղճ զավակներին:** Ես գիտեմ, որ խնդրում եմ առատաձեռնության մի չափազանց գործողություն ձեր կողմից: Դա մի հսկայական պատասխանատվություն է: Բայց ենթարկվելով Իմ Ամենասուրբ Կամքին, դուք Ինձ կօգնեք փրկել աշխարհի մեծ մասին Սատանայի ճանկերից և նրա տիրած տեղորից:

Առաջ գնացեք հիմա, Իմ հետևորդներ, դուք բոլորդ և տարածեք Իմ խոսքը տանջված, մոլորված և հիասթափված աշխարհում: Իմ շնորհները կհեղվեն ձեզանից յուրաքանչյուրի վրա նույնիսկ մեկ դարձի եկողի համար, մեկ հոգու համար, որ կարող է խուսափել դժոխքի սարսափից:

Ես սիրում եմ ձեզ բոլորիդ: Ես գրկում եմ ձեզ, Իմ հետևորդներ, Իմ թանկագին զավակներ ամենուր: Որքան եք դուք ամեն օր Ինձ հանգստություն բերում: Որքան եք դուք Ինձ սփռվում: Հիմա բերեք Ինձ ավելի շատ հոգիներ:

Ձեր Աստվածային Ազատարար

Փրկիչ ողջ մարդկության

Հիսուս Քրիստոս

## **Կույս Մարիամ – Սատանան կորցնում է իր ուժը, երբ Իմ Վարդարանն են աղոթում**

Շաբաթ 25 հունիսի, 2011թ, ժ 15.00

Ջավակս, միշտ ուշադրությունդ կենտրոնացած պահիր Իմ Որդու վրա, քանի որ Նա քո ուշադրության կարիքն ունի: Դու պետք է քո ողջ վստահությունը դնես Նրա վրա և երբեք թույլ չտաս, որ որևէ մեկը հեռացնի քո հայացքը Նրանից:

Նա, զավակս, ընտրել է քեզ որպես այս ժամանակների ամենակարևոր պատգամատարներից մեկը, որպեսզի կորած հոգիները փրկվեն: Ասա մարդկանց, որ աղոթեն Իմ Ամենասուրբ Վարդարանը, նույնիսկ ոչ քրիստոնյաներին, քանի որ սա ամենաուժեղ զենքն է **Խաբեքայի ազդեցության դեմ, ով ոռնում է ցավից**, երբ այն աղոթում են: Նրա ուժը թուլանում է, երբ Իմ զավակներն ասում են այս աղոթքը: Որքան շատ Իմ զավակներն աղոթեն Սուրբ Վարդարանը, այնքան շատ հոգիներ կարող են փրկվել:

Դու, զավակս, շատ դժվար առաքելություն ունես, շատ ավելի դժվարին, քան պատմության ընթացքում եղած մարգարեները: Սա **աշխարհում հոգու խավարի պատճառով է**: Նախկինում երբեք այսպիսի խավար չի իջել, երբ Իմ զավակներն իրենց մեջքը շրջեն դեպի Իմ Որդին: Նա, ով սարսափելի մահով մեռավ նրանց փրկելու համար: Սակայն նրանք ոչ միայն մոռացել են սա, այլև ընտրել են մերժել հենց Նրա գոյությունը:

Ինձ՝ ձեր Սիրելի Մորն ուղղված աղոթքը, վնասում է Չարին, ով նվաստանում է և կորցնում է իր գործությունը, երբ Իմ Վարդարանն է ասվում: Սա այն զենքն է, որը տրվել է Ինձ, որպեսզի Ես կարողանամ օգնել փրկելու հոգիներ, **նախքան վերջնականապես կջախջախեմ օձի գլուխը: Երբեք մի թերագնահատեք Վարդարանի գործությունը**, քանի որ Իմ Մուրբ Վարդարանի կանոնավոր պաշտամունքին նվիրված մի խումբ մարդիկ կարող են փրկել իրենց ազգը: Ասա Իմ զավակներին զգույշ լինել, երբ մեջքները կդարձնեն դեպի աղոթքը, քանի որ այդ դեպքում նրանք բաց են մնում Խաբեբայի համար, որ խաբեությանը նրանց տանի իր հմայիչ բայց վտանգավոր ճանապարհով դեպի խավարը: Բեր Իմ զավակներին լույսի մեջ, տարածելով նվիրվածությունը Իմ Ամենասուրբ Վարդարանի հանդեպ:

Ձեր Սիրող Մայր

Մարիամ Խաղաղության Թագուհի

## **Առաջին պատգամը Հայր Աստծուց – Ժամանակը եկել է հիմա, որ Ես հռչակեմ Իմ Փառահեղ Թագավորությունը – Նոր Դրախտը երկրի վրա կտնի 1,000 տարի**

շաբաթ 25 հունիսի 2011թ, ժ16.00

*Տեսանողի կողմից. << Այս պատգամը ստանալուց առաջ ես վերջացրել էի Աստվածային Գթասրտության աղոթքն ասելը, երբ հանկարծ Մուրբ Հոգին հայտարարեց ինձ Հայր Աստծուց պատգամը: Ես նյարդայնությունից դողում էի: Այդ ժամանակ հարցրեցի. <<Ու մ'անունից ես դու գալիս>>; Պատասխանը սա էր.*

Ես գալիս եմ Իմ Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունից, մարդկության Փրկչի: **Ես Հայր Աստվածն եմ** և Ես խոսում եմ քեզ հետ առաջին անգամ: Իմ ընտրյալ աղջիկ, Ես այսօր խոսում եմ քեզ հետ, որ կարողանամ տեղեկացնել մարդկությանը բոլորի հանդեպ Իմ ունեցած սիրո մասին:

Շատերը չեն ճանաչում Ինձ: Նրանք կարծում են, թե ճանաչում են, սակայն Իմ միլիոնավոր զավակների համար **Ես սոսկ մի անդամ միավոր եմ**: Այնքան քիչ նրանք գիտեն Իմ ցանկությունը՝ Ինձ թույլ տալ, որ սիրեմ իրենց այնպես, ինչպես նախատեսված էր:

**Իմ անունն օգտագործվում է անիմաստ ձևով աշխարհում** շատերի կողմից, ովքեր չեն ընդունում, որ Իմ ձեռքով պատրաստվեց աշխարհն ու նրա բնակիչները: Նրանք, ովքեր ընդունում են, շփոթության մեջ են, թե Ես ով եմ, և ինչ-որ չափով վախենում են Ինձնից: Ինձնից չպետք է վախենալ, քանի որ Իմ սերը մաքուր է Իմ բոլոր գավակների համար: Այնքան շատ եմ Ես սիրում ձեզ, որ **Ես կատարեցի ամենամեծ գոհաբերությունը**, որպեսզի ձեզ ետ բերեմ Իմ բազուկների մեջ և ձեզ հնարավորություն տամի ըկվել խաբեբայից: Ես ուղարկեցի երկիր Իմ Սիրելի Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որպեսզի կարողանաք հասկանալ սիրո ճշմարտությունը: Այս սերը, երբ դուք ընդունեք այն, կփրկի ձեզ բոլորիդ:

Իմ սիրտը կոտրված է նրանից, թե ձեզանից որքան շատերը չեն շրջվի դեպի Ինձ և Ինձ ցույց չեն տա իրենց սերը: Ես տենչում եմ, որ դուք պարզապես շրջվեք և Ինձնից օգնություն խնդրեք: **Կարիք չկա վախենալ Իմ սիրուց**, քանի որ Իմ սիրո միջոցով է որ ձեզ տրվել է ձեր առաջին շունչը: **Ես ստեղծել եմ ձեզնից յուրաքանչյուրին Իմ նմանությամբ, որպեսզի ընտանիք ունենամ:** Ես ստեղծեցի աշխարհը մաքուր սիրուց, որպեսզի դուք, գավակներս, կարողանաք կիսել Ինձ հետ այս Դրախտը: Այնքան սիրով է դա ստեղծվել, որ յուրաքանչյուր մանրուք զգուշորեն կառուցվել է: Այնքան երջանիկ էի Ես, երբ **Դրախտը Երկրի վրա ստեղծվեց**, որ հրեշտակները հրճվում էին, և Երկինքը բոցավառվում էի սիրո բոցերով այնպես, որ ոչ մի մարդկային արարած երբեք չի կարող պատկերացնել: Իսկ հետո այն ավերվեղ օձի պատճառած Մեղքի հետևանքով:

Զավակներս, թույլ տվեք Ինձ բացատրել: **Ժամանակը եկել է, որ Ես հռչակեմ այն Դրախտը**, որը Ես ստեղծել եմ սիրով, որպեսզի մենք նորից կարողանանք դառնալ մեկ ընտանիք:

Մի ընտանիք, որը միացած կլնի սիրո այն գորեղ կապերի միջոցով, որոնք նրան միասին կպահեն:

Երկրի վրա Նոր Դրախտը հիմա նախատեսվում է Իմ բոլոր գավակների համար:

**Այն կտնի երկրի վրա 1,000 տարի**, և ոչ մեկին չպետք է բացառել, քանի որ դա կկոտրեր Իմ սիրտը: Իմ Սիրելի Որդին՝ Հիսուս Քրիստոսը, և Սուրբ Հոգին ջանասիրաբար փորձում են ձեզ ետ բերել դեպի Իմ փարախը, որպեսզի սկզբում ստեղծված Դրախտը կարողանամեկ անգամ ևս միանալ որպես բոլորին տրվող Իմ ամենամեծ ընծան, որ Իմ գավակներն ուրախանան:

Այս Դրախտը կլինի սիրո, գեղեցկության, փառքի վայր, և կլինի տուն բոլոր նրանց համար, ովքեր սրտով և հոգով մաքուր են: Այն երկրի վրա գտնվող

յուրաքանչյուր հոգու համար է, և այն վերջնական նպատակն է, որը պարունակվում է երկրի վրա գտնվող յուրաքանչյուր հոգու մեջ, **ներառյալ նրանց, ովքեր չեն հասկանում դա:**

Իմ Որդին խոսում է աշխարհի հետ և նախապատրաստում ցույց տալ Իր մեծ գթասրտությունը Նախագգուշացման ժամանակ, որպեսզի բոլոր մեղավորներին հնարավորություն տա հրճվել Երկրի վրա Նոր Դրախտով:

Դուք պետք է լսեք Իմ ձայնը: Ես ձայն եմ տալիս ձեզ բոլորիդ, որ ուշադրություն դարձնեք: Ետ դարձեք դեպի Ինձ: Ընդունեք, որ Ես գոյություն ունեմ: Որ Ես ողջ կյանքի, ողջ արարչության, ողջ փառքի ակունքն եմ: Երբ դա անեք, դուք կմտնեք Երկրի վրա Իմ Դրախտ, որն առաջարկում է ամեն ինչ, որ կարող եք երազել: Լսեք Իմ Որդուն և աշխարհին Նրա կողմից տված պատգամը՝ ձեզ բոլորիդ դարձի բերելու համար: Նրանք, ովքեր չեն լսի, կամ դրանից հետո կշարունակեն սարսափելի մեղքի ճանապարհը, **նրանց հանդեպ գթասրտություն ցույց չի տրվի:**

Ես ողջ արարչության Աստվածն եմ: Ես սիրո, կարեկցանքի Աստվածն եմ: Ես նաև Արդարության Աստվածն եմ: Իմ ձեռքը կիջնի մարդկության վրա, ովքեր Չարի հանդեպ չար նվիրվածությամբ մերժում են հետևել սիրո և ճշմարտության ուղուն:

Քանի որ ժամանակը եկել է հիմա, որ Ես հռչակեմ Իմ Փառահեղ Թագավորությունը, որը ոչ մի մարդ չի կանգնեցնի մեղքի միջոցով: Եթե փորձեն կանգնեցնել, ապա ընդմիշտ կկորչեն:

Ես ձեր Աստվածն եմ, ձեր Արարիչը: Իմ սերը երբեք չի մեռնում: Այն բոցավառ է և լի խորը քնքշությամբ ձեր հանդեպ՝ ձեզ ետ դեպի Ինձ բերելու համար, դեպի այն ժառանգությունը, որը Ես այնքան սիրով ստեղծեցի: Մեղքի պատճառով Իմ զավակներից շատերը ստիպված կլինեն գրավի դնել այդ ժառանգության հանդեպ իրենց իրավունքը և ետ կանգնել, որ թույլ տան նրանց, ովքեր ճշմարիտ սիրում են Ինձ, ներս մտնեն դռներից առանց խոչընդոտի:

Խնդրում եմ, զավակներս, բաց մի թողեք մարդկությանն ուղղված Իմ աղերսանքը: Ընդունեք հիմա Իմ Սիրելի Որդու կողմից առաջարկվող Գթասրտությունը:

Ընդունեք այն բաց բազուկներով:

Հայր Աստված

Արարիչն ու Ստեղծողը Ամենայնի



# Նախագգուշացումը քույր Ֆաուստինային տրված Իմ Աստվածային Գթասրտության ցուցադրումն է

Կիրակի 26 հունիսի, 2011թ, ժ 18.00

Իմ սիրելի աղջիկ, ժամանակը մոտ է հիմա: **Շատ քիչ ժամանակ կա նախագգուշացնելու և նախապատրաստելու համար** այն բոլոր խեղճ հոգիներին, ովքեր այնքան ցնցված կլինեն Նախագգուշացման ժամանակ, որ չեն հասկանա, թե ինչի են ակնատես լինում: Նրանց պետք ասել, որպեսզի իմանան, թե ինչ ակնկալեն: Եթե նրանք բացեն իրենց սրտերը Աստվածային Գթասրտության այս մեծ պահի հանդեպ, նրանց կտրվի հավիտենական կյանքի հնարավորությունը:

Այս Մեծ Նախագգուշացումը քույր Ֆաուստինային տրված Իմ Աստվածային Գթասրտության ցուցադրումն է: Իմ Գթասրտության այս մեծ գործը կանխասացվել է, և Նախագգուշացման ընթացքում է որ Իմ Մեծ Գթասրտությունը կպարտուրի ողջ աշխարհը: Իմ արյունն ու ջուրը դուրս կհորդեն, որպեսզի դուք բոլորդ վերջապես իմանաք ճշմարտությունը: Ասացեք նրանց, ովքեր չեն հավատում Ինձ և Իմ Հավիտենական Հորը, որ այս իրադարձությունը տեղի կունենա: Այդ ժամանակ, երբ այն տեղի կունենա, նրանք կկարողանան դիմանալ Իմ Գթասիրտության շոկին, որը Նախագգուշացման ժամանակ Սատանայի ճանկերից **կփրկի միլիոնավոր** հոգիներ: Ըճմարտությունը, երբ բացայտվի, այնքան շատերին կփրկի Դժոխքի կրակներից:

Դրանից հետո, ամենուր գտնվող Իմ զավակների մեջ ներկա Սուրբ Հոգին, կօգնի պարտության մատնելու Չարի գործերը: Դուք բոլորդ պետք է տարածեք այն խոսքը, թե ինչպես պետք է մարդկությունը նախօրոք նախապատրաստի իրենց հոգիները: Քանի որ նույնիսկ հավատացողները պետք է հասկանան, որ իրենց համար նույնպես հուզականորեն ահնանգստացնող է տեսնել իրենց սեփական անցյալ վարքն այնպես, ինչպես Ես եմ տեսնում:

Ես հիմա ձեզ բոլորիդ կոչ եմ անում **խոստովանության գնալ**: Մյուս քրիստոնյաները պետք է ծնկաչոք աղոթեն մեղքերի թողության համար: Նրանք, ովքեր վստահ չեն այս մարգարեության հանդեպ, խնդրում եմ բաց պահեք ձեր սրտերը, քանի որ երբ ակնատես լինեք այս էկոլոգիական, բայց գերբնական երևույթին, կարևոր է, որ հասկանաք, որ սա ամենամեծ հրաշքն է, որ երբևէ

կտեսներ, և որ դա Իմ մեծ ընծան է ձեզ բոլորիդ: Հաշվի առեք սա: **Այս կերպ կկատարվի Վերջին Դատաստանի Օրը**, միայն թե այս անգամ դուք չեք դատվի: Ձեզ կտրվի կյանքի մի նոր ընթացք, երբ ձեր հոգին կփրկվի՝ ձեզ հնարավորություն տալով վերականգնել այն (հոգին) այն մակարդակի վրա, որը Ես եմ ցանկանում:

Հավատացողներ աղոթեք հիմա սրտանց մյուսների համար, և նրանք կփրկվեն:

Ձեր Փրկիչ  
Հիսուս Քրիստոս

## **Շարունակիր տարածել Իմ խոսքը – Ես շատ կամավորների եմ ուղարկում քեզ մոտ**

Երեքշաբթի 28 հունիս, 2011թ, ժ 19.30

Իմ սիրելի աղջիկ, խոչընդոտները, որոնց վրայով դու պետք է ցատկես, ավելի բարձր են դառնում, երբ տառապում ես Ինձ համար: Խաբեբայի ջանքերը, քեզ հեռու քաշել այս աշխատանքից, երբեք այսքան ուժեղ չեն եղել: Դու պետք է ուժեղ մնաս և հաստատուն կանգնես այդ հարձակումների դեմ: Իմացիր, որ նա՝ Խաբեբան, երբեք քեզ Ինձնից չի խլի, սակայն նա կփորձի և կշարունակի փորձել: Սա քո առաքելության ամենադժվարին փուլերից մեկն է: Այն միայնակ է, դժվար և քեզ պատճառում է ֆիզիկական ու հոգու խորը ցավ: Դու պետք է վստահես Ինձ, որ օգնեմ քեզ գլուխ հանել այս հարձակումներից և հասկանալ դրանք այնպես, ինչիսին իրականում կան:

Հիմա աղջիկս, լսիր Ինձ: Դու պետք է շարունակես տարածել Իմ խոսքն աշխարհում արագրոեն, օգտագործելով քեզ ուղարկված յուրաքանչյուր օգնություն: Ես բազմաթիվ կամավորների եմ ուղարկում քեզ մոտ, և նրանց աշխատանքն արդեն պտուղ է տալիս:

Հիմա դու պետք է միայն շարունակել հաղորդել Իմ խոսքը՝ հոգիներ փկելու համար: Երբեք տեղի չտաս: Գիտեմ, որ դա գայթակղեցնող է, և քեզ համար հեշտ չէ դիմանալ մեղադրանքներին: Թույլ տուր Ինձ ամուր բռնել քո ձեռքը և հիմա առաջնորդել քեզ դեպի այն գործությունը, որն անհրաժեշտ է քեզ: Իմ օրհնությունները տարածվել են քո շուրջը, այնպես որ հիմա ոչ մի բան չի խոչընդոտի աշխարհին լսելու Իմ ձայնը:

Ձեր սիրող Փրկիչ Հիսուս Քրիստոս

# Խոստովանեք ձեր մեղքերը հիմա – մի վախեցեք

Չորեքշաբթի 29 հունիսի, 2011թ, ժ 19.00

Իմ սիրելի աղջիկ, օգնությունը, որը Ես հիմա ուղարկել եմ քեզ, արագորեն կտարածի Իմ խոսքը աշխարհով մեկ, օգտագործելով հաղորդակցության ժամանակակից միջոցները: Իմ սիրտը սիրով բոցավառ է Իմ այն յուրահատուկ զավակների հանդեպ, ովքեր արթնացան Իմ կանչի հանդեպ: Քանի որ նրանք այն բանակն են, ովքեր կառաջնորդեն Իմ զավակներին:

Իմ բոլոր օրհնությունները պարուրում են նրանցից յուրաքանչյուրին, ովքեր օգնում են տանելու Իմ խաչը մարդկության բարօրության համար: Սուրբ Հոգին հեղվում է նրանց վրա, օգնելու նրանց, որ տարածեն այս պատգամներն արագորեն և մեծ ազդեցությամբ:

Իմ զավակներ և Իմ բոլոր հետևորդներ, պարզապես հիշեք այն միակ բանը, որի վրա ցանկանում եմ, որ ուշադրություն կենտրոնացնեք. **Նախազգուշացրեք ուրիշներին ազատագրում փնտրել նախքան Նախազգուշացումը: Նրանք պետք է խոստովանեն իրենց մեղքերը հիմա և չպետք է վախենան:** Դրա փոխարեն նրանք պետք է ուրախանան: Ընդամենը մի քանի ամիս է մնացել Իմ Գթասրտության այս Մեծ Գործողությանը: Ժամանակ մի կորցրեք: Գնացեք սիրով և խաղաղությամբ Խույս մի տվեք այս աշխատանքից: Այն Իմ բոլոր զավակների բարօրության համար է: Բոլոր նրանք, ովքեր աշխատում են տարածելու Իմ ճշմարտությունը, կպարգևատրվեն իրենց նվիրվածության և հավատի համար: Իմ օրհնությունները կպաշտպանեն նրանցից յուրաքանչյուրին և նրանց ընտանիքները:

Ուրախացեք հիմա, քանի որ ժամանակը հասել է, որ աշխարհը վերջապես լսի Իմ ձայնը այն ձևով, ինչպես պետք է որ լսեն:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# **Թույլ մի տվեք, որ Իմ Եկեղեցու մարդկային ձախողումների հետևանքով դուք ձեր մեջքը դարձնեք դեպի Ինձ**

Հինգշաբթի, 30 հունիսի, ժ. 2011 20.00

Իմ սիրելի աղջիկ, այս երեկո Ես ժպտում եմ ուրախությունն Իմ սրտում, քանի որ վերջապես երիտասարդները լսում են Իմ խոսքը ինտերնետում ինչպես կանխասացվել էր:

Այս ձևով ավելի շատ մարդիկ կկարողանան ասել աշխարհին, թե ինչպես նախապատրաստվել Նախագգուշացմանը: Իմ Սիրտը պայթում է ուրախությունից, երբ Ես տեսնում եմ այն սերը, որն Իմ գավակներն ունեն Իմ հանդեպ երկրի յուրաքանչյուր անկյունում: Իմ սերը երբեք չի մեռնում: Նրանք, Իմ սիրելի հետևորդները, լի են Իմ սիրով, որը նրանք զգում են իրենց սրտերի մեջ: Հիմա նրանք կարող են ասել աշխարհին, ներառյալ ցինիկներին, թե որքան են պատվում Ինձ՝ գովաբանելով Իմ փառքը բոլորին: Քանի որ Իմ այդ խիզախ և սիրող արարածներն այժմ կգրավեն նրանց, ովքեր դիմադրում են Ինձ, դեպի ճշմարտությունը, թե ինչու են նրանք այս երկրի վրա առաջին հերթին:

Երկինքն ուրախանում է նրանց հետ, ովքեր բացահայտորեն ինտերնետում հռչակում են իրենց սերն Իմ հանդեպ: Նրանց հանդեպ Իմ սերն առաջ է մղվում, որպեսզի Իմ շնորհները ցողվեն նրանցից յուրաքանչյուրի վրա, ձվելով երկրագնդի մի անկյունից մյուսը:

## **Ես հիմա գալիս եմ փրկելու ձեզ նախքան Դատաստանի Օրը**

Հիշեք մեկ դաս, Զավակներս: Իմ ուսուցումների ճշմարտությունը երբեք չի փոխվել: Մարդկային սխալը, Իմ նվիրաբերված ծառաների մեղքերը և նրանք ովքեր խեղաթյուրել են ճշմարտությունը՝ իրենց սեփական փառասիրությանը հարմարեցնելու համար, աղտոտել են Իմ անունը, բայց նրանք երբեք չեն փոխել այն, թե Ով Եմ Ես: Ես մարդկության Փրկիչն եմ: Առաջին անգամ Ես եկա, որ փրկեմ ձեզ թույլ տալով ձեզ մեղքերի թողություն: Հիմա Ես նորից գալիս եմ ձեզ փրկելու նախքան դատաստանի օրը:

Քանի որ Իմ սերն այնքան հզոր է, այն հիմա կներթափանցի աշխարհով մեկ Սուրբ Հոգու զորությամբ, որեսպազի ձեզ ետ բերի դեպի Իմ քնքուշ սիրո փարախը: Զգացեք Իմ սերը հիմա գավակներս: **Թույլ մի տվեք, որ Իմ Եկեղեցու**

մարդկային ձախողումների հետևանքով ձեր մեջքը շրջեք դեպի Ինձ՝ Հիսուս Քրիստոսը կամ Իմ Հավիտենական Հայրը:

**Նրանց, ովքեր շրջել են իրենց մեջքը Իմ հանդեպ Իմ Եկեղեցու ձախողումների պատճառով**

Այդ մեքի պատճառով է, որ դուք գայթակղվեցիք փակել ճշմարտության ճանապարհը: **Դուք, ովքեր մեղադրում եք Եկեղեցուն** Իմ հանդեպ ձեր հավատքի պակասի համար, անկեղծ չեք ինքներս ձեր հանդեպ: Քանի որ եթե ճշմարիտ սիրելիք Ինձ, պատճառաբանություններ չեիք փնտրի: Սատանան հիմա աշխարհում ամեն տեղ է, զավակներս, փորձելով համոզել ձեզ ամեն հնարավոր առիթով, որ ձեր հավատը տեղին չէ, կարևոր չէ: Որ ձեր հավատը ձեզ համար Երկնքում տեղ չի երաշխավորի: Որոշ դեպքերում դուք հավատում եք, թե Աստծո գթասրտությունն անվերջ է, և որ դուք կարող եք փրկվել, քանի որ ապրում եք մի կյանքով երբ ուրիշներին վնաս չեք պատճառում: Շատ հաճախ դուք մարտահրավեր եք նետում Ինձ, երբ **վիրավորում եք Ինձ աշխարհում եղած չարիքի համար:** Սա այն ժամանակ է, երբ դուք բարկանում եք Իմ կամ Աստծո՝ Իմ Հավիտենական Հոր վրա: Ինչպե՞ս կարող է Աստված մի կողմ կանգնել և թույլ տալ այսպիսի չարիք աշխարհում, ուր գոյություն ունեն մարդասպանություն, բռնաբարություն, աբորտ, չարչաչանք, ագահություն և աղքատություն: Դուք պետք է կանգ առնեք հիմա և լսեք Ինձ:

Հիշեք, որ մեղքը՝ պատճառված Սատանայի կողմից, ում գոյությանն այսօր շատերը չեն հավատում, կարող է ներթափանցել ձեզնից յուրաքանչյուրիդ մեջ, այն ընծայի պատճառով, որը տրվել է ձեզ ձեր Արարչի՝ Հոր կողմից: **Ազատ կամքի այդ ընծան տրված է յուրաքանչյուրիդ:** Ոմանք օգտագործում են այս ընծան բարի գործերի համար, ուր սեր են ցույց տալիս բոլորի հանդեպ, մինչդեռ ուրիշներն օգտագործում են այն, այլոց հանդեպ առավելություն ստանալու նպատակով: Երբ Սատանան գրավում է այդպիսիներին իրենց թույլ ազատ կամքի միջոցով, այդ դեպքում նրանք ի վիճակի են դառնում կատարել մեծ չարագործություններ: Ազատ կամքը ձերն է, զավակներս: Երբ այն դանում է մեղքի միջոցով աղտոտված, դրա արդյունքը ավերածությունն է աշխարհում: Աստված՝ Հայրը, չի կարող ստիպել ձեզ չանել որևէ բան, անկախ նրանից, դա ճիշտ է, թե սխալ: Քանի որ Նա չի միջամտի ձեր ազատ կամքին: Նա միշտ կխրախուսի ձեզ աղոթել, որ ստանաք այն անհրաժեշտ շնորհերը, որոնցով կխուսափեք մեղքից: Ձեր ազատ կամքի միջոցով է, որ դուք կընտրեք այս երկու որոշումներից մեկը. **Շրջվելու դեպի Աստված, կամ թույլ տալու որ նվաճվեք Սատանայի չար ստերի կողմից,** ով կշեղի ձեր միտքը ճշմարտությունից:

Հիշեք, Ես ճշմարտությունն եմ: Սատանան չի ցանկանում, որ դուք տեսնեք ճշմարտությունը: Նա կօգտագործի ձեր մտավոր կարողությունները և

կներկայացնի խեղաթյուրված պատճառաբանություններ, որ նվաճի ձեզ: Նա նույնիսկ կարող է համոզել ձեզ, թե որևէ բան չարիք է այն դեպքում, երբ դա բարիք է: Ուստի, երբ կհավատաք, թե կեղծավորություն է աղոթքով Հայր Աստծուն գովաբանելը Եկեղեցու մեղքերի պատճառով, դուք պետք է ճանաչեք այս խաբեությունն այնպես, ինչպիսին իրականում է. մեկ այլ ուղի՝ ձեզ խրախուսելու, որ շրջվեք Ինձնից՝ ճշմարտությունից: Հիմա, զավակներս, ցույց տվեք Ինձ ձեր սերը՝ ոտքի կանգնելով և **պաշտպանելով Իմ անունը անհավատ աշխարհում:**

Շատ շուտով դուք կխրախուսեք այլոց, որ լսեն ձեր տեսակետները: Ճիշտ ինչպես նրանք, ովքեր հայտարարում են, թե չեն հավատում Ինձ, բարձրայն գոչում են, թե ասում են Ինձ, դուք հիմա պետք է ասեք աշխարհին, որ սիրում եք Ինձ: Միայն այդ դեպքում **աշխարհում կտարածվի զանգվածային դարձ:** Թույլ տվեք Ինձ հիմա, որ ձեզ արթնացնեմ, որպեսզի կարողանաք նախապատրաստել Իմ զավակներին մտնելու երկրի վրա Իմ Նոր Դրախտը: Հիշեք, միայն նրանք, ովքեր հավատում են Ինձ և Իմ Հավիտենական Հորը, միայն նրանք կարող են մտնել այդ Դրախտ:

Գնացեք հիմա և բերեք Ինձ բազմություններ:

Ձեր սիրող Փրկիչ

Հսուս Քրիստոս

## **Աղոթքը կարող է կասեցնել աշխարհում եղած աններդաշնակությունը**

Ուրբաթ 1 հուլիսի, 2011թ, ժ. 23.00

Իմ սիրելի աղջիկ, աղոթքն ու Իմ հանդեպ պաշտամունքը նման են ծարավ մարդուն տրված ջրի: Երբ ջրի պակաս ունես, ծարավդ կշարունակվի, այնպես որ վերջնականապես առանց ջրի կմահանաս: Նրանք, ովքեր ճանաչում են Ինձ, սիրում են Ինձ և նվիրվածություն են ցույց տալիս Իմ հանդեպ, պետք է իմանան մեկ բան: Եթե չշարունակեք ստանալ Իմ Մարմինը և աղոթել Ինձ կանոնավոր կերպով, դուք արագորեն կկորցնեք ձեր ցանկությունն Իմ հանդեպ: Առանց այդ ցանկության դուք կհեռանաք Ինձնից, մինչև որ ձեր գլուխները կշրջվեն Սատանայի կողմից ձեր մտքերի մեջ ցանված գայթակղությունից: Առանց ձեր կյանքի մեջ Իմ ճշմարիտ ներկայության դուք ոչինչ եք, զավակներս:

Զգոն եղեք միշտ: Աղոթքը պահպանում է ձեզ մեղքից: Իմ հանդեպ ձեր պաշտամունքը կգրավի Խաբեբային, ով ձեզ ավելի հաճախակի կխոցի: Այնուամենայնիվ, առանց Իմ հանդեպ կանոնավոր պաշտամունքի, դուք աննպատակ կքայլեք այս աշխարհում:

Հավատացողներ հասկացեք, որ աղոթքը կարող է կասեցնել բավականաչափ աններդաշնակությունն աշխարհում: Այս տեսանկյունից և այլ տեսանկյունների կողմից ասված աղոթքներն արդեն **թեթևացրել են Բենեդիկտ Պապին սպառնացող անմիջական վտանգները**, բայց ոչ երկար ժամանակով: Իմ Օրինյալ Մորն ուղղված աղոթքը կարող է սարեր շարժել, նվազեցնել չար դաժանությունների աղդեցությունը, ներառյալ կանխասացվածների, և դարձի բերել մեղավորներին:

Հիշիր այս դասը, աղջիկս, աղոթքը գործում է որպես քո սպառազինությունը Խաբեբայի դեմ: Դու, ամենից առաջ, պետք է իմանաս կանոնավոր աղոթքի անհրաժեշտությունը քո առաքելության մեջ: Դու պետք է ավելի շատ ժամանակ անց կացնես Ինձ հեռ լուռ մտածողության մեջ: Քանի որ երբ դու սա չես անում, Իմ պատգամների քո զանազանությունը թուլանում է, և կարող են կատարվել սխալներ: Զգույշ եղիր, աղջիկս, քեզ տրված մարգարեությունների ամսաթվերի հանդեպ: Եթե Ես ասում եմ ամիսներ, դա կարող է լինել մի տարվա ընթացքում ցանկացած ժամանակ: Երբեք մի շփոթիր մարդկային մեկնաբանությունը Իմ կողմից քեզ տրված ժամանակի սահմանների մեկնաբանությունների հետ: Ես քեզ չեմ տվել իրադարձությունների հատուկ ամսաթվեր, այլ միայն առաջնորդություններ: Այս մարգարեությունները տեղի կունենան, բայց միայն Իմ Հավիտենական Հոր ձեռքով: Ավելի շատ վստահիր Ինձ: Քո և Ինձ հետևողների աղոթքները կարող են օգնել հետաձգելու, կամ որոշ դեպքերում, խուսափելու աղետներից: Միշտ հիշիր դա:

Աղոթիր, աղոթիր, աղոթիր: Քանի որ երբ դա անում ես սրտանց, քո աղոթքները լսվում են: Աղոթիր հատկապես աշխարհի այն առաջնորդների համար, որոնց կյանքը շուտով կավարտվի ատելությամբ լի չար գործողություններից: Նրանք և այն կարծրացած սրտերը, ովքեր մեղավոր են անմարդկայնության ոճրի մեջ, ամենաշատը կարիք ունեն աղոթքների: Միշտ աղոթիր մեղավորների համար, որովհետև Ես սիրում եմ Իմ բոլոր զավակներին, և Ինձ պետք են ձեր աղոթքները՝ նրանց Դժոխքի կրակներից փրկելու համար:

Ձեր միշտ գթառատ

Հիսուս Քրիստոս

# Մարտը, որով Սատանան փորձում է վարկաբեկել այս պատգամները, ուժգնանում է

Շաբաթ 2 հուլիսի, 2011թ, ժ 10.00

Իմ սիրելի աղջիկ, այս շրջանը դժվար է լինելու քեզ համար, մինչ պատգամները ներթփնցում են աշխարհ: Ավելի շատ մարդիկ կհարձակվեն այս պատգամների վրա, և երբ դա անեն, անտեսիր նրանց:

Իմ Սուրբ Խոսքը տարածվում է, ինչպես Ես ասել եմ: Հիմա Ես ցանկանում եմ ավելի հեռուն գնալ հայտարարելով Իմ պատգամների հիմնական կետերը: Դու արդեն գիտես, թե դա ինչպես անես: Ուստի սկսիր այսօր: Ես քեզնից խնդրում եմ մարտահրավեր նետել, սակայն քեզ աջակցություն կտրվի դա անելու համար:

Միևնույն ժամանակ, քեզ պետք կլինի, որ ուրիշներն աղոթեն քեզ համար, քանի որ մարտը, որը Սատանան բարձրացնում է՝ վարկաբեկելու համար այս պատգամները, ուժեղանում է: Դու պետք է աղոթես պաշտպանության համար այն վնասից, որը նա կհասցնի քեզ ուրիշների միջոցով: Ընդունիր որ փորձությունների այս շարքը էական է քեզ խոնարհության մեջ պահելու համար: Իմացիր, որ դու Իմ ձայնն ես՝ ուղղված աշխարհին: Տարածիր Իմ ձայնքը, և որքան կարող ես արագորեն:

Ես սիրում եմ քեզ, աղջիկս: Ամբողջությամբ Ինձ ապավինիր, և Ես քեզ անց կկացնեմ սրա միջով:

Ձեր սիրող Փրկիչ

Հիսուս Քրիստոս

# Աթեիստներն ու գիտնականները կասեն, թե Նախագգուշացումը իյուզլիա (պատրանք) էր

Կիրակի 3 հուլիսի 2011թ, ժ 18.30

Իմ սիրելի աղջիկ, դու պետք է առաջ շարժվես: Նայիր ուղիղ քո առջև և հետևիր Իմ ցուցումներին: Մի շրջվիր կողքի, ուր քեզ վրա Չարն է հարձակվում քո կյանքի յուրաքանչյուր պահի: Ուշադրությունդ կենտրոնացրու միայն Ինձ վրա:



Դու պետք է սովորես հասկանալ, որ Իմ ընկերակցությամբ անցկացրած ժամանակը, հատկապես պաշտամունքի ժամանակը, էական է, եթե ցանկանում ես առավելագույնս կատարել այս առաջադրանքը: Աղոթքի մեջ անցկացված ժամանակի տևողությունը նույնպես կարևոր է, քանի որ որքան երկար ժամանակ անցկացնես Ինձ հետ հաղորդակցվելու մեջ, այնքան ավելի շատ շնորհներ կստանաս: Այդ անել չկարողանալը կնշանակի, որ դու բաց ես պահում քեզ Խաբեբայի հարձակումների հանդեպ:

Իմ խոսքը, աղջիկս, անտեսվում է շատերի կողմից, ովքեր չեն ցանկանում լսել: Շատ պատճառներ կան դրա համար: Իմ գավակներից շատերն այսօր փակել են իրենց աչքերը հոգևոր գոյության ճշմարտության հանդեպ: **Նրանք գրկում են աշխարհը և այն ամենն, ինչ աշխարհն է առաջարկում որպես կյանքի հացին փոխարինող:** Իսկ շատերն էլ հոգնել են կեղծ մարգարեներից, քանի որ սա այն դարն է, երբ կեղծ մարգարեները կմտնեն ամենուր: Սա է այն խառնաշփոթը, որ Սատանան ցանկանում է ստեղծել, որպեսզի Իմ իսկական պատգամատարները չնկատվեն: Իմ ընտրյալ տեսանողներից պահանջվող խոնարհության պատճառով նրանք չեն կարող բարձրացնել իրենց աշխարհի աչքում, քանի որ դա նրանց էության մեջ չէ: **Կեղծ տեսանողներն իրենց կիրեն ուշադրության կենտրոն:** Նրանց ուշադրությունը կենտրոնացված կլինի հենց իրենց վրա: Նրանց պատգամները կարող են իրական թվալ և գեղեցիկ լեզվով՝ լցված Սուրբ Գրքից վերցված հատվածներով, երբ դրանք հարմար են, սակայն նրանց պատգամներում երկու հիմնական տեսանկյուն կլինեն, որոնք կբացահայտեն նրանց տարածած ստերը: Առաջինն այն է, որ նրանք կկենտրոնանան պատգամների վրա և կուրախանան իրենց ստացած ուշադրությամբ: Վերջապես, պատգամներն իրենք կլինեն շփոթեցուցիչ, դժվար կարդալու համար և հոգու վրա հարատև ազդեցություն չեն թողնի: Տխուր է, աղջիկս, բայց **Եկեղեցին հակված է ուշադրություն չդարձնել ճշմարիտ տեսանողների վրա**, որովհետև պատասխանատվություն պետք է ցուցաբերի այս հարցերի վերաբերյալ:

Դրա համար էլ Իմ Եկեղեցու համար շատ ավելի հեշտ է աջակցել այն պատգամներին, որոնք ներառում են հատվածներ Սուրբ Աստվածաշնչից, դրանք իսկական հռչակելու համար: Նրանց համար այնքան էլ հեշտ չէ ընդունել Իմ ուսուցումների պարզությունը, հատկապես երբ այսօր ճշմարտության մեծ մասը թաքնված հանդուրժողականության դիմակի տակ: **Հեշտությամբ չի ընդունվում նաև Վերջին Ժամանակների մասին հիշեցումը**, երբ վախից և անգիտությունից Իմ սրբազան հետևորդները մերժում են վերցնել Իմ գավաթը և պատասխանատվություն ցուցաբերել:

Սա աշխարհի պատմության մեջ ամենակարևոր ժամանակն է: Վերջին դարի ընթացքում Իմ տեսանողներին տրվել են բոլոր նշանները, սակայն նրանց

արհամարհում են և մի կողմ հրում, և այդ անողներն իրենց գլուխը թաղում են ավազի մեջ: Հենց այս ժամանակ է, որ Իմ սրբազան ծառաները պետք է քարոզեն **երկիր Իմ վերադարձի կարևորության մասին**: Նրանք պետք է նախապատրաստեն հոգիների՝ հիշեցնելով նրանց՝ իրենք իրենց ազատագրել չկարողանալու հետևանքները, քանի դեռ երկրի վրա են, քանի որ նրանք (հոգիները) չեն կարող ներողամտություն խնդրել մահից հետո: Ես կանչում եմ Իմ սրբազան ծառաներին հիմա: Ինչու՞ դուք սա չեք շեշտում ձեր հոտին: Ինչու՞ ակտիվորեն չեք քննարկում Իմ Եկեղեցու հետահարումը երկնային մեծ պատժի ընթացքում: Մի՞թե չգիտեք, որ **Իմ զավակներից շատերը կկորցնեն իրենց հոգին Հակաքրիստոսին, ով արդեն այստեղ է՝ այս երկրի վրա, պատրաստ ցատկելու**, մինչ սպասում է թևերի վրա: Իմ զավակները պետք է հասկանան, որ Նախագգուշացումը, Գթասրտության մեծ գործողություն լինելով հանդերձ, միայն առաջին փուլն է նրա, ինչը Իմ զավակների համար կլինի մի չափազանց դժվարին և մարտահրավեր նետող ժամանակահատված: Քանի որ դրանից հետո ամենակարծրացած մեղավորները և Սատանայի հետևորդները կմերժեն Իմ գոյությունը, դրանից հետո աթեիստները կասեն, թե դա գլոբալ պատրանք էր: Գիտնականները բանական բացատրություն կփնտրեն, բայց ոչ մի բանական բացատրություն չի լինի: Միևնույն ժամանակ Իմ հետևորդները կբաժանվեն երկու մասի: Միլիոնավորներ դարձի կգան, բայց նրանք շփոթության մեջ կլինեն Չարի խմբի՝ Մեկ համաշխարհային կարգի կողմից տարածված ստերի հետևանքով, որոնց վերջնական նպատակը աննշան մարդականց ոչնչացնելն է իրենց սեփական օգուտի համար:

Զավակներս, եթե բավարար քանակությամբ մարդիկ չկարողանան կանգնել ճիշտ ուղու վրա, այդ դեպքում **հնարավոր չի լինի խույս տալ Երկնային պատժի ազդեցությունից**: Քանի որ դա այն է, երբ Հայր Աստված կշարժվի՝ կանգնեցնելու համար մեղավորներին՝ Իր արարչությանը և Իր զավակներին ոչնչացնելուց: Նա (Աստվածկ սանձագերծի չտեսնված ուժգնության երկրաշարժեր, հրաբուխներ՝ ամենաանհավանական վայրերում, և երկիրը կպտտվի ինչպես մի նավ կատաղած ալիքների մեջ ուր խարխախ չկա այն մի տեղում պահելու համար:

Խնդրում եմ զավակներս, թույլ տվեք, որ Նախագգուշացումը փրկի ձեզ բոլորիդ: Ընդունեք, որ այդ հրաշքը կօգնի փրկել միլիոնավորների, ովքեր այլապես կկորչեն: Բայց նրանք, ովքեր չեն ցանկանում փոխել իրենց կյանքը, **նրանք կընտրեն Սատանայի տունը**: Առանց աղոթքի նրանց համար հույս չկա, **քանի որ նրանք գրավի կդնեն երկրի վրա Նոր Դրախտի բանալիները**: Դրա փոխարեն նրանք կայրվեն Դժոխքի կրակներում: Եթե նրանք իմանան, թե ուր է տանում իրենց այդ ճանապարհը, ի՞նչ եք կարծում եք կփոխեն՞ իրեն ուղիները: Զավակներս, խնդրում եմ, օգնեք նրանց, ասելով նրանց

Ճշմարտությունը: Աղոթեք նրանց հոգիները փրկելու համար, եթե նրանք  
չցանկանան լսել: Քանի որ դա այն ամենն է, ինչ կարող եք անել:

Ձեր սիրող Փրկիչ

Արդար Դատավոր և Գթասրտության Թագավոր

Հիսուս Քրիստոս